

Մ. ՀԱՅԿԵՆՑ

ՄԻԼՈՒՆԻ ՌԻԱԼԻՏԻ
ԵՒ ԱՆՌԻՒՆ

Նիւ Ճրգի
2010

ՄԻՆՉԵՒ ԴՐԱԽՏԸ ԵՒ ԱՆԴԻՆ

Library of Congress control number: 2010925826

M. Haigentz

TO PARADISE AND BEYOND

- I. To Paradise and Beyond - Four stories
- II. Book review and short essays

Copyright © 2010 by M. Haigentz.

All rights reserved. No part of this publication may be reproduced, stored in a retrieval system, or transmitted, in any form or by any means, electronic, mechanical, photocopying, recording, or otherwise, without the prior permission of the author.

ISBN: 978-1-931834-34-6

Mayreni Publishing

P.O. Box 5881

Monterey, CA 93944

U.S.A.

Printed in the United States of America

Մ. ՀԱՅԿԵՆՑ

ԱՐԵՎԵԼԻ ԱՐԱՐՍՏԻ
ԵՒ ԱՐԱՐՆԻ

Նիւ Ճրգի
2010



Աշխարհըս մէ փանջարա է, թաղերումէն բեզարիլ իմ.
Մըտիկ տըվօղըն կու խուցվի, դաղերումէն բեզարիլ իմ.
Էրեգ լավ էր կանց վուր էսօր, վաղերումէն բեզարիլ իմ.
Մարթ համաշա մէկ չ'ի ըլի, խաղերումէն բեզարիլ իմ:

ՍԱՅԱԹ ՆՈՎԱ
(Յարութիւն Սայաթեան, 1712-1795)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ՄԱՍ

ԼՈԳՈՒՄԸ	10
ՓԱՄՓՔԻՆ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻՆ	20
ՄԱՐԻԼԻՆ ՄԱԼՐՈՆ ՍԹԱՆԼԻԻ ԾՈՑԻՆ ՄԷՋ	36
ԽԱԻԱՔԱՐՏԷ ՄԱՐԴԸ ԴՐԱԽՏԷՆ ԴՈՒՐՍ	46

Բ. ՄԱՍ

ՆԱՄԱԿԱՆԻ ԿԱՄ ԴՈՒԲԱՑԷՔ ԿՈՐՈՒՍԵԱԼ ԱՇԽԱՐՀԻ	64
ԱԾՈՒՆ 21-ՐԴ ԴԱՐՈՒՆ	94



Ա. ՄԱՍ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԲԻՐՈՒԹՅՈՒՆ

Դուին ուզեցիր որ ես վերստին էրիկ մարդ ըլլամ։
Դուին ուրիշ ես, Մեդի... շնորհակալ եմ... շա՛տ շնորհակալ
եմ... պէտք է ըսեմ՝ երախտապարտ եմ, Մեդի։ Ընտանիքիս
անդամներէն, ազգակիցներէս ոչ ոք ըսաւ՝ Մանուի, եկուր,
առ ինքնաշարժս, քշէ։ Տասնըհինգ տարիէ ի վեր ինքնաշարժ
չեմ վարած... բոլորը գիտեն։ Անցեալ շաբաթ կինս կտոր մը
կարկանդակով եւ եօթնուկէս մոմիկներով դիմաւորեց
կեանքիս եօթանասունվեցերորդ տարին։ Դուին, այսօր, փա-
կեցիր հաշմանդամութեանս տասնըհինգամեակը։

Ի՛նչ անիծեալ օր էր... տասնըհինգ տարի եղաւ։ Այդ օր
տուն դարձիս ինքնաշարժս «յարքունիս» գրաւուեցաւ վերջ-
նականապէս։ Այդ օրուրնէ քաջառողջ հաշմանդամ մըն եմ։
Տեսողութիւնս զօրաւոր է, մարմնական թերութիւն չունիմ,
զգացումներս պատրաստ են բորբոքելու... Բայց չեմ կրնար,
չե՛մ կրնար փառք տալ Աստուծոյ։ Կը ներես, յուզուած եմ...
Տասնըհինգ տարի է Էլէնին թոյլ չի տար որ ինքնաշարժ
վարեմ. ինք է որ զիս կը տանի ու՛ր որ ուզեմ, ե՛րբ որ ուզեմ։
Ա՛լ յոգնած եմ ըսելէ՝ **գայմաք**, ձգէ, մէյ մը քշեմ, դուն ալ մեղք
ես...։ **Տէմպերազի**,* կ'ըսէ, չեմ ուզեր որ էշ նահատակ ըլլաս։
Յիշէ արկածը...։

Արկա՞ծը։ Էնկլոուտը գիտես. Փալըսէյտզ առեւտրական
փողոցը շատ բանուկ է կէսօրուան մօտ։ Էլէնին նոր դուրս
ելած էր վարսայարդարին արուեստանոցէն եւ տեղա-
ւորուած ինքնաշարժին մէջ։ Բռնած էի Յուշարձանին
ուղղութիւնը տուն երթալու համար երբ յանկարծ քովէս

* Հոգ չէ (այս եւ ծանօթագրուած միւս արտայայտութիւնները յունարէն են)

լսեցի «Օ՛, մայ կատ, Օ՛, մայ կատ»: Բնագործն դեկը աջ դարձուցի. յառաջամասի աջ անիւր թեթել մը քսուեցաւ մայթին: Էլէնին ձախ կողմէն նկատեր էր աղբահաւաք բեռնակառքը եւ ուզէր էր զիս զգուշացնել:

Աղէտ մը կրնար պատահիլ, բայց չեղաւ բարեբախտաբար: Եթէ ըլլար, պատճառը ինք պիտի ըլլար, իր «մայ կատ»ը: Բայց որո՛ւն կը խօսիս. պատը ականջ ունի, Էլէնին՝ ոչ: Չեմ կրնար ըսել որ երիտասարդութեան ալ այդպէս էր. գուցէ գեղեցկութիւնը մղած էր զիս այդ գիծը անտեսելու: Թերեւս ապրուստ վաստկելու առօրեայ վագրին եւ զաւակ մեծցնելու հեւքին մէջ գիշերուան կարճ պահերը ուզած էինք համով բաներու վերապահել: Եւ սակայն տասնըհինգ տարի տոկլալ անբացատրելի է. Քրիստոս անգամ երեք ժամէն աւելի չկրցաւ դիմանալ խաչին... մեղա՛յ Աստուծոյ:

Երկու ժամէ աւելի քովս նստած էիր ինքնաշարժին մէջ: Էնկլոուտէն հոս, ծովեզերեայ այս ճաշարանը, ճեպուղիին երկայնքին վարդական որելէ թերութիւն նկատեցի՞ր: Եթէ նկատեցիր, ըսէ՛, որպէսզի հաշտուիմ ճակատագրիս, սպաննեմ զգացումներս, չորցնեմ երազներս: Ընդունիմ խոտ դառնալ եւ այլեւս հող դառնալը հոգ չըլլայ...

– Վասիլի, տիյօ կարիտէզ, միյա թարամօսալատա քէ տիյօ ուզա, նախարիս:*

– Ամէսոս,** Մանոլի:

Վասիլին շատ լաւ տղայ է, ինծի տարեկից: Միասին մեծ-ցանք Սելանիկի մէջ: Ինք ճաշարանատէր եղաւ, ես՝ ճարտարագէտ: Ինք ամուսնական անհամութենէն համով կերակուր մը պատրաստեց քսան տարի առաջ Աթէնքէն անուշիկ Զազան բերելով. պատանի մանչ մը ունին: Ես... Էլէնիին

* Երկու [պնակ] խեցգետին, մէկ [պնակ] ձկնկիթով թացան եւ երկու [բաժակ] օղի, խնդրեմ

** Անմիջապէս

մեքենային մեջ ճգմուեցայ: Այս մտածումը ճգմուելէն աւելի գէշ է, հաւատա՛ Մեղի:

Անցեալ շաբաթ իր հոգածութեան վերջին արտայայտութիւնը վայելեցի... Հարսս եկած էր Մայամիէն, երկու թոռնուհիներովս: Անոր տհաճութիւնը կնոջմէս հինէն կուգայ, բայց յարգանքին մեջ չի թերանար եւ կը սիրէ զիս: Կը զգամ: Կէսօրին մօտակայ պիւֆէ-ճաշարանը գացինք, որովհետեւ ժամը հինգի մօտ տղաս իրաւաբաններու խորհրդաժողովէն ելլելուն տուն պիտի գար եւ զիրենք առնելով օդակայան մեկնէր: Դուն մի յոգնիր, ըսաւ Էլէնին, եւ այ-ույ ընելէն ոտքի ելաւ ու կաղալէն գնաց ինծի համար պնակ մը լեցնելու: Վերադարձաւ դարձեալ կաղալէն. գէշ յօդացաւէ կը տառապի: Պնակը լեցուն էր ամէն ինչով զոր չեմ սիրեր: Սպանախը առողջարար էր, որովհետեւ շատ **անթիօքսիտընդ** կը պարունակէ, բակլան պէտք է ուտէի, որովհետեւ անլի էր...: Եւ յանկարծ խաշուած եւ ճգմուած գետնախնձորով դգալը ձեռքին մեջ՝ բերանդ բաց, **փետիմու**,* ըսաւ, կակուղ է, ակռաներդ չեն վնասուիր:

Աչքերս սեւցան: Հարսիս եւ թոռնուհիներուս առջեւ չէի կրնար խայտառակութեան տեսարան մը պարզել: Արդէն բնաւորութեամբ ալ այդ տեսակ մէկը չեմ: Թեւր բռնեցի եւ կամաց մը տեղաւորեցի պնակին քով: Էլէնի, ըսի, փորձէ չորս-հինգ տարեկան թոռնուհիներդ դգալով կերակրել. թերեւս անոնք ընդունին... **Նօ, կրէնփա**, պոռացին երկուքը միաբերան: Այս բաները առտու-իրիկուն զիս կը հալածեն, բայց երբ պատմեմ դարձեալ կը յուզուիմ: Մէկական ուզօ եւս խմենք:

– Վասիլի՛...

– **Մալիստա:****

* Մանչս

** Այո

Հարցումդ կը կարդամ դեմքիդ վրայ, Սեդի: Ըսեմ: Ճարտարագիտութեան ուսանող էի Նիւ Եորք երբ հանդիպեցայ Էլէնիին: Իրիկունները կ'աշխատէի նշանաւոր Տաիտին **տելիքաթէսընը**: Էլէնին կը բնակէր երեք քոռոջ հետ անկէ ոչ հեռու 9-րդ պողոտային եւ 44-րդ փողոցին անկիւնը: Շատ յոյներ կ'ապրէին այդ շրջանին մէջ: Իրապէս գեղեցիկ աղջիկ մըն էր, **սթաթիւէսք** ինչպէս կ'ըսէն: Խոստովանիմ նաեւ որ նախանձ սիրահար մըն էի: Փողոցին մէջ տղաքը ետ կը դառնային անոր սրունքները չափելու, մինչ դիմացը ելլող **փալիքաթէսները*** իրենց պէխը կ'ոլորէին դէպի վեր:

Կրնաս երեւակայել որ յիսուն-վաթսուն տարի առաջ ամերիկաբնակ յոյներուն համար որքան յարգի էր երկրէն եկած եւ հոս վկայեալ երիտասարդ ճարտարագէտ մը: Չեմ ուզեր չափազանցել, Բայց ամէն կիրակի ճաշի հրաւեր ունէի աղջիկ զաւկի տէր ունետոր ընտանիքներէ: Էլէնի'ն էր որ գրաւած էր սիրտս:

Երբ լուր տարածուեցաւ որ որոշած էի ամուսնանալ, կրետացի տարեցները դրուատեցին ընտանիքը: 1941-ի գարնան հայրը տասը գերմանացի անկարգելաւոր սպաննած էր, մայրը մեծ գուրգուրանքով, առանձինն եւ պատուով մեծցուցած էր երկու դուստրերը: Դիւրին չէր, Սեդի, նացի գրաւման ենթարկուած երկրի մը մէջ: Բայց սելանիկցի տարեցներ ձայնակցելով հանդերձ դրուատիքին, զգացնել տուին որ Կրետէ կղզին յամառութեան եւ ամենագիտութեան վայրի ձիերուն ոստանն է: Երբ ցատկած ես թամբին վրայ, կը մտածե՞ս ձիուդ տեսակին մասին...

Ամուսնացանք, ունեցանք զաւակ մը, որ յարգուած փաստաբան մըն է: Բայց եթէ ես նախանձ սիրահար էի, Էլէնին դարձաւ նախանձ կին մը յատկապէս տղուս ամուսնութենէն ետք: Գրեթէ նոյն ատեն յողացաւ սաստկացաւ:– Ո՞վ է հեռա-

* Կորովաթիք երիտասարդ

ձայնողը, ինչո՞ւ կը հեռաձայնէ, մարգարանին մէջ որո՞ւ հետ կը խօսիմ, ի՞նչ կը խօսիմ: Ինչո՞ւ հարսս կը խուսափի հետը խօսելէ, բայց ժամանակ ունի ինծի համար:

Անցեալ շաբաթ գետնին տակ անցայ: Գիտեմ որ ժամը հինգի մօտ Էլէնին մարգարանին դրան առջեւ ինծի կը սպասէ: Տոպրակը ձեռքս դուրսն էի երբ դիմացս ելաւ գիտցիր ո՛վ... **լոգո՛ւմը:** Նախորդ օրը նկատեր էր որ կրծքամուկի աթոռին վրայ անշարժ նստած էի մտածկոտ: Գիտես, կը պատահի, յանկարծ կ'առանձնանաս, կ'անջատուիս վայրէդ եւ ըրածէդ...: Մօտեցաւ հարցման նշան մը անուշիկ դէմքին: Ըսի՝ քան մը չկայ, **լոգու՛մ...** պահ մը տուն գացած էի, երկրորդ յարկաբաժինս տրամադրելի է, պատրաստ եմ շնորհքով կնոջ մը գեղեցիկ սակով վարձելու: Հասցէս ուզեց: Տուի: Նուրբ մատները մազերուս մէջ պտըտցուց... Ինչէ՛ր գգացի, ինչէ՛ր մտածեցի... Ինչո՞ւ կը ժպտիս, չե՞ս հաւատար:

Հիմա, երեւակայէ... դրան առջեւ դեմ դիմաց կնոջս ներկայութեան... երեւակայէ՛... մտքէս չէր անցներ... լեզուս բռնուեցաւ:

– **Եասսու,*** Մանուկիմու, ըսաւ աշխարհի մոռցնել տուող ժպիտովը:

Ես ալ անշուշտ ժպտացի: **Չաուշը** չմարսեց:

– Ինծի **եասսու** չկա՞յ...

Շատ ազնիւ աղջիկ է, Սեդի: Անմիջապէս ներողութիւն խնդրեց, ըսաւ որ ուրախ էր ծանօթանալուն, Էլէնիին այտէրէն համբուրեց եւ **ա՛յլ սի եու** ըսելով մարգարան մտաւ:

Կը կարծե՞ս որ Էլէնին հանդարտեցաւ: Ինքնաշարժին մէջ չլռեց:– Մանուկիմու եղե՛ր... չե՞ս ամչնար, խոֆա՛ծ: Ո՞վ գիտէ ինչէ՛ր փչած ես: Երբուրնէ՞ ի՛ր Մանուկին կ'ըլլաս կոր... Կայծը դպած էր վառօդին: Տունը քանի մը ծանր բառ փոխանակեցինք: Անգիտութիւնս եւ տգիտութիւնս անձրելի

* Բարեւ

պէս գլխուս տեղացուց: Ինչե՛ր հանեց յիշողութեան յիսնամեայ չպարպուած տոպրակէն:– Խօսքը մտիկ չէի ըրած եւ մեր առաջին ինքնաշարժը գնած էի խաբեբայ վաճառորդէ մը... Ինչո՞ւ ատիկա հարց մը պիտի ըլլար երբ զայն գործածած էինք 15 տարի, մի հարցնէր: Խոտ կտրել չեմ գիտեր հակառակ անոր որ 30 տարիէ ի վեր ես յարդարած եմ մեր պարտեզը...: Ամբողջ գիշերը չարչարուեցայ... միայն արշալոյսին քուն մտայ երբ մետաքսեայ, կիսաբաց շրջագգեստով **լոգումը** երեւցաւ բոպիկ ոտքերով...

Սեղի, ես մինչեւ այսօր հաւատարիմ գտնուած եմ կնոջս. մինչեւ երեք տարի առաջ ուրիշ կնոջ չեմ նայած եւ նայելու փափաք չեմ ունեցած: Գոհ էի ունեցածովս, հոգ չէ թէ ան տասնըհինգ տարի գրեթէ ամէն օր պատճառ տուած է ինծի Կրետէի արեւը անիծելու: Դուք ալ Հայաստանի մէջ կարծեմ քաղաք մը ունիք, ուր այծը կրնայ թռչիլ... Ի՞նչ կրնանք ընել: Բայց ես... Սուրճ մը խմե՞նք... գիտեմ, շաքարը միջակ կը սիրես... մի մերժեր: Չեմ վերջացած...

– Վասիլի՛, **տիյօ մեթրիոս, սեփաբաքալօ:***

– **Ամեսոս**, Մանուի:

Թէեւ յիսուն տարի մէկ բարձի վրայ քնացած ենք, բայց սա վերջին երեք տարիները ի՞նչպէս ըսեմ... ես կա՛մ... կը հասկնա՞ս, ինք... չկա՛յ...: Միակ զբօսանքս, միակ հաճոյքս մարգարանն է: Գրեթէ ամէն օր հոն եմ: Հայ, հրեայ, քորէացի, սեւամորթ, հիսփանիք բարեկամներս աշխարհ կը բանան առջեւս: Տուն վերադարձիս ոչ միայն դուռը կը փակուի, այլեւ սիրտս: Ի՞նչ պիտի ընէի եթէ մարգարանը չըլլար. ի՞նչ պիտի ընեմ եթէ Էլէնին օր մը մերժէ զիս տանիլ-բերել: Գիտեմ, ե՛ս պէտք է անցնիմ ինքնաշարժին դէկին առջեւ. կասկած չունիմ, կասկած չի կրնար ըլլալ: Դո՛ւն ալ գիտցիր: Հետեւանքը ի՛նչ պիտի ըլլայ, չեմ կրնար գուշակել: Բայց հոգս չէ:

* Երկու շաքարը միջակ (սուրճ), եթէ կարելի է

Տասնըփինգ տարի է... կը բաւէ՛: Այսօր ես հաստատեցի որ ողջ եմ. դուն ինծի այդ պատեհութիւնը տուիր: Քննութիւնս յաջողութեամբ անցուցի: **Չոք էլի:**

Մի խնդար...: Երթա՞նք, Սեդի: Լա՛ւ: Թոյլ տուր որ վերադարձն ալ քշեմ: Շնորհակալ եմ...: Տունդարձի խճողումին մէջ ինկած ենք, բայց հոգ չէ: Քիչ կը խօսիմ: Առիթ մըն է որ զիս այս վիճակին մէջ ալ չափես եւ դատես որպէսզի միտքդ բոլորովին հանգիստ ըլլայ: Գիտեմ, գիտեմ, խոհեմութիւն չէ ինքնաշարժը ուրիշին վստահիլը... բայց ես նոր մարդ մըն եմ այսօր:

Անշուշտ նկատեցիր որ քանի մը թրքերէն բառ կը գրորեմ. մեծ մօրմէս սորված եմ: Ատոնք մեծ աղէտէ մը անիծեալ յիշատակ են: Քսանական թուականներուն յոյն-թուրք զանգուածային «փոխանակումին» մասին լսա՞ծ ես... Լօզանի անունը երբ լսեմ մարմինս փուշ-փուշ կ'ըլլայ: Այդ սատկած քաղաքին մէջ **Ճէնապէթ** Եւրոպան ուզեց որ դուք եւ մենք արմատախիլ ըլլանք... Ինչո՞ւ... Կապուտաչուի **սեօնմէ** Մուստաֆային **քէֆը** բերելու համար: Ըլլալի՞ք բան է: Ամբողջ երկիր մը, հայոց հողը, նուէր կը տրուի՞, մէկ միլիոն յոյն իրենց բնօրրան Փոքր Ասիայէն դուրս կը նետուի՞ն... խաղաղութեան աւելով...: Խեղճ մեծ մայրս՝ Տեսփինա **խանումը** եւ տասը տարու մայրս, լոյսերու մէջ հանգչին, Սելանիկ ինկան:

Դուն սահուն թրքերէն կը խօսիս. հաւանաբար մեծ մայրդ հայերէն չէր գիտեր: Կը հիանամ հայերուդ: **Ճամիին** քով եւ **Ճիհասին** մէջ ինչպէ՞ս շնչեց ձեր լեզուն, ինչպէ՞ս ապրեցաք ձեր լեզուով... ձեր շա՛տ դժուար լեզուով... Չէ՛, դուք ուրիշ էք, Սեդի: Ութ լեզու կը խօսիմ, հինգը կը կարդամ եւ կը գրեմ— ընդհանրապէս յոյները ընդունակ չեն օտար լեզու սորվելու... Իմ պարագաս տարբեր է—բայց չկրցայ Սելանիկի հայ տղոցմէ երկու բառ հայերէն սորվիլ:

Չմոռցած ըսեմ որ քիչ մը խնդաս: Աթէնքէն ամէն օր

յունարէն յայտագիր մը կը ձայնասփռուի: Ունկնդիրները կրնան հեռաձայնել, կարծիք յայտնել, հարցում ուղղել: Երկու շաբաթ առաջ մտիկ կ'ընէի եւ յանկարծ ունկնդիր մը ըսաւ թէ ինք յունահայ էր եւ սկսաւ յունարէն քննադատել նախագահ Պուշին քաղաքականութիւնը: Ականջներս լարեցի: Յայտնի էր որ **մէլիսանէի** դիւանագէտներէն էր: Մարդը ափեղ-ցփեղ բաներ ըսաւ եւ եզրակացուց.

– Պուշ... ապո՛ւշ, ա՛պո՛ւշ... ի՛նչ **տեմոքրասի** Միջին Արեւելքի մէջ...: Եւ շարունակեց.– Գիտե՞ք ինչ կը նշանակէ հայերէն «ապուշ» բառը—**Տանկալաքի՛** :

Քեզ յիշեցի եւ քահ-քահ մը փրցուցի. դեռ կը խնդամ: **Լոգումին** ալ պատմեցի՛. ա՛ն ալ խնդաց: Գիտես, լեհ է ծագումով եւ առաջին **պոյֆրէնտին** հետ քանի մը ամիս Աթէնք ապրեր է: Երբ կը մօտենայ ինծի, երբեմն գորովով գլուխս կ'առնէ երկու տաքուկ եւ խոնաւ ափերուն մէջ եւ համբոյր մը կը դրոշմէ այտիս: Կը մեղքնա՛մ... որբ մեծցած է խեղճը: Նորէ՛ն կը ժպտիս, նորէ՛ն չես հաւատար...

Հակառակ խճողումին երկար ճամբայ կտրեցինք: Կ'ուզեմ որ անկեղծ ըլլաս հետս, Սեդի... կը կարծե՛ս որ **լոգումը** իմ մէջս հանգուցեալ հայրը կը տեսնէ: Երկու տարի առաջ երիտասարդ ամուսինը կորսնցուցեր է... շատ ցաւալի կորուստ... կասկած չունիմ որ այդքան գեղեցկութեամբ քառասուն տարեկան կին մը երկար ատեն այրի չի մնար...: Կ'ուզեմ մտերմանալ հետը... ի՞նչ կը խորհիս: Առաջին առթիւ ճաշի պիտի հրաւիրեմ զինք... ինքնաշարժի մը պէտք պիտի ունենամ... եւ այսօրուան նման պատրուակի մը՝ տունէն քանի մը ժամուան բացակայութիւնս արդարացնելու համար:

... Երկու վայրկեանէն տուն կը հասնինք: Սեդի, պիտի օգնե՞ս ինծի: Վստահ եմ որ կ'օգնես... վիճակս կը հասկնաս... դուն ուրիշ ես...: Յաջորդ փողոցէն աջ դարձիր...: Հիմա կանգ առ որպէսզի դո՛ւն անցնիս դեկին առջեւ... Եղաւ: Տասներորդ տունն է ձախին: Հսկայ եղեւնիիս առջեւ երկար մագերով

կինը տեսա՞ր... նայե... **լոգո՞ւմն է: Լոգո՞ւմն է.** Ճիշդ եմ, չէ՞:
Ծառին քով ի՞նչ անուշիկ է, Աստուած իմ, զարդի պես...
վարդի պես...: Բայց հոս ի՞նչ գործ ունի: Դանդաղ քշե...: Քովի
երիտասարդը ո՞վ է... Էլենին կիսով ծածկուած է. երկուքը
հետը կը խօսին...

Միտքս պղտորեցաւ: Ի՞նչ կ'ըսես, Սեդի, արդեօք յարկա-
բաժինը վարձելո՞ւ եկած է **պօյֆրէնտին** հետ: Ուրիշ պատ-
ճառ չկայ... պտոյտի չեն ելած, **հալ-վախտ** հարցնելու չեն
եկած: Ի՞նչ պիտի ընեն եթէ Էլենին ուզէ վարձու տալ:
Խենթենամ պիտի... Ծրագիրներս... Վրաս դող եկաւ: Խնդրեմ,
աջիդ կանգ առ քիչ մը...: Վարեն անկողնին շարժումնէ՞րը
պիտի հաշուեն... **լոգումը** ուրիշի՞ն հետ... տանս մէ՞ջ... ի՞մ
տանս... անկարելի է: Չեմ ձգեր... Գիծը քաշեցի: Երթանք...
ինքնաշարժը մօտեցուր իրենց: Մանուկ Կումպարաքին
թերեւս **զաւալը** է... ո՛չ թերեւս... է՛, է՛... տասնըհինգ տարի...:
Տանկալաքի՞... երբե՛ք:

Յունիս 2008

Ֆորթ Լի, ՆՃ

ՓԱՄՓՔԻՆ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻՆ

Ա

Շաբաթ օր, կէսօրուան մօտ, Մօրէյնը եկաւ շնորհա-
կալութիւն յայտնելու եւ վերադարձնելու իր յարկաբաժնին
գոյգ բանալիները: Իրականութեան մէջ ե՛ս պէտք է շնորհա-
կալութիւն յայտնէի իրեն, որովհետեւ արտակարգ կերպով
ազնիւ գտնուած էր հաւանական նոր վարձակալներուն
նկատմամբ, զիրենք ընդունելով ջերմապէս, անոնց ցոյց
տալով բնակարանին յարմարութիւնները եւ գովասանք
շոռայլելով տանտիրոջ, այսինքն՝ ի՛մ հասցէին:

Իմ եւ Մօրէյնին յարաբերութիւնը սիրալիք եղած էր, թէեւ
սկիզբը հարցի մը առնչութեամբ յուսախաբ ըրած էր զիս,
աւելի ճիշդ խաբած էր: Հետագային ամէն ճիգ թափեց
յանցանքը մոռցնել տալու: Իր պարտականութիւնը չէր, բայց,
գոր օրինակ, անցեալ Փետրուարին երբ կէս գիշերէն մինչեւ
արշալոյս տասը մատնաչափ ձիւն տեղացած էր, ինք գլխա-
բաց դուրս գալով, առանց սպասելու մեքսիկացի այցելու
գործաւորին, բահով ձիւնը մաքրած էր կարելի դարձնելով որ
ես բժիշկիս հետ ժամադրութիւնս յարգէի:

Գիտէի որ Մօրէյն պիտի մեկնէր այսօր, վարձակա-
լութեան պայմանաժամէն երկու շաբաթ առաջ, որովհետեւ
ընդառաջելով իր խնդրանքին իրեն տուած էի ճշդապահ
վարձակալի վկայագիր մը, գոր փոխատու դրամատունը
պահանջած էր իրմէ: Մօրէյն Թրէնթընի կողմը գնած էր հին
տուն մը, որպէսզի վերջապէս տանտէր դառնար եւ, ինչպէս
ըսած էր, միանգամ ընդմիշտ ազատէր վարձակալութեան
աքցանէն: Գնման վերջին գործողութիւնը, կալուածաթուղ-
թին յանձնումը, պիտի կատարուէր յաջորդ առաւօտ: Ես
ոտքի ելայ, մինչեւ դուռը ընկերացայ իրեն եւ այտերէն

համբուրելով դարձեալ քաջառողջութիւն, երջանկութիւն եւ յաջողութիւն մաղթեցի:

Երրորդ օրն էր որ կարճատեւ եւ խաբեքայ ամառը յիշած էր Նիւ Ճրգին, ժամանակէն շատ առաջ, Մայիսին, եւ արդէն դեղին վերքեր բացած պարտեզներու եւ դաշտերու կանաչ կուրծքին վրայ: Սիրտ չունէի դուրս ելլելու եւ տասը աստիճաններէն վար իջնելով յարկաբաժինը քննելու: Շատ մտահոգուելու պատճառ չունէի, որովհետեւ նոր վարձակալները՝ տէր եւ տիկին Վինի եւ Պէթի Գափութօ իրենց ապրանքներով մուտք պիտի գործէին Յունիս մէկին: Բաւական վստահ էի Մօրէյնին պարտաճանաչութեան: Ժամանակ կար ի հարկին մանր-մունր բաներ կարգի դնելու:

Առտուն, արեւին տկար ճառագայթներուն հետ յարկաբաժինը մտայ: Ամէն ինչ տեղին էր. գորգը՝ գեղեցիկ, վարագոյրները՝ մաքուր, խոհանոցի պիտոյքները՝ փայլուն, լուացարանները՝ բուրաւէտ: Երանի թէ Գափութօններն ալ Մօրէյնին պէս բծախնդիր մարդիկ ըլլան: Ետեւէս դուռը գոցելէ առաջ մլաւիւն մը պատճառ եղաւ որ շուրջս նայիմ գիտնալով հանդերձ որ վայրի, երկար մարմնով սեփ-սեւ կատուն, որ ամէն տարի Փետրուարին կը յայտնուի եւ Սեպտեմբերին կ'անհետանայ, պիտի չհամարձակէր այդքան մօտենալ ինծի: Ան ցերեկը կը տիրէ փողոցին եւ երբեմն կ'երթեւեկէ ցանկապատիս վրայ՝ հոն անցողակի ծանօթութիւններ հաստատելով իր գալուստը գուշակած ինծի բոլորովին անծանօթ կատուններու հետ: Կարծեմ անոնք են նաեւ որ գիշերային ժամերուն թուփերուս տակ զինք կը կանչեն աղերսարկու եւ աղիողորմ ճիչերով:

Շատ կ'ուզէի որ դուրսէն, վայրի կատուն կամ զինք փնտրողը ըլլար միառ՝ ու միառ՝ ու պաղատողը: Ծափ մը եւ ան պոչը ծռած պիտի փախչէր: Ներսէն ըլլալու տակաւ զօրացող հաւանականութիւնը վերածուեցաւ հաստատական եղանակ ներկայ ժամանակի՝ ոտքիս մօտ գոյգ մը կանաչ աչքերով եւ

թաթով մը, որ դրան բացուածքէն գուլպաս կը քերէր:

Փամփքին էր անունը Մօրէյնին գիրուկ, դդումի նմանող կատուին, իր միակ բարեկամին: Փամփքինը կը կրէր Մօրէյնին հանգուցեալ հօր հոգին: Հոգին բաժնուած էր հոգեկիրէն, որ կ'ուզէր հետս գալ եւ կ'աղաչէր որ ե՛ս իր մէջ մտնէի:

Անսպասելի էր Մօրէյնին արարքը: Արդեօք փոխադրութեան իրարանցումին մէջ մոռցա՞ծ էր իր միակ սիրելին, կեանքին իմաստը, կեա՛նքը: Եթէ մոռցած էր, կրնար հեռաձայնել: Գրեթէ քսան ժամ անցած էր մեկնումէն եւ անկարելի էր որ նկատած չըլլար Փամփքինին բացակայութիւնը: Չեմ ուզեր լքում որակել իր արարքը, բայց որոշ էր որ Մօրէյն չէր ուզած կատուն հետը տանիլ: Հաւանական շարժառիթներն ու պատճառները վերլուծելէ առաջ՝ միակ բանը գոր կրցայ անմիջապէս որոշել առ այժմ Փամփքինը իր տան, իրեն ծանօթ շրջապատին մէջ պահել էր:

*

* *

Երկու տարի առաջ բազմաթիւ դիմողներու մէջէն Մօրէյնը ընտրած էի իբրեւ վարձակալ: Երեսունը անձ ներկայանալի կին մըն էր, սպիտակ: Առանձին էր եւ կը լրացնէր երեխայ եւ ընտանի անասուն չունենալու պայմանը: Տասնըվեց տարեկանէն անկախութիւնը հռչակած էր եւ ինքզինք ապրեցուցած յաճախ երկու գործ ստանձնելով: Ծանօթացման օրը լաւ տպաւորութիւն կրած էի իրմէ մինչեւ որ մեկնումի պահուն, ինքնաշարժ չմտած, վերարկուն հանեց: Ձախ թեւին վրայ, վերը, ուսէն վար, կտուած էր սատանային գլուխը: Ժխտական մտածումներս մասամբ մեղմացուց յետագոյց հայելիին վիզէն կախուած վարդարանին խաչեալ Քրիստոսը: Նստարանին կռնակի պատուհանը ունէր ուրիշ անակնկալ մը—քառակուսի դեղին

խաւաքարտի մը վրայ սեւ, մեծ տառերով՝ «Երեխայ Կայ» ազդը:

Ես զիս մեղադրեցի որ անխոհեմաբար տանս դուռը բացած էի հանելուկի մը առջեւ: Վարձակալութեան պայմանագրին բեկանումը դատ-դատաստանի դուռ կրնար բանալ, մանաւանդ որ տակաւին օրինական պատճառ մը չկար: Տրամադրութիւնս կամ նախագագումս բան չէր արժէր օրէնքին առջեւ, նոյնիսկ կրնար զէնք գործածուիլ ինծի դէմ՝ խտրութիւն արգիլող նահանգային եւ դաշնակցային գոյնգոյն օրէնքներուն պայթուցիկ մեկնութիւններով:

Գրեթէ երկու շաբաթ մտահոգութիւնս պատճառ եղաւ որ գիշերները չկարենայի հանգիստ քնանալ: Թէեւ դռներուս փականքները ամուր եմ, ծուխի եւ թունաւոր կազի ազդագանգեր ունիմ, բայց կարելի չէ հրդեհի դէմ կատարեալ պաշտպանութեան վստահութիւն ունենալ: Իսկ սատանան եւ Յիսուսը միացնողը անպայման կը յաջողի որսը շիփ-շիտակ գոհասեղան դրկել: Յիսուսէն վախնալու պատճառ մը չունիմ. ընդհակառակն: Բայց պիտի չուզէի որ ականջին մէջ Յիսուսի ձայնը առնող մէկը դիմացս ելլէր: Քիչ թէ շատ կրնամ ճանչնալ սատանան, բայց ո՛չ անոր գաղտնի ունկնդիրը կամ զինուորը: Յիսուսէն կամ սատանայէն անձնական պատգամ ստացողները անհամար են եւ անոնք անպայման մեկուսացուած չեն ընկերութենէն: Բայց Յիսուսն ու սատանան միացնողը հազուագիւտ պէտք է ըլլայ: Եւ սարսափելի:

Բարեբախտաբար երրորդ շաբաթէն Մօրէյնը տակաւ դադրեցաւ մտահոգիչ ըլլալէ: Ո՞վ ըսաւ որ անոր ականջին խօսողները, եթէ կային, պիտի չհամբերէին քանի մը շաբաթ: Կարելոր չէր. կարելորը ես կերպով մը հանգիստ էի: Սատանային գլուխը պատանի գլուխի մը ըմբոստութիւնը կրնար եղած ըլլալ խակ ուղեղի մը մէջ սնուած մեծ թշնամիի մը դէմ: «Երեխայ Կայ» ազդը վերցուած էր ինքնաշարժէն եւ երեխայ

չէր բերուած, բայց—եւ ա՛յս էր անընդունելին—պարտեզին բացուող պատուհանին ետեւ կ'երթէեկէր գիրուկ, սեւ-ճերմակ կատու մը, որ երբեմն կանգ կ'առնէր դիտելու համար դուրսը ծառին վրայ մագլցող սկիւռը:

Անմիջապէս հետեւեալ ազդը գրեցի եւ փակցուցի Մօրէյնին դրան վրայ. «Յարկաբաժնիդ մէջ առանց արտօնութեան կատուի ներկայութիւնը դեմ է վարձակալութեան պայմանագրին: Կատուն պետք է հեռացուի երեք օրէն, այլապէս վարձակալութիւնդ կ'աւարտի այս ամսուան վերջը»:

Ես կ'ուզէի որ Մօրէյնը մնար, բայց ո՛չ կատուով: Անկախաբար պայմանագրէն, մանկութենէս շնչառութեան դժուարութիւն մը բնագոյաբար չէր քաջալերած որ սիրէի ընտանի կենդանիները կամ խաղայի անոնց հետ: Տան մը մէջ կատու մը ներկայ է ամէն տեղ կճրամանին հոտով, որ ջեռուցման եւ զովացման խողովակներէն կ'այցելէ բոլոր յարկաբաժինները: Չէի ուզեր որ հասուն տարիքիս առողջական բարդութիւններ ունենայի: Հոգս չէր եթէ Մօրէյն զիս մեղադրէր անգործեամբ:

Երկու օր անցած էր գրաւոր ազդարարութենէս եւ տակաւին Մօրէյն չէր պատասխանած: Կա՛մ վաղը կատուէն պիտի ձերբագատէր եւ կամ որոշած էր յարկաբաժինը պարպել որոշեալ ժամանակին, կը մտածէի, երբ գիշերուան 8-ին հեռաձայնեց ըսելու համար որ դրանս ետեւ ձգած էր նամակ մը: Յուզուած կը թուէր, կարծես լացած էր: Խնդրեցի որ վեր գար, ներս հրամմէր: Մերժեց:

«Միբելի պարոն», կ'ըսէր նամակը, «Փամփքինէս չեմ կրնար բաժնուիլ: Ես տառապած կիմ մըն եմ եւ աշխարհի վրայ մարդ չունիմ: Իմ միակ բարեկամս Փամփքինն է, որուն մէջ կ'ապրի հօրս հոգին: 2006-ին քաղցկեղի գոհ երթալէ առաջ, հայրս ցաւերուն մէջ քրոջս եւ ինծի ըսաւ որ մեզի կը կտակէր իր կատուն՝ Փամփքինը եւ պատուիրեց որ մինչեւ վերջ հոգ տանէինք անոր այնպէս ինչպէս իրեն:

Փամփքինը կը մնար քրոջս մօտ, որովհետեւ ես ի վիճակի չէի զինք պահելու: Շաբաթը երկու անգամ կ'երթայի անոր հետ զբաղելու: Բայց քոյրս երբ լսեց որ տիրացած էի նոր յարկաբաժնի մը, պահանջեց որ Փամփքինը հետս տանէի՝ սպանալով զինք փողոց նետել: Քոյրս դարձաւ սատանայ մը, մօրս պէս: 16 տարեկան էի երբ մօրս հետ հաշիւս փակեցի եւ որպէսզի երբեք չփորձուիմ տկարանալ, անոր սատանայի գլուխը կտեցի թելիս վրայ, մեջէն անցընելով նիզակ մը:

Հաւատացէք որ նպատակս երբեք ձեզ խաբել չէր: Փամփքինէս բաժնուիլը անկարելի է: Կեանքս է: Եթէ ստիպէք, ամսուան վերջը կը մեկնիմ, թերեւս հարկադրուելով ապրիլ ինքնաշարժիս մէջ, վտանգելով առողջութիւնս եւ անձս, որովհետեւ, ինչպէս գիտէք, ընտանի կենդանի ունեցողին համար գրեթէ անկարելի է տանելի վարձքով բնակարան ճարելը: Բայց կը խոստանամ առաջին պատեհութեամբ յարկաբաժինս պարպել:

Շատ մօտ եղած եմ հանգուցեալ հօրս: Կը պաշտեմ զինք: Պիտի ուզէի՞ք հէք աղջիկ մը բաժնել իր հօրմէն: Ձեր խիղճը եւ իմ պարանոցս:

Ապաւինելով ձեր խոր հասկացողութեան, յաւէտ երախտապարտ՝ Մօրէյն»:

Բ

Երկու տարի առաջ Մօրէյն տունս մտած էր կատուի պէս, կատուով եւ հանդուրժուած զգացավառ նամակի մը շնորհիւ: Բաւարար պատճառ պէտք է ունեցած ըլլար ինքզինք համոզելու որ այս ծերուկը տէր պիտի կանգնէր կատուին:

Տասը օր է ան մեկնած է առանց կատուին: Չեմ գիտեր ինչո՞ւ, Փամփքինը դադրած էր Մօրէյնին համար նշանա-

կութիւն ունենալէ: Օրը երկու անգամ վար կ'իջնէմ Փամփքինով զբաղելու: Ուտելիքն ու ջուրը անպակաս են ու թարմ. կճրամանը՝ մաքուր: Կարծեմ կը գնահատէ: Բայց ինչո՞ւ այս բոլորովին աւելորդ յոգնութիւնս: Ես կը զարմանամ ըրածիս... նաեւ չեմ զարմանար: Փամփքինը վերջինն է միայն այն ընտանի կենդանիներուն, որոնց ես, անոնց ոչ-բարեկամը, օգնութեան հասած եմ վճռական պահերու: Անշուշտ չեմ կրնար Մօրէյնին հանգուցեալ հօր հոգին կամ հայրը ապրեցնել ընդերկար: Որոշած եմ հանրային պարտեզի մը մէջ Փամփքինը ազատ չարձակել, որովհետեւ ճանկերը քաշուած են: Ճիշդ պիտի ըլլար զայն յանձնել կենդանիներու ապաստանարանը:

Երբ Գափութոնները եկան իրենց կահ-կարասիներուն տեղավայրերը ճշդելու ի պատրաստութիւն մօտալուտ փոխադրութեան, մտածումս յայտնեցի եւ կատակով աւելցուցի, թէ նախապատուութիւնը կուտայի իրենց եթէ ուզէին Փամփքինը որդեգրել՝ պայմանաւ որ պատրաստ ըլլային զայն Մօրէյնին վերադարձնելու եթէ օր մը ան յայտնուէր: Պէթիին ուրախութիւնը անսահման եղաւ:

– Չափէն աւելի շնորհակալ ենք: Այս ի՛նչ անակնկալ նուէր: Արդէն յարկաբաժինը բախտաբեր կը նկատեմ:

– Խնդրեմ, դուք արժանի էք, ըսի:

– Զաւակ չունինք, ազգական չունինք, բարեկամ չունինք, Վինին կը զգուի, որովհետեւ առաջուան պէս չի կրնար կարդալ. աչքերը տկարացան վերջերս: Ութսունի կը մօտենայ, գիտե՞ք: Թող Փամփքինին հետ խաղայ...

– Դուք իրապէ՛ս արժանի էք, կրկնեցի:

Այս բառերը գործածեցի թեթեւութեամբ, որովհետեւ այդ պահուն գիտէի միայն Պէթիին նպատակը, ինքնին բարի: Հետագային երբ Վինիին հետ բարեկամացայ, հաստատումս տօգունեցաւ իրականութեան դիմաց:

Վինին սիկիլիացի խոնարհ ընտանիքի զաւակ էր, որ

ապագայ կերտելու յոյսով պատանի հասակին հեռաւոր ազգականի մը հետ եկած էր Նիւ Եորք, ուր անմիջապէս լծուած էր որմաշինութեան: Աշխատանքի ընթացքին կ'երգէր նափովիթան ժողովրդական երգեր: Միրուած էր բոլոր գործաւորներէն: Թաղին կաթոլիկ եկեղեցւոյ ժողովրդապետը առաջարկած էր զինք անվճար դպրոց ընդունիլ, բայց մերժած էր որովհետեւ ծնողքը Սիկիլիոյ մէջ կարօտ էր իր վաստկած դրամին: Այսուհանդերձ ան շաբաթավերջերը դուրս չէր գար թաղին հանրային գրադարանէն: Թերթ կը կարդար, կը հետեւէր քաղաքական կեանքին:

Որմնադիր ընկերոջ մը հարսանեկան խրախճանքին Վինի երգած պահուն նկատած էր որ պատուոյ օրիորդներէն մէկուն ուշադրութեան առարկան եղած էր: Պէթին հետ այդ օրուան հանդիպումին երջանիկ պահը շուտով կ'որոշէ տեւականացնել ամուսնութեամբ:

– Այս մարդը տեսած պէտք է ըլլայիք այդ օրերուն, ըսաւ Պէթին երբ աշնանային արեւոտ օր մը պարտեզը նստած էինք եւ Վինի գիրկին մէջ կը շոյէր Փամփինը նափովիթան եղանակ մը սուլելով:– Աղջիկները կը խենթենային վրան...

– Հիմա ալ կը խենթենան, ըսաւ Վինի:

– Մտիկ մի ընէք, կատակ կ'ընէ, վրան ինչ մնացած է որ...

Վինիին դէմքը խոժոռեցաւ: Քաղաքավարութեան սիրոյն ան քանի մը վայրկեան ալ մեզի հետ մնաց եւ յետոյ Փամփինը գրկած յարկաբաժինը գնաց:

Չկրցայ հասկնալ, թէ եօթանասուննոց Պէթին դժգոհութի՞ւն կը յայտնէր, թէ կ'ուզէր ներկայութեանս ամուսինը ի կարգ հրաւիրել: Բայց սրտաճմլիկը ամուսինին մեկնումէն ետք իր պատմածն էր: Վինին արկածի հետեւանքով դադրած էր որմնադիր ըլլալէ եւ սափրիչութիւն սորված: Այդ միջոցին Պէթին, որ քանի մը տարի չէր յաջողած զաւակ ունենալ, երեք տարուան մէջ յաջորդաբար երկու տիւեղծ զաւակներու ծնունդ տուած էր: Մերժած էր զանոնք պետական մարմին-

ներու յանձնելու բոլոր խորհուրդները եւ իր հաւատքին համոզումով զանոնք տան մէջ խնամած էր Վինիին սափրիչի վաստակով մինչեւ անոնց վաղաժամ մահը:

Յուզուած էի: Ինչքա՛ն անսովոր դժբախտութիւն կը ծածկէն սովորական տարիները, սովորական օրերը, ժպտացող դէմքերը, երախտապարտ եւ սուլող բերանները: Կը թուի թէ Պէթին նկատած էր վիճակս:

– Ներեցէք որ ձեզ անհանգիստ ըրի, ըսաւ: Վինին շատ լաւ մարդ է, տղու հոգի ունի, ես գիտեմ: Իմ սիրնս է. եթէ ինք չըլլար, կը փլէի: Ձեզ շատ կը հաւնի: Երթամ սիրտը առնեմ:

Երբ ոտքի ելաւ, առաջարկեցի երեկոյեան միասին ընթրել մօտակայ ճաշարանը: Ասկէ առաջ ալ հրաւիրած եմ Գափութները փոխադարձելով Պէթին ազնուութիւնը, որովհետեւ ան չէր մոռնար զիս ամէն անգամ որ սիրած կերակուրս պատրաստէր: Ընտիր խոհարար էր եւ շատ կը գնահատէի իր միթպոլն ու լազանեան:

Վինին ալ ի՛ր ձեռով կը ջանար օգտակար ըլլալ: Աշնան վերջին շաբաթները դուրս կուգար որպէսզի միասին հաւաքենք եւ ծրարենք դէզերը չորցած տերեւներուն, զորս դրկից անտառակին հսկայ ծառերը ամէն տարի կը յանձնեն սուրացող քամիին՝ կարճ ատեն մը պարտէզիս մէջ պահելու, իրենց աչքին տակ, կարօտի սաստիկ նախազգացումով մը, թաղապետական կառքերով վերջնապէս հեռացուելէ առաջ: Արեւոտ օրերը առիթ չէր փախցներ որ Փամփինն ալ վայելէր բնութիւնը իր ներկայութեան: Ինք ալ, ինծի պէս եւ ինձմէ աւելի, սկսած էր ատել ցանկապատին վրայ դեզերող վայրի սեւ կատուն:

Ձմեռը դուրս չելաւ Վինին, բայց առտունները կը լսէի իր նափովիթան մեղեդիները եւ զինք կը տեսնէի յաճախ պատուհանին ետեւը, Փամփինը կուրծքին սեղմած: Գրեթէ միշտ ան աջ ձեռքին մատներով կը քերէր Փամփինին գլուխը եւ զայն զբաղեցնելու համար ձախին ցուցամատով,

զգուշութեամբ բաժնուած անոր մարմնէն, ցոյց կուտար դուրսը ծառին վրայ մագլցող սկիւռները:

Անձրեւոտ օր մը Վինին եւ Պէթին դիմացս ելան երբ կը պատրաստուէին շուկայ երթալու: Ըսի թէ եթէ կը փափաքէին, երկու ժամէն սափրիչէն վերադարձիս զիրենք ինքնաշարժովս կը տանէի:

– Ես մինչեւ հիմա ինչպէ՞ս չեմ մտածած, ըսաւ Վինին եւ ամբողջ գարկաւ ճակտին:– Անկարելի է: Այսուհետեւ սափրիչի երթալ չկայ: Սափրիչդ ե՛ս եմ: Վե՛ր ելի՛ր. ես հիմա պայուսակովս կուգամ:

Հրահանգը հրահանգ էր: Պէթին աչք ըրաւ գլխու հաստատական շարժումով:

Վինին առաջին անգամ էր որ բնակարանս կը մտնէր: **Էսքուզի, էսքուզի մի*** ըսելէն ան քալեց դէպի գլխաւոր պատուհանը, բացաւ վարագոյրը, աչքը չորս կողմ պտըտցուց, նայեցաւ պատերէն կախուած իւղաներկ եւ ջրաներկ նկարներուն եւ ամենէն լուսաւոր անկիւնը ընտրելով հրամայեց որ նստիմ իր ընտրած աթոռին վրայ՝ վերարկուի պահարանիս հայելիապատ դռան դիմաց:

Վիզէս կախուած սպիտակ սաւանը կը ծածկէր ոչ միայն ամբողջ մարմինս, այլեւ աթոռին բոլորտիքը՝ մոռցնել տալով Վինին ոսկեգոյն մկրատին անդադրում շխշխոցին եւ չխշխոցին մէջ ջարդուած մազերս մաքրելու հոգը:

Յիշեցի Վիթորիոն, հին աշխարհի սափրիչս, զոր ընտրած էի ընկերոջս յանձնարարութեամբ, պատանութեանս հետ, ուրիշ բաներու կարգին, մէկ կողմ նետելով նաեւ Իպրահիմը՝ առաջին սափրիչս: Պիտի տեսնես – ըսած էր նորութեանց եւ Վարուժանի սիրահար Վահէ Պելլոյեանը, Մուհամմէտ Ալի հրապարակին վրայ, իր տան, Սապաա Պանաթ կամ Բիւ Տէ Սէօր պատմական փողոցին ուղղու-

* Ներեցէք, ներեցէք ինձի

թիւնը չբռնած – Վիթորիոյին ձեռքին մէջ մկրատը կը պարէ շեղբերուն ծնծղայով:

Վինին մկրատը կը շարժէր անոր պէս, մատները կը խաղցնէր անոր պէս, մագս կը կտրէր անոր պէս: Կը թուի, թէ կար վարսայարդարումի իտալական դասական դպրոց մը: Կը պատրաստուէի այս ուղղութեամբ հետաքրքրութիւնս գոհացնել, բայց ան մկրատին չխշխոցը շարունակելով հանդերձ հարցուց.

– Շատ վճարեցի՞ր մերկ կնոջ համար...

Մերկ կնոջ միակ իւղաներկ նկարս չէր փախած Վինին աչքէն:

– Ո՛չ, ըսի, նուէր է: Նախկին բարեկամուհիս նկարիչ էր, այս նկարը գծեց իր տան մէջ, բնորդը ընկողմանած բազմոցին վրայ: «Կարօտ»ը բաժանումի նուէրը եղաւ ինծի: Շատ կարօտցած եմ...

– Ես ալ Պէթին...

– ...

Վինին գործը աւարտած էր: Ձեռքի մեծկակ հայելին պտըտցուց գլուխիս շուրջ, ետ ու առաջ, աջ եւ ձախ, դրան հայելիէն հպարտութեամբ ցոյց տալով ընկղմած անցեալէս փրկուած գեղորի բեկորը, գոր իր իսկ մատները յարդարած էին արուեստագէտի մը սիրով եւ բծախնդրութեամբ:

– Պէթին շատ կը սիրեմ, շարունակեց ան, գեղեցիկ է հոգիով եւ մարմնով, ներսէն դուրս: Կը գուրգուրայ վրաս: Բայց խոշոր ցաւ մը ունիմ: Թոյլ չի տար որ մօտենամ իրեն. կը կարծէ որ մեր տարիքին ամօթ է... նոյնիսկ մեղք... Տէ՛ր ողորմեա: Ընկերուհի ալ չունի որ ենթադրեմ թէ յիմար մը խաղացած է խելքին հետ:

– Առողջական խնդիրներ ունի՞ս – սիրտ, գերճնշում, շաքար – հարցուցի:

– Ո՛չ, ըսաւ դէպի դուռը ուղղուելով, կաշիէ պայուսակը ձեռքին:– Միա՛յն տեսողութիւնս: Աչքին դերը անկողինէն

դուրս է... Ես աչքս գոց կը տեսնեմ Պէթին...: Չեմ կրնար
զգացումներս չորցնել: **Աստութեամբ իմ փոսիսիլ է:***

Ինքնաշարժիս թէ շուկային մէջ ուշադրութեամբ մտիկ
ըրի Վինիին եւ Պէթին խօսակցութիւնը, դիտեցի իրենց
վարմունքը իրարու նկատմամբ: Սրտնեղութեան կամ
գժտութեան ոչ մէկ նշան: Վինիին յայտնութիւնը վերագրեցի
խօսակցութիւն սկսելու կամ շարունակելու արուեստին, գոր
սափրիչները հաճոյքով կը ցուցաբերեն իրենց արհեստը
կիրարկած միջոցին:

Գ

Օրերը կ'անցնէին ըստ սովորականին: Վինին յաճախ կը
յայտնուէր պարտեզին մէջ Փամփինը գրկած: Երբեմն կը
թողուր որ ան ազատօրէն շրջէր եւ ինք աթոռին վրայ նստած
կը հետեւէր անոր շարժումներուն: Ան վարժուած էր իր նոր
տէրերուն. կարելի է ըսել որ ան հիմա կը կրէր Վինիին հոգին:

Այս զգացումը տակաւ այնքան զօրացաւ Վինիին մէջ, որ
ան անհրաժեշտ չնկատեց ամէն ատեն Փամփինին ընկե-
րանալ պարտեզին մէջ: Փորձելու համար անոր հաւա-
տարմութիւնն ու խելքը, քանի մը անգամ դուռը բացաւ,
նափովիթան եղանակ մը սուլեց, հրաւիրեց կատուն որ դուրս
ելլէ եւ ինք պատուհանին ետեւէն հսկեց անոր վրայ: Քսան-
երեսուն վայրկեան ետք կանգնեցաւ բաց դրան առջեւ,
նափովիթան եղանակ մը սուլեց եւ ի մեծ երջանկութիւն իրեն՝
Փամփինը վերադարձաւ տուն: Այս յաջողութիւնը պատճառ
եղաւ որ Վինի այլեւս հարկ չզգայ պատուհանէն հետեւելու
կատուին շարժումներուն: Փամփինը դուրս կուգար ուզած
ատեն պարզապէս դրան առջեւ յայտնուելով, ժամու մը չափ

* Բացարձակապէս անկարելի

կը դեգերէր պարտեզին մէջ եւ բաց դռնէն ներս կը մտնէր երբ լսէր նափովիթան եղանակը:

Հայրերու Օրուան առթիւ երբ Պէթին պնակ մը միթպով բերաւ, ըսի որ Վինին պէտք չէ այդքան վստահէր Փամփփինին, թէ ան խոցելի էր եւ յետոյ տէր փոխելու դժուարութիւն չունէր իր տեսակին կամ ծագումին իսկ բերմամբ: «Հոգս չէ», ըսաւ, «զգուեցայ. թող երթայ, ուրիշ մը կուգայ: Սորվեցանք»:

Բայց այս արհամարհող եւ անտարբեր Պէթին ո՛ր եւ հիմա Վինինին հետ դրանս առջեւ կանգնած շուարած, շնչահատ Պէթին ո՛ր:

– Փամփփինը ձեր մօտ է, թաց աչքերով հարցուց կինը՝ յանդիմանական նայուածք մը նետելով խեղճացած ամուսինին վրայ:

Փամփփինը պտոյտէն չէր վերադարձած երկու ժամէ ի վեր: Երեկոյեան 6 էր: Անմիջապէս զայն փնտռելու ծրագիր մը առաջարկեցի: Պէթին պիտի շրջէր մեր փողոցին բոլոր տունները մէկ առ մէկ, Վինին եւ ես նոյնը պիտի ընէինք քովի երկու փողոցները: Եթէ Փամփփինը չգտնուէր, յաջորդ օր համակարգիչովս պիտի պատրաստէի խոշոր «Կը Փնտռուի» ցուցանակ մը, գիրուկ, սեւ-ճերմակ կատուին մեծցուած նկարով, գտնողին խոստանալով 200 տոլար, զոր Վինի սիրով յանձն առաւ վճարել:

Այդ օրուան մեր փնտռտուքը արդիւնք չտուաւ: Ելեկտրական ձողերուն վրայ գամուած ցուցանակներուն պատասխանող չեղաւ: Վինին ինքզինք փակեց տան մէջ: Չէր ուզեր անկողնէն ելլել: Դադրեցուց նափովիթան եղանակները: Չէր ճաշէր, չէր քնանար: Կը մերժէր Պէթինին հետ խօսիլ: «Ո՛ր է Փամփփինս, ի՞նչ եղաւ Փամփփինս, արդեօք անփոյթ վարորդի մը ինքնաշարժին տա՞կ մնացած է», կ'ըսէր ու կուլար: Չէր ուզէր հաւատալ որ ան կրնար միացած ըլլալ վայրի սեւ կատուին թափառաշրջիկ խմբակին, բայց դրացիէն լսած ըլլալով որ մարդիկ կատու կը գողնային ուտելու

համար, «ո՞ր չարագործին կաթսային մեջ է Փամփքինս», սկսաւ ըսել ու անիծել ծնած օրը:

– Մարդս **տիփրէստ** է... շուարած եմ, չեմ գիտեր, չե՛մ գիտեր... Ի՞նչ պէտք է ընեմ, հարցուց Պէթին տանս մէջ, ճաշի սեղանին վրայ երբ պատմեց Վինիին մասին:– Կենդանիներու ապաստանարանին վարիչը խոստացաւ Փամփքինին նման կատու մը ձրի տալ մեզի: Այս մարդը կը մերժէ...

– Նոյնը չէ խիղճ ունեցողին համար, ըսի: Վինին խիղճ ունի եւ սիրտ, եթէ անջատ բաներ են, երկո՛ւքն ալ. պէտք է հասկնաւ: Ինչո՞ւ ձգեցիր որ այդքան կապուէր Փամփքինին...

Պէթին հետ խօսակցութիւնս երկար չտեւեց: Վինին չկրցաւ աւարտել ճաշը: Արդէն գրեթէ բան չէր կերած: Նոյնիսկ մերժեց սուրճ խմել: Մեկնումի պահուն իրեն երկարեցի Չիվըս Բիկըլ ուիսքիի շիշս: Երեսը ծամածոցեց, բայց երբ Պէթին ետեւէն դուրս կուգար, քայլերը դանդաղեցուց, ետ դարձաւ եւ աչքերուս մէջ նայելով **Թէնք ետ** ըսաւ:

Քանի մը օր չտեսայ զիրենք եւ յարգելով իրենց առանձնութիւնը չհետաքրքրուեցայ Վինիին վիճակով, բայց ուրախացայ երբ նկատեցի որ ան սկսած էր պարտեզ ելլել: Առաւօտ մը ինքնաշարժով նամակատուն գացած միջոցիս, Վինին տեսայ շուկայի տոպրակով: Հրաւիրեցի որ ինքնաշարժս մտնէր, բայց ինք նախընտրեց քալելով տուն երթալ եւ ժպտելով աւելցուց որ Պէթին համար ըրած գնումները ծանր չէին: Փամփքինին խօսքը չըրի:

Օրուան ընթացքին Վինին կը սուլէր իր նախասիրած նափուլիթան եղանակները: Փամփքինը վերադարձած չէր կրնար ըլլալ, այլապէս անպայման լուր կ'ունենայի: Թերեւս Պէթին պնդումով ապաստանարանէն որդեգրած էին նոր կատու մը, որ տակաւին ներկայութիւնը չէր զգացուցած: Անհաւանական չէր նաեւ որ Փամփքինը դադրած էր նշանակութիւն ունենալէ: Սպասեցի որ իրե՛նք կացութիւնը պարզէին ինծի:

Բայց կար նորութիւն մը: Նորութիւն մը, որ, եթէ ենթադրութիւնս ճիշդ է, բացատրութեան չէր կարօտեր: Բացարձակապէ՛ս եւ արդարացիօրէ՛ն բացատրութեան չէր կարօտեր: Գիշերները, հեռուստացոյցի վերջին հաղորդումներէն ետք, երբեմն կը լսէի Վինիին մեղմ ու անոյշ նափուլիթան մեղեդիները:

Յունիս 2009

Ֆորթ Լի, ՆՃ

ՄԱՐԻԼԻՆ ՄԱԼՐՈՆ ՍԹԱՆԼԻԻ ԾՈՑԻՆ ՄԷՋ

Երեք հազար հայեր կորսուած էին Նիւ Եորքի Սէյնթ Ճան տը Տիվայն հսկայական Մայր Տաճարին մէջ: Երկրի վրայ անփոփոխ բան չէ մնացած հարիւր տարի առաջ անոր հիմնարկէքէն ի վեր, բայց ան կը մերժէ փոխուիլ եւ ներկայ ընթացքով շինարարութիւնը թերեւս աւարտի 2100 թուականին: Պատարագիչ հայրապետին քարոզին անգլերէն մասերուն նիւթն էր ուրիշներէն փոխուիլ պահանջելու հակումը, բայց մեր անձերուն փոխուիլ չուզելու յամառութիւնը:

Նկատողութիւնը ճիշդ էր, առանց նորութիւն ըլլալու, թէեւ կրնար մեծ գոհունակութիւն պատճառած ըլլալ անգլիախօս ունկնդիրներուն, սակայն Հրաչ չսպասեց քարոզին աւարտին եւ դուրս թռաւ նախորդ երկու օրուան ահեղ ձիւնամրրիկէն մնացած սպիտակ բլուրները ձեղքելով հասնելու Ճորճ Ուաշինկթըն կամուրջը եւ անկէ ալ տուն:

Վահէն պիտի գար, վաղ երիտասարդութեան ընկերը: Յունուարին Մոնթրէալէն ինքնաշարժով Նիւ Ճրզի գալը խոհեմութիւն չէ, բայց քանի մը անգամ թուական ճշդելէ եւ փոխելէ ետք այցելութեան օրը որոշուած էր վերջնապէս: Պիտի գար հոգ չէ թէ կլիման ինչ վերապահած ըլլար:

Գրեթէ երկու ժամ Հրաչ ինքզինք զբաղցուց սեղան պատրաստելով, կարդալով եւ համակարգիչի վրայ քանի մը մտածումներ արձանագրելով: Նայեցաւ ժամացոյցին, դուռը բացաւ, աչք մը նետեց փողոցը: Ձիւնի թարմ փաթիլները սկսան ճնշել հոգին: Պղտոր մտածումները վանելու համար մոլտալ սկսաւ «Ի քէն հայցեմք»ը: Լոռեց երբ նկատեց բամպակէ գլուխ մը դրան արանքէն:

– Վահէ՛... Վահէ՛ դո՞ւն ես...

Ողջագործության երեսուն տարուան կարօտով: Ոտքի վրայ Վահէն սկսած էր պատմել գլխուն եկածը, երբ հեռաձայնը հնչեց:

– Նստէ, ըսաւ Հրաչ, նայիմ ով է...:

– ... Զբաղած եմ: Յարմար չէ. վաղը խօսինք:... Չեմ կրնար խօսիլ, Տընիգ: Կը սխալիս, փախուստ չեմ տար... երբեք չեմ տուած: Ամուսնալուծում ուղեցիր առիր... զիս հանգիստ ձգէ: Առնելիք տալիք չունինք: Ո՞վ, ե՞ս... մէկ վայրկեան, մէկ վայրկեան...

– Վահէ, խնդրեմ ուզած խմիչքդ առ եւ ինծի վոտքա մը լեցուր... գաւաթներն ու սառի փարչը հոն են...

– Նորէն ձայնդ բարձրացնել սկսար, Տընիգ, ըսաւ Հրաչ... եթէ ասանկ պիտի խօսիս... ոչ, չեմ սպանար, դո՛ւն չես ուզեր հասկնալ... ընկերս հոս է, երեսուն տարի է չեմ տեսած... օրս մի սեւցներ... վայրկեան մը, վայրկեան մը սպասէ... դուռը...

Մէկը դուռը կը ծեծէր փոխանակ զանգը հնչեցնելու:

– Ի՞նչ կայ, հարցուց Հրաչ սրտնեղած, միջահասակ, թիկնեղ մարդուն, որ կեցած էր դրան առջեւ ձեռքը մեջքին:

– **Օթող** հանէ, տեղս առած ես. այս առտու ձիւնը մաքրեցի:

– Փողոցը ինծի ալ կը պատկանի, Թոնի, **Ֆոր Կատ՝զ սէք**... դրացի ենք...

– Քեզի հանէ՛ կ'ըսեմ, **այ տոնը գէ՛**, բարձր ձայնով եղանակեց մարդը:

– Հիւր ունիմ, Վահէն... ընկերս... հոս է... երեսուն տարի...

– **Այ տոնը գէ՛**...

– **Եալլա՞, տէֆ եղի՛ր**, ըսաւ Հրաչ եւ դուռը զարկաւ Թոնիին երեսին:

– Չե՞ս վախնար, հարցուց Վահէն, երբ Հրաչ վերադարձած էր իր տեղը:

– Այս տեսակ գոմէշի հետ ասանկ կը վարուին: Աղտոտ մըն է: Բոլոր դրացիները ակոյալ ունին: Երեսակայէ. թաղին

խեղճ պարտիզայանը, ան ալ իտալացի, երբեմն կտրած խոտերը կը թափէ քովի անտէր-անտիրական անտառակին մէջ: Գոմէշը մատնած էր ոստիկանութեան... Երես ունի. իր երկու գայլաշունները ի՛ր առաջնորդութեամբ օրական երկու անգամ կը պարարտացնեն անտառակին հողը: Կ'ատեն այս **թիփերը...**

Հրաչ ումպ մը վոտքա կլլեց եւ չվառած սիկարով Վահէին ցոյց տուաւ սեղանին վրայ շարուած ուտելիքները:

– **Պաստոմայով** պզտիկ **սանտուիչ** մը շինէ քեզի համար... հատ մըն ալ ինծի... **Ֆիլէ** է, Մամասէն առի, կեսարական... **մեզէ** ընենք. հիմա նայիմ **էքսս...**

– Կը ներես, Տընիգ, գոմէշն էր, կը ճանչնաս... գեղեցիկ Ռիթային ամուսինը... այո, միասին են... ո՛չ, կը սխալիս, երբեք աչքս Ռիթային վրան չէ եղած... քեզ ունէի... ինչո՞ւ չվերամիացանք... նորէ՞ն ըսեմ... անկողինէս հեռացողը հոն տեղ չունի... ես ե՛մ ինչ որ եմ... Սէյնթ Ճան տը Տիվայն տաճարին պէս... սպասէ...

Հրաչ երկու խած առաւ **պաստոմայի սանտուիչէն**, ումպ մը վոտքա կլլեց, կօշիկները հանեց եւ ոտքերը նետեց սուրճի սեղանին վրայ:

– Վահէ, դուն ալ կօշիկներդ հանէ: Երկար ճամբայ կտրած ես: Հիմա կը վերջացնեմ:

– Նայէ, Տընիգ, ընկերս յոգնած է եւ անօթի: Երկու օր ետք հեռաձայնէ... Ի՞նչ ըսել կ'ուզէի Սէյնթ Ճան տը Տիվայն... ըսել կ'ուզեմ շէնքը, քարերը, քանդակները, պատերը...: Գիտեմ-գիտեմ... դուն շա՛տ հաւատացեալ ես... գիտե՛մ... անուշիկ եպիսկոպոս մը կ'ըլլաս...: Ոչ, չեմ հեգներ... չե՞ս ուզեր տարին անգամ մը Ասիգեցիի տօնին գաւիթին մէջ օրհնել շուն, կատու, ուղտ, փիղ, ջայլամ, աքաղաղ...: **Պայ տը ուէյ...** դեռ չհասկցայ ինչո՞ւ հեռաձայնեցիր:

– Խիստ կը վարուիս, ըսաւ Վահէ ուիսքիի բաժակը ափին մէջ դարձնելով, գաւկիդ մայրն է...

Հրաչ, որ ընկալուչը ականջին մտիկ կ'ընէր Տընիզին, երբեմն գլուխը շարժելով եւ անհամբեր առաստաղին նայելով, տեղէն վեր ցատկէց:

– Ո՛չ, չեմ կրնար տալ... պիտի չտամ: Քեզի ըրած ամսական վճարումս լիովին կը բաւէ: Տունս առիր, **օթոս** առիր, տղաս առիր, հիմա ալ զատեն երկու հազար տոլար կ'ուզես **օթո՞ղ** նորոգելու համար: **Նօ ոււէյ. պոյֆրէստէ՛ղ** առ. ես ուրիշին **թէնքին** մէջ **կէզ** չեմ լեցներ: Գիշեր բարի:

– Լաւ որ **թէլէֆոնը** չկոտրեցիր, ըսաւ Վահէ:

Հրաչ վառեց երկար ու հաստ սիկարը, երեք-չորս անգամ իրարու ետեւէ արագօրէն ծուխը քաշեց, նայեցաւ, յետոյ դարձեալ լուցկին պտըտցուց վառած մասին վրայ բոլորակի:

– Քուպայական է, խիտ ոլորուած...: Կէս-կատար վառած պէտք չէ ըլլայ: Քալէ սեղան նստինք. **շրիմփս** անմահական է...

Երկուքը պահ մը լռեցին: Երբ Վահէն պնակը լեցուց, ըսաւ.

– Ջիդերու պատերազմդ պիտի կորսնցնես. մարդ չէ շահած: Մտածա՞ծ ես... ամուսնալուծուածներու համար պտոյտի հրաշալի տեղ է Բիօ տը Ժանէրոն... ես Ադէքսանդրիա գացի կարօտս առնելու: Միայն այդ նպատակով:

– Հա՛... իրա՛ւ... ըսած էիր. լաւ որ յիշեցիր: Պատմե՛...

– Նպատակ ունէի երկու շաբաթ մնալու, չորս օրէն փախայ: Իմ քաղաքիս մէջ անծանօթ մըն էի. մեր **շիլլէն*** մարդ չէ մնացած:

– Ա՛խ գմբուխտ-լագուարթ ծովեզերքը... Սթանլի գացի՞ր... Սան Սթէֆանօ՞... Ապուրի՞ր...: Պուզուքիները, Զազան ի՞նչ եղան... օրէ՛ր, տարինե՛ր, ի՛նչ բաներ...

– Բոլորը հոն են... բաները չկա՛ն, ըսաւ Վահէ տրտմօրէն: Կենացդ, Հրաչ, միշտ միտքս էիր:

* Խումբ (այս եւ ծանօթագրուած բառերը արաբերէն են)

Երկու ընկերները գաւաթները պարպեցին եւ լեցուցին:

– Ֆաուզիէին նուիրուած բանաստեղծութիւնդ պահա՞ծ ես... **ալա** վարուժանեան «Ո՛վ Լալազէ»...

Հրաչ խնդաց:

– Պատին փակցուցած էինք, խշտիկին վերել... սպասման պահերուն կը կարդայինք, տեսակ մը «Ճաշակեսցուք» – մեղա՛յ Աստուծոյ – ըսաւ Վահէն: Կը յիշե՞ս առաջին անգամ...: Դոնապանէն գիտէինք որ մէկը պիտի գար: Դուն եւ ես պատշգամբ նստած էինք. Կարոն եւ Սուրէնը ներսն էին: Մեր աչքը վարը ծովածոցին մէջ լողացող **պլոնտին** վրայ էր: Երբեմն կը ժպտէր մեզի նայելով: Դուն անմիջապէս Մարիլին Մալրօ մկրտեցիր:

– Կեցիր, ե՛ս շարունակեմ, ըսաւ Հրաչ: Կէսօր էր. անհամբեր էինք: Դրան զանգը հնչեց. ներս վազեցի դիմաւորելու, որովհետեւ Կարոն եւ Սուրէնը լաւ արաբերէն չէին գիտեր: Մելքոնն էր... հայիոյելով ետ քովդ եկայ: Մարիլին Մալրոն ջուրին մէջ չէր. դէպի ժայռը լողացած ըլլալու է, խորհեցանք: Բայց ան տասը մեթր անդին գտնուող սանդուխներէն կը բարձրանար իր թաց լողագգեստով: Հինգ աստիճան վեր փողոցն էր... օթոպիւս չէր կրնար մտնել այդ վիճակով: Դուն եւ ես լարուած ուշադրութեամբ հետեւեցանք շարժումներուն: Փոխանակ փողոց երթալու, ոտքը դրաւ բազրիքին մօտ գտնուող քաղաքապետարանի խուցին տանիքին վրայ, վեր կանգնեցաւ, արագօրէն քալեց կանաչ խուցերուն միացեալ տանիքներուն վրայէն եւ... հո՛ւ փցատկեց մեր պատշգամբ:

– Հապա Կարո՞ն...: Մէյ մըն ալ իրար անցած **Եա մուա՛լլէ՛մ*** թոցուց բերնէն, արաբերէնով գիտցած երկու բառերէն մէկը:

* Ուսուցիչ, վարպետ, ընդհանրապէս փաղաքշական կոչական՝ ուղղուած միայն այրերու:

– Կարոն անելի նշանաւոր պատմութիւն մը ունի, յիշեց Հրաչ:– Օր մըն ալ ան որոշեց չգալ Սթանլիի մեր սենեակը: Անընդհատ կը պնդէր որ տարբեր տեղ մը վարձէինք: Սկիզբը «գետնայարկ է, խոնաւ է», սկսաւ ըսել: Ի վերջոյ հասկցայ բուն պատճառը...: Սարսափած էր...

– Ինչո՞ւ, ինչէ՞ն:

– Երբորդ հանդիպումին, վարագոյրին ետեւ, Մարիլին Մալրոն իր սերը խոստովաներ է: «**Էնթա հապիպի**»^{*} ըսեր է՝ ուռած փորը ցոյց տալով:

– Մարիլին Մալրոն յղի՞... Կարոյէ՞ն... այս նշանաւոր է...

Վահէն ապրեցաւ խնդուքի տագնապ մը: Կը խնդար անգուսպ, արցունքները հոսեցան. ոտքի ելաւ, քանի մը անգամ շրջեցաւ սենեակին մէջ: Երկուքին զուարճութիւնը ընդմիջեց դրան գանգակը:

– Գոմէշը չըլլայ, ըսաւ Վահէն մտահոգ:– Մի բանար...

Դրան առջեւ կանգնած էր կարմիր վերարկուին մէջ պլլուած աղջնակ մը:

– Հոս ի՞նչ կ'ընես, Լիսա, ներս մտի՛ր, շուտ, շուտ, ցուրտ է:

– Ասիկա **մամիս** տուաւ, **Մըսթըր** Հերի, գանդի է, ըսաւ աղջիկը ծրարը երկարելով Հրաչին:

– Նստէ, նստէ, Լիսա...:– Ռիթային աղջիկն է, տասը տարու, մօրը ելած է, անոր պէս շնորհալի, նկատեց Հրաչ բարձրաձայն դէպի խոհանոց քալելով:

Վահէն ինքզինք ծանօթացուց եւ ըսաւ որ շատ կը սիրէր գանդին: Շեշտեց որ **Մըսթըր** Հերին միշտ գնահատանքով արտայայտուած է մօրը մասին: Հետաքրքրուեցաւ աղջկան յաճախած դպրոցով:

– Բարի եկած էք, ըսաւ Լիսան Վահէին, ոտքի ելլելով: Յետոյ բարձրաձայն, երկու քայլ առնելով դէպի խոհանոցը–

^{*} Դուն իմ սիրելիս ես

Մըսթըրը Հերի, պետք է երթամ... **Միսթըրը** Մերի Ռոզը մեր տունն է. **սի եռւ լէթըրը**:

– Սպասէ... սպասէ... կանչեց Հրաչ խոհանոցէն եւ դուրս եկաւ ձեռքին մէջ ծրար մը:– Հոս դրած եմ վեց հատ հայկական փիցցա... կը սիրես, վեց հատ ալ հայկական **կըրնէյտ... չես կերած, բայց պիտի սիրես**: Երկուքական **տէտիիդ, մամիիդ** եւ քեզի...

– Շնորհակալ եմ... **Միսթըրը** Մերի Ռոզին ալ կուտամ: **Պա՛յ...** ըսաւ աղջիկը մեկնած պահուն ձեռքը շարժելով:

– Կեցցէ՛ անմրցելի լահմաճունը... հայկական **կըրնէյտը** ի՞նչ է... հարցուց Վահէ:

– Քիւֆթէ...Տեսա՞ր ինչ շնորհալի աղջիկ է...

– Կաթոլիկ քոյրերը կրթել գիտեն... անցեալին ամէն անկիւն դիմացոյ կ'ելլէին... փողոց մըն ալ կար իրենց անունով՝ Բիւ տէ Սէօր, կը յիշե՞ս: Հոն կ'ապրէի երկու կրտսեր եղբայրներուս եւ մօրս հետ: Քոյրերէն ոչ մէկուն հանդիպեցայ. լաչակաւորները կը վիստային:

– Պատմական փողոց էր... շատ հայեր կ'ապրէին, ըսաւ Հրաչ:– Լիպրերի Հաշէթը կար, Լիսէի գիրքերս հոնկէ կ'առնէի:

– Ուրիշ բան չկա՞ր, հարցուց Վահէ չարաճճի ժպիտով:

– Մեր սերունդը չտեսաւ... գիտես, չէ՞, միջազգային հռչակով բնակարանը քանդուած էր: Առաջին պատերազմին արաբ տղաք Բիւ տէ Սէօր կը տանէին աւստրալիացի եւ նոր զելանտացի զինուորները այդ տան մէջ իրենց «քոյրերուն» ծանօթացնելու: Երկրորդ պատերազմին աւստրալիացի զինուորները տեղը գիտէին. առաջնորդի պետք չունէին...

– Մարդը չի փոխուիր, հռչակը չի մեռնիր, փիլիսոփայեց Վահէ:

– Բայց կայ իրապէս պատմականը: Չէի գիտեր: Վերջերս ծանօթացայ եւրոպական կայսերապաշտութեան մասնագետի մը: Երբ տեղեկացաւ որ Ադէքսանդրիայէն եմ, հարցուց թէ գիտէի՞ Բիւ տէ Սէօրը:

– Ի՞նչ կ'ըսե՛ս...

– Երկինքէն ինկայ: 1880-ական թուականներուն անգլիական նաւատորմը ռմբակոծեր է Ադեքսանդրիոյ ծովեզերքը՝ այդ փողոցին մէջ պատահած դէպքի մը պատճառաւ: Մալթացի մը Բիւ տէ Սէօր հասնելէ ետք կը մերժէ իշապան արաբ տղուն վճարել նախապէս համաձայնուած սակը: Վէճ, կռիւ, ծեծ հաւանաբար քանի մը թարիֆէի համար: Յոյն, իտալացի, ֆրանսացի, հրեայ, մալթացի խանութպաններն ու իրենց յաճախորդները փողոց կը թափին մալթացին պաշտպանելու: Իշապանը կը մեռնի: Արաբները վրէժ կը լուծեն: Քանի մը հարիւր հոգի կը մեռնին: Կը սկսի Ահմէտ Օրապի փաշային ապստամբութիւնը անգլէֆրանսական տիրապետութեան դէմ:

– Չէի լսած, ըսաւ Վահէ երկար յօրանջելով:

– Օրապին ֆելլահ էր: Էն խոնարհ խաւէն բացառիկ դէմք մը: Ինչէ՛ր չենք լսած, ինչէ՛ր չենք ուզած լսել... ուրիշ աշխարհ կ'ապրէինք, Վահէ, ճանս, այնպէս չէ՞... Ապստամբութիւնը տեւեր է քանի մը ժամ, **ալլա** Վարդանանց պատերազմ:

– Ֆելլահ-մելլահ...: Արաբական ազգայնականութիւնը Եգիպտոսի մէջ կտրտեց... կը... տըր... տեց... թրքական եւ անգլէֆրանսական տիրապետութեան ժանիքները:

– Վահէ ճան, ազգայնականութեան մայրական կաթը թշնամին է: Հարց– Ո՞վ կ'որոշէ տուեալ պահուն թշնամին, անոր տեսակը, էութիւնը, ինքնութիւնը: Արաբական աշխարհը գայն որոշելու իշխանութիւնը առեր է Օրապիներու եւ Կամալ Ապտէլ Նասերներու ձեռքէն եւ տուեր մոլլա Ահմէտին եւ մոլլա Մուսթաֆային:

– ... **Տէտ էնտ** ... փակուղի... ինչպե՞ս դուրս պիտի գայ, մոլտաց Վահէ:

– Ե՛լ, վաղը կ'ըսեմ... վստահեցուց Հրաչ:

Վահէին աչքերը գոց էին, գլուխը ինկած էր ձախ ուսին վրայ, երկու ձեռքերը միացած կը պաշտպանէին կուրծքը:

- Ե՛լ...
- Վահէն անշարժ էր:
 - Մարիլին Մալրոն պիտի գայ... Ե՛լ, հրամայեց Հրաչ
նոսրի ելլելով:
 - Վահէն աչքերը բացաւ շուարած:
 - Հէ՞... ո՞ւր էի...
 - Եալլա եա մուալլէմ, Ե՛լ. սենեակդ հոն է:

Դեկտեմբեր 2009

Ֆորթ Լի, ՆՃ

ԽԱԻԱՔԱՐՏԷ ՄԱՐԴԸ ԴՐԱԽՏԷՆ ԴՈՒՐՍ

Էրեկոյեան 7-ին Դրախտ էի: Մուտքին զիս դիմաւորեց հինգ ոտք, ինը մատնաչափ բարձրութեամբ ճաղատ Մէթը ժպտուն դէմքով: Ոսկեգօծ կոճակներով կարմիր բաճկոնը, օձիքը բաց ճերմակ շապիկն ու սեւ-ճերմակ կօշիկները կը մատնէին կոլֆի սիրահարը: Իրական Մէթեուն տարբեր չէր: Թէեւ իրեն համար եկած էի, բայց շատ զարմացայ, որովհետեւ մինչեւ հիմա Դրախտին բնակիչները այս ձեւով բարեգալուստ չէին մաղթած:

Մեղմ լոյսերուն տակ շուրջս նայեցայ, աչքերս պտըտցուցի ինծի ծանօթ սրահներուն ցուցանակներուն վրայ: Դաւիթի Աստղը Մէթինը չէր կրնար ըլլալ, ոչ ալ անոր կից սրահը, որ ան-նշան էր: Բնագոյաբար քալեցի դէպի Խաչը: Ճիշդ տեղն էի: Սրահին մէջ Մերին, Մատթէոսին քրոջ **թոռը**, զբաղած էր **անքըլ** Մէթին պատանութեան, երիտասարդութեան եւ ամուսնութեան նկարները դասաւորելով սեղանին վրայ: Զիս տեսնելուն, երիտասարդ կինը գործը դադրեցուց եւ քովս եկաւ:

– Ժամը երեքէն ի վեր հոս եմ, ըսաւ ցած ձայնով, չխանգարելու համար Մատթէոսը, որ յարդարուած կը քնանար բաց սնտուկին մէջ:– Այս գործը մէկը պէտք է ընէր: **Անքըլ** Մէթը դիմաւորե՞ց քեզի, սիրեցի՞ր, **օրիճինըլ** է, չէ՞: Փաստաբանը ըսաւ...

– Փաստաբանը...

– Նկարները ցուցադրելը այլեւս սովորական դարձած է, ըսաւ: **Անքըլ** Մէթը մեծ մարդ էր: Հասցէ մը տուաւ եւ ուզեց որ դերասան-դերասանուհիներու եւ քաղաքական յայտնի դէմքերու հետեւողութեամբ **անքըլս** շինել տամ: Գաղափարը շատ սիրեցի: Տեսա՞ր ինչքան իրական է...: **Անքըլս** շատ

տիկեր ըրած էր կուֆ **գորսին** վրայ:

Մերին, հաւանաբար դժգոհութիւնս հետեւցնելով պոստած յօքերէս, անմիջապէս յայտնեց որ Դրախտին տնօրէնն ալ առարկած էր խաւաքարտէ Մէթը ցուցադրելու դէմ, բայց նկատելով որ ամենէն սուղնոց դագաղը գնած էր բացառութիւն մը պիտի ընէր արժէքաւոր **անքըլին** համար:

Սգակիրները սկսած էին լեցնել սրահը: Անոնք մէկ առ մէկ կամ խմբովին կը մօտենային դագաղին. ոմանք կը խաչակնքէին, ուրիշներ վայրկեանի մը չափ ինքնամփոփ կը դիտէին Մէթը իրենց տեղերը գրաւելէ առաջ:

Տան Կարգի կարճ արարողութիւնը կատարեց քահանայ մը՝ օժանդակութեամբ երկու դպիրներու: Մեկնելէ առաջ ոտքի ելայ որպէսզի անձամբ ցաւակցութիւն յայտնեմ առաջին շարքին վրայ նստած Մէթին քրոջ՝ տիկին Մանուշակին եւ Մերիին մօր՝ Բաքսիին, բայց տեղս նստայ երբ Մերին մօտեցաւ գրակալին եւ շնորհակալութիւն յայտնելէ ետք ներկաներուն, հրաւիրեց ընտանիքին եւ **անքըլ** Մէթին մօտիկ բարեկամ **Սըսթըր** Տէյվիսը յարգանքի քանի մը խօսք ընելու՝ շեշտելով որ ան շատ յայտնի փաստաբան մըն է նահանգին մէջ:

Դամբանախօսը բաւական լաւ ծանօթ էր հանգուցեալին կեանքին: Մատթէոս Կարինեանը Պէյրութէն եկած էր վաթսուն տարի առաջ, քառասունական թուականներուն սկիզբը, գիտէր ֆրանսերէն, անգլերէն եւ արաբերէն: Ներկայանալի էր, ունէր հետախուզող միտք մը, հարցասէր էր եւ այդ յատկութիւններուն շնորհիւ անմիջապէս գործ գտած մասնաւոր հետաքննութեանց հաստատութեան մը մօտ: Մաս կազմած էր հայկական զանազան յանձնախումբերու: Առեւտրական կեանքի մէջ իր յաջողութիւնները զինք նետովի տուած էին Ուօլ Սթրիթի անտառը, որ վարձատրած էր իր յախտուն նկարագիրը նկատելի հարստութեամբ:

Պաշտօնական շրջանակներու մէջ Մէթէու, մտերիմներուն՝ Մէթ, ան մեծ սիրով փարած էր իր երեց քրոջ, անոր դստեր եւ թոռան: Ասոնք էին իր ընտանիքը: «Նայեցէք», ըսաւ Մը. Տէյվիս, «նայեցէք այս նկարներուն (ցոյց տալով Մերիին

ցուցադրածները), ես չեմ կրնար հաշտուիլ իմ ամենէն սիրելի բարեկամիս անդարձ մեկնումին: Ան իմ մէջս պիտի մնայ այնպէս ինչպէս զայն տեսաք Դրախտին մուտքին: Ժպտուն, գեղեցիկ, կենսասէր, ազատամիտ, բարեկամներուն հանդէպ հոգատար եւ տաքսիրտ: Տիկին Մանուշ, Բաքսի եւ Մերի, ես ձեր հարազատն եմ: **Անքըլ** Մէթը չկայ, **անքըլ** Տէյվը հոս է»:

Տան Կարգը վերջացած էր: Ներկաները մօտեցան նկարներու սեղանին. անոնցմէ ոմանք իրենց նկարը կը փնտռէին խմբանկարներու մէջ, Մէթին հետ: Ես մտայ ցաւակցութիւն յայտնել պատրաստուողներու շարքը: Վերջինն էի: Երբ կարգը ինծի հասաւ, Բաքսին ձախ թելը վերցուց մօրը ուսէն եւ տեղը տուաւ ինծի:

Տիկին Մանուշը ճանչցած էի երկու տարի առաջ երբ ցուրտ գիշեր մը զինք եւ Մէթը ժամը 10-ին հիւանդանոց տարած էի ինքնաշարժովս: Մէթին հետ ճաշած էինք ճափոնական ճաշարան մը: Վերադարձին՝ իր տան դրան առջեւ կանգնած բարձր ու լայն ինքնաշարժէ մը անծանօթ տղայ մը դուրս ցատկելով համարձակօրէն մեզի մօտեցաւ եւ մութին մէջ ինքզինք ներկայացուց իբրեւ Մէթին կրտսեր քրոջ աշակերտը: Ըսաւ թէ կը ճանչնար Մէթը եւ գիտնալով բնակարանին հասցէն եկած էր անձամբ իրեն հաղորդելու մտահոգիչ լուր մը:

Ուսուցչուհին Քրիսչըն Սայընս Եկեղեցւոյ մէջ վկայութեանց աւարտին չէր կրցած տեղէն ոտքի ելլել: Անմիջապէս եկեղեցի փութացինք: Գիտնականները՝ յաղթանդամ մարդ մը, սպիտակ մագերով ակնոցաւոր կին մը եւ երկու երիտասարդներ, փոխանակ շտապ օգնութիւն կանչելու, շրջապատած էին զինք եւ կը փորձէին խօսածները վերձանել աստուածային պատգամի մը ակնկալութեամբ: Ընկուզենիէ նստարանին վրայ Բաբելոնի աշտարակէն փախած կինը կը խօսէր եւ կ'երգէր ցարդ չլսուած լեզուներով, երբեմն կը լռէր, երբեմն կը խնդար բարձրաձայն: Ան չճանչցաւ իր քոյրն ու եղբայրը: Պահը ցնցիչ էր:

– Նստէ, տղաս, ըսաւ տիկին Մանուշ: Երբեք չեմ մոռնար այդ գիշերուան ազնուութիւնդ: Մինչեւ վերջ մեզի հետ

մնացիր: Մատթեոսս քեզ շատ կը յարգէր: Խնդրանք մը ունիմ: **Մր.** Տէյվիսը կ'ուզէ որ գալ Հինգշաբթի իր գրասենեակը երթանք: Կուգա՞ս... երեք կիներս առանձին մի ձգեր:

– Յարմար չեմ տեսներ, ըսի, դուք գացէք, յետոյ ես, եթէ պէտք ըլլայ...

– Խնդրանքս մի մերժեր... Մատթեոսս սխալ բաներ կ'ըներ... կը վախնամ...

Պահը եւ վայրը թոյլ չէին տար որ յամառէի մերժումիս մէջ, մանաւանդ որ ծանօթ էի տիկին Մանուշին գանգատած «սխալ բաներ»ուն մէկ մասին եւ պարզունակ մտքով չէի ընդունած Մէրին նկարագրին վերաբերող **Մր.** Տէյվիսին խօսքերը, բայց պատուիրեցի որ իմ ներկայութիւնս պէտք չէ անակնկալ մը ըլլար փաստաբանին: «Մէրին կ'ընէ պէտք եղածը», ըսաւ:

*

* *

Մէրին հանդիպած էի շուրջ երեսուն տարի առաջ Եկեղեցասէր Արանց Կազմակերպութեան ժողովներուն: Զուարթ մէկն էր, սակաւախօս, բայց կը զգացներ ունեւոր ըլլալը: Մեր բարեկամութիւնը «բարեւ-Աստուծոյ բարին»էն անդին չէր երթար մինչեւ որ տարիներ ետք պատահականօրէն դրացի եղանք, երբ ինք կնոջ մահէն ետք շատոնց դադրած էր ժողովներուն մասնակցելէ:

Ամառ երեկոյ մը, արձակուրդով Գալիֆորնիա մեկնումիս նախօրեակին, Մէրը հեռաձայնեց, ցաւ յայտնեց որ փոխադրուելէս վեց ամիս ետք տակաւին առիթ չէր եղած զիրար տեսնելու եւ առաջարկեց միասին երթալ նորաբաց գարեջրատունը (ասիկա առաջինն էր եւրոպականացումի ձգտող արուարձանին), որպէսզի այդ առթիւ ճանչնայի նաեւ նշանածը՝ Տորոթան, իր բառերով «զուլալ աղջիկ» մը, որ տունը շէնցուցեր է գրեթէ տարիէ մը ի վեր: Հակառակ անյարմար ժամանակին, ընդունեցի հրաւերը:

Գարեջուրի մեծ բաժակ մը պարպած էի Տորոթային եւ

Մէթին հետ թերեւ խօսակցութիւններով, որոնց առանցքը նորաբաց հաճոյավայրն էր: Զուլալ աղջիկը, որ զուարթօրէն կը խաղար երկար, ոսկի մազերուն հետ երբեմն գաղտնի աչք մը նետելով թոյլ շապիկին տակ ազատագրուած կուրծքին, յանկարծ կանաչ աչքերը վրաս սեւեռելով հարցուց. «Գիտէի՞ք որ լեհերէնի մէջ ես Աստուծոյ պարգեւն եմ»: Մէթը խնդաց, հաւանաբար գիտէր, պէ՛տք է գիտնար, բայց ես ի՞նչպէս պիտի գիտնայի: Ներածականը զիս կախեց անուշիկ բերնէն: Չէի կրնար գարեջուրի երկրորդ բաժակ մը չապսպրել:

Տորոթան մանկութեան մասնակցած էր գեղեցկութեան մրցանքներու առանց նշանակալից յաջողութեանց, բայց պարմանուհիներու գեղեցկութեան թագուհի հռչակուելէ ետք տասներութ տարեկանին փախած էր Լեհաստանէն եւ եկած Շիքակօ: Հօր մանկութեան ընկերը, որ զինք պատսպարած էր իր տունը եւ դպրոց դրկած, աշխատած գործարանին փակումով դարձած էր անգործ: Նոյն ատեն լսած ըլլալով որ երիտասարդ եղբայրը Վարշաւիոյ մէջ հիւանդ է, Տորոթա լծուած էր աշխատանքի՝ վաստակէն կարելոր բաժին մը փութացնելով անոր: Յետոյ Նիւ Եորքի մէջ աշխատած բեմայարդարումի գործով զբաղող ընկերութեան մը մօտ:

– Կարելո՞ք էր Շիքակօ գալդ, հարցուցի:

– Անշուշտ, ըսաւ քսանհինգամեայ պուպրիկը: Մանկութենէս Ամերիկա երազած եմ: Աշխարհի մէջ ասանկ տեղ չկայ... Մէթին պէս մարդ չկայ: Ես ո՞ւր պիտի գտնէի Մէթը:

Չուզեցի հարցնել, թէ ինչպէս հանդիպած էին իրարու, բայց հարցումը ինծի հետ պտըտեցաւ Սան Ֆրանսիսկօ, Գարմել, Ֆրեզնօ, Լոս Անճելըս եւ Սան Տիէկօ: Դժուար էր, եթէ ոչ ծիծաղելի, մեծ հօր եւ թոռան տարիքը ունեցող այր եւ կնոջ կապին մէջ փնտռել անշահախնդրութեան կուտը: Կասկածս իրականացած գտայ ամսուան մը շրջապտոյտէս վերադարձիս երբ Մէթին այցելեցի իր փափաքով:

Վարշաւիոյ մէջ եղբօր թաղումին ներկայ գտնուելու նպատակով Տորոթա մեկնած էր տունէն՝ Մէթէն խնդրելով որ անհամբեր չըլլար, որովհետեւ ատեն մը հոն պիտի մնար ընտանիքին հոգ տանելու: Շիքակոյէն տարօրինակ հեռա-

ձայն մը պատճառ եղած էր որ Մէթ հետաքննիչի իր վաղեմի արհեստը կամ արուեստը ի գործ դնէ։ Տորոթա եղբայր չէր ունեցած բնաւ եւ վերադարձած էր հօրը ընկեր կոչած մարդուն քով, Շիքակօ։

– Ես ի՞նչպէս այս խաղին ինկայ, հիւրասենեակին մէջ արցունքները սրբելով աւաղեց ութսունհինգամեայ Մէթը, որուն բերանին երկու անկիւնները սպիտակ լորձունքը տեղաւորուած էր թանձրացած։

Այդ պահուն ինծի համար յստակ չէր, թէ ինչո՞ւ ան այդքան յուզուած էր։ Խաբուած ըլլալու ցաւը կրնար պատճառ մը ըլլալ. թոչունը վանդակէն փախցուցած ըլլալը՝ նմանապէս։

– Շատ հոգ մի ըներ, ըսի, թոչունը քուկո չէր արդէն։ Լաւ որ թռաւ...

– Ի՞նչ կ'ըսես... ի՞նչ կ'ըսե՛ս... ինծի հոգ պիտի տանէր մինչեւ մահս, քովս պիտի մնար... սառած օրերուս վրայ արել էր։

Մէթ իր յուզումէն ձերբազատելու ճիգով մը ոտքի ելաւ եւ մտաւ սենեակ մը։ Հինգ վայրկեան ետք վերադարձաւ ձեռքին մէջ սեւ կողքով եւ մետաղեայ կլոր կապով մեծկակ տետրակ մը։

– Կը ներես, Մէթ, ըսի, «Աստուծոյ պարգեւը» տունէդ բան մը առած–տարած է։

– Ի՞նչ պիտի տանէր... **փապուճնե՞րս**։ Մէկ տարուան մէջ երկու հարիւր հազար **տալէր գոսթ** եղաւ վրաս... **տահա** ի՞նչ պիտի տանէր։ Ահա՛, տե՛ս, չեմ ստեր, ըսաւ Մէթ եւ բացաւ չէքի տետրակին տոմարի էջերը, զորս բաժնած էր թղթիկներով։

– Զէքերուն վրայ բացատրութիւն արձանագրած ես։

– Ո՛չ... գիտեմ միտքէդ ի՞նչ կ'անցընես, ըսաւ։– Փաստաբան տեսայ։ Խաբէութեան եւ աւազակութեան յանցանքներով ոճրային խնդիր մը հարցական է եղեր, բայց պիտի ուսումնասիրէ քաղաքային դատի մը կարելիութիւնը։

Թելադրեցի որ սիրտ չմաշեցնէ, դրամ չվատնէ եւ փորձէ եկեղեցւոյ շրջանակին միջոցաւ հոգատար հայուհի մը ճարել, եթէ չէր ուզեր հանգստեան տուն մը փոխադրուիլ կամ

խնամակալ մը ապահովել օրինաւոր սպասարկութենէ մը:

Մէթին աչքերը փայլեցան:

– Լաւ գաղափար է, ըսաւ:– Թող փաստաբանը իր գործը տեսնէ, ես մէյ մը տէր հօր հեռաձայնէմ: Բարեկամ է. **սթոք** նուէր տուած եմ:

*

* *

Բաւական ատեն լուր չէի առած Մէթէն: Երկուշաբթի օր մը կէսօրուան մօտ հեռաձայնեց եւ դողացող ձայնով խնդրեց որ իրեն այցելեմ կարելի եղածին չափ շուտ: Զինք գտայ տակնուվրայ վիճակի մը մէջ: Տորոթայէն նոր հարուած մը ստացած ըլլալու է, մտածեցի: Անկարելի չէր որ ան շնականօրէն դատարան դիմած ըլլար դրամական պահանջով: Տարուան մը կենակցութիւն միացած զինք ցվերջ ապրեցնելու խոստումի մը այդ կարելիութիւնը կ'ընծայէր:

Մէթ առիթ չտուաւ հարցուփորձի եւ անմիջապէս լուտանքներուն թիրախ ըրաւ տէր հայրը, որ իրեն ծանօթացուցած էր Ժանան:

– Մեղքցայ, ըսաւ, հայաստանցի մեծ մայր մըն էր, քառասուննոց: Քովս բերի: Խորհեցայ որ ինծի հոգ կը տանի, **օթօ** քշել կը սորվեցնեմ, հոս կ'ուտէ, կը խմէ, կը պառկի եւ առած քանի մը **տալէրն** ալ Հայաստան կը դրկէ աղջկան եւ թոռներուն:

– Եւ ի՞նչ պատահեցաւ:

– Հոս մնաց ամիս մը: Ուզեց բժշկական քննութեան ենթարկուիլ: Նախ ժամանակ չունէի զինք հոս-հոն տանելու – բժիշկի, թերեւս մասնագետի, թերեւս հիւանդանոց, ես ինչ գիտնամ ուրիշ ինչ: **Մարթէթն** ալ գէշ էր, ամէն վայրկեան **պրոքթորիս** հետ էի **թէլեֆոնով**:

– Բաքսին, Մերին կրնային տանիլ... զի՛ս կանչէիր...

Մէթ չկրցաւ զսպել բարկութիւնը.

– Դո՛ւն պիտի վճարէիր... **ինչուրէնս** չկայ, զիտե՞ս. այցելու էր, վստահաբար ապօրինի բնակիչ...

– Բայց ձեւը կար, եթէ գոհ էիր իրմէ, պէտք է գոհացնէիր, դժուար չէր քեզի համար:

Պահ մը լռեց գլուխը ափերուն մէջ առած:

– Քանի անգամ ուզեցի որ գիշերները քովս գար... քանի՛ անգամ... գար, **քանափէին** վրայ քովս ոտքերը երկարէր, միասին **թէլէվիզիոն** դիտէինք: Չեղաւ...: Չեկաւ. սենեակը կը քաշուէր գիրք կը կարդար:

– Հիմա ո՞ւր է, հարցուցի:

– Այս առտու պայուսակը առաւ գնաց...: Ոստիկանաւորն պիտի երթամ, հետս եկուր, հրամայեց բորբոքած:

Մինչեւ այդ պահը լսածներս ոստիկանութեան ճամբան ցոյց չէին տար: Խեղճ, անոք եւ պարկեշտ կնոջ մը կողմէ արհամարհուած ըլլալու վիրաւորանքէն աւելի ծանր բան մը պէտք է եղած ըլլար, մտածեցի:

– **Տիրէքթիվին** պիտի բողոքեմ, պիտի ըսեմ որ **իլլիկը** հանգուցեալ կնոջս նոփ նոր **փուլովերը** գողցած է...

Մէքը եւ իր կատաղութիւնը անհանդուրժելի էին: Չէի կրնար հոն մնալ: Ոտքի ելայ եւ առանց երեսին նայելու քալեցի դէպի դուռը:

– Մի երթար, լաւ չեմ զգար, աղաչեց ետեւէս:– Մի՛ երթար...

Խորհեցայ որ զինք վրէժխնդրական հոգեվիճակէն պէտք է ջանայի դուրս հանել: Ընդունեց ճափոնական ճաշարանը երթալու առաջարկս եւ հոն յայտնեց, թէ անցնող երեք ամիսներուն քանի մը բժիշկ տեսած էր: Ըսաւ թէ ատենէ մը ի վեր կուշտը կը ցաւէր, իսկ վերջին բժիշկը բան մը նկատած էր պատկերին վրայ, ձախ կողմը: Յառաջիկայ Ուրբաթ առտուան իննին «պգտիկ գործողութեան» մը պիտի ենթարկուէր Էնկլ հիւանդանոցը, որպէսզի ցաւը անցնէր: «Քառորդ ժամուան խնդիր է», ըսաւ: Երբ հարցուցի, թէ ինչո՞ւ աւելի շուտ չէր ուզած հիւանդանոց մտնել, ըսաւ թէ բժիշկը պատրաստ էր, բայց ինք ստիպողական գործեր ունէր:

Տան դրան առջեւ, ինքնաշարժէս ելած պահուն, առողջութիւն մաղթեցի: «Շատ բան չեմ ուզեր,» ըսաւ, «Աստուած պապան սանկ երկու-երեք տարի ալ տար....»:

*
* *

Ամէն օր հեռաձայնեցի: Մէթին տրամադրութիւնը լաւ կ'երեւէր: Ինծի թուեցաւ որ Տորոնթային եւ Ժանային սատանաները մոռցած էին զինք: Անհամբեր էր «պզտիկ գործողութեան» ենթարկուելու:

Ուրբաթ առտուան եօթնին Բաքսին զինք հասցուցած պիտի ըլլար հիւանդանոց, իննին գործողութեան պիտի ենթարկուէր: Ենթադրելով որ սենեակ բերուած կ'ըլլայ, ժամը տասնըմէկուկէսին հեռաձայնեցի: «Նախաճաշ ըրի, հիմա անկողինս դրին», ըսաւ Մէթ, «վերմակիս տակ եմ: Քիչ մը հանգչիմ»: Խոստացայ ժամը երեքին այցելել:

Էնկլ հիւանդանոցին չորրորդ յարկը գրեթէ ամայի էր այդ ժամուն: Գրասեղանին ետեւ նստած բոյժքոյրը զիս տեսաւ, բայց անտարբեր երեւոյթ մը առաւ: Ըսի թէ եկած էի Մէթեւ: Կարինեանը տեսնելու: Ուզեց զիտնալ, թէ ո՛վ էի եւ ի՛նչ կապ ունէի անոր հետ: Հարցումները անսպասելի էին եւ նեղացուցիչ:

– Քոյրը եւ երկու կիներ եկան, տեսան եւ ճաշելու գացին: Շուտով պէտք է վերադառնան, ըսաւ:

– Ես ալ ազգական եմ, շոքոլա բերած եմ Մէթեւին:
– Չի՛ կրնար ուտել:
– Լա՛ւ, տեսնեմ... խօսիմ, ըսի:
– Չի՛ տեսներ, չի՛ կրնար խօսիլ, պատասխանեց սառնօրէն:
– Լա՛ւ, երթամ աղօթք մը ընեմ. կը լսէ՞:
– Չեմ գիտեր, ըսաւ, հո՛ն է, ցոյց տալով Մէթին սենեակը, որ գրասեղանէն տասը ոտք անդին էր:

Մէթը առանձին էր սենեակին մէջ: Աչքերը ծածկուած էին այցեքարտէ մըն ալ փոքր մէկական ճերմակ լաթի կտորով: Անկողինին մօտ՝ մեքենաներ եւ անոնցմէ երկարած խողովակներ Մէթին ռունգերուն եւ թելերուն մէջ:

– Մէ՛թ, կանչեցի:

–...

– Մէ՛թ... Մէ՛թ... ես եմ...

—...

Գիշերը հեռաձայնեցի Մերիին տեղեկություն ուղեւում: «Ուրեմն դո՞ւն էիր **անքըլիս** այցելողը. մե՛ դք, եթէ քիչ մը սպասէիր, միասին կ'ըլլայինք», ըսաւ եւ պատմեց որ մեծ մայրը, մայրը եւ ինք ճաշէն վերադարձեր են ժամը 3:30-ին, երեքը շարուեր են Մէթին անկողինին առջեւ, իրարու ձեռք բռնած միաբերան «Հայր Մեր» արտասաններ եւ յետոյ բժիշկին եւ **նըրսին** արտօներ են որ Մէթը այս աշխարհին կապող խողովակները անջատեն: «**Անքըլս** արագօրէն եւ առանց ցաւի գնաց», աւելցուց Մերի:

Այսպէս ուրեմն՝ Մէթ, որ քիչ մը հանգչելու համար եւ կուշտ փորով ժամը տասնըմէկուկէսին անկողին մտած էր, նոյն օրը, ժամը չորսին, թերեւս աւելի կանուխ, մտած էր վերջին հանգստարանը, ըստ Մերիին: Բայց գտա՞ծ էր վերջնական հանգիստը:

*

* *

Վերելակին դռները բացուեցան նորակառոյց շէնքին 20-րդ յարկին մէջ, որ ամբողջութեամբ կը պատկանէր Տէյվիս Վալվոլինսքի Պուղաչա Գոգոտէս փաստաբանական տան: Քարտուղարուհիին հրաւերով հինգ վայրկեանի չափ նստանք սպասման սրահը ապա **Մր.** Տէյվիսը ինք եկաւ մեր մօտ, համբուրուեցաւ տիկին Մանուշին, Բաքսիին եւ Մերիին հետ, ուրախութիւն յայտնեց ներկայութեանս համար եւ մեզ անձամբ առաջնորդեց իր գրասենեակը, որ թերեւս 1000 քռ. ոտք տարածութիւն ունէր՝ շքեղագոյն կահոյքով: Գրասենեանին կոնակը, պատէն կախուած էր նախագահ Բանըլտ Բեկընի գունաւոր մեծ նկարը իրեն հետ ձեռնուած պահուն, Սպիտակ Տան մէջ:

Մր. Տէյվիսը ըսաւ որ շատ ազդուած էր Մէթին մահէն, թէ զինք ճանչցած էր մասնաւոր հետաքննիչի օրերէն, հրճուանքով հետեւած էր անոր նիւթական յաջողութեանց եւ երկար տարիներ իր մասնագիտական ծառայութիւնը տուած էր

յաճախ անվճար: Բաքսի եւ Մերի իրարու երես նայեցան: Չկրցայ հասկնալ որ անհաւատալի՝ գտած էին փաստաբանին վերջին յայտարարութիւնը, թէ կը նախագգային անախորժ բան մը: Կը թուի թէ **Մը**. Տէյվիս չնկատեց երկուքին արտայայտութիւնը, որովհետեւ նոյն եղանակով գնահատեց Մերիին **փրոֆէշընը** եւ համակ սիրով ըրած կարգադրութիւնները իր սիրելի **կրէնտ անքըլին** համար: Յետոյ ձեռք առնելով իր առջեւ գտնուող քառանկիւն պահարան մը, գայն բացաւ: «Ասիկա», ըսաւ, «Մէթին Կտակն է, ուզեցի բովանդակութեան տեղեակ պահել ձեզ Երկուշաբթի առաւօտ կտակադատատեանին յանձնած: Երկար չէ»:

Փաստաբանը սկսաւ կարդալ.

«Ես, Մատթէոս Կարինեան, այլ անուամբ Մէթեոս Կարինեան, այլ անուամբ Մէթ Կարինեան, բնակիչ Թէնաֆլայ քաղաքին, Նիւ Ճրզիի նահանգ, այսու կտակաւ կը յայտարարեմ վերջին կամքս:

Ա. Սիրեցեալ քրոջս՝ տիկին Մանուշակ Հովիւեանին ննջեսնեակիս ամբողջ պարունակութիւնը:

Բ. Քրոջս աղջկան՝ սիրեցեալ տիկին Բաքսի Արթունեանին հիւրասնեակիս կարասիները եւ հանգուցեալ կնոջս բոլոր զգեստները:

Գ. Քրոջս թոռան՝ սիրեցեալ օր. Մերի Արթունեանին Սըրսետէս ինքնաշարժս:

Կը խնդրեմ որ կտակակատարս վաճառէ շարժուն եւ անշարժ ամբողջ ստացուածքս, վճարէ պարտքերս եւ թաղմանս բոլոր ծախքերը, եւ արդիւնքը բարդելով դրամատան մէջ ի պահ կանխիկին վրայ գումարը բաշխէ հետեւեալ կերպով.

Դ. Երկու հարիւր յիսուն հազար տոլար Պէյքըրգֆիլտ, Գալիֆ. բնակող 41 տարեկան Մատթէոս Սթիվ Ռոտրիկէզին, որուն հանդէպ պարտագանգ գտնուած եմ, բայց որ բնաւ զիս չմոռցաւ:

Ե. Երկու հարիւր յիսուն հազար տոլար Նիւփորթ, Բոտ Այլընտ բնակող տիկին Սիւզի Ուայթ Գոնթին, որուն հետ բաժնած եմ քաղցր պահեր:

Զ. Հարիւր հազարական տոլար տիկին Ալիս Վ. Պոնիերիի, Գուինգ, Նիւ Եորք. օրիորդ Մայա (Մէյ) Եան Շինի, Պոկոթա, Նիւ Ճրզի. օրիորդ Կապրիէլլա Ալֆոնսինի, Նիւ Եորք, Նիւ Եորք:

Է. Քրոջս թոռան՝ Մերի Արթունեանին քսանհինգ հազար տոլար: Իմ փափաքս է որ ան իր ուսումը շարունակէ եւ վկայուի:

Ը. Քրոջս՝ Մանուշակ Հովիւեանին, որուն հանդէպ միշտ հոգածու գտնուած եմ, տասը հազար տոլար:

Թ. Քրոջս աղջկան՝ Բաքսի Արթունեանին, որ ամուսնացած էր, հակառակ յորդորիս, սխալ մարդու հետ, հինգ հազար տոլար:

Ժ. Հայ Եկեղեցւոյ Առաջնորդութեան, որ դժբախտաբար կը յամառի չօգնել հայ չքաւորներու եւ տաքեցներու, հակառակ տարիներ առաջ ըրած շօշափելի օժանդակութեանս, թելադրութիւններուս եւ յանձնարարութիւններուս, ՄԷԿ տոլար:

ԺԱ. Թողօնիս ամբողջ մնացեալը անվերապահօրէն եւ առանց պայմանի վաղեմի բարեկամիս՝ Սր. Տաւոս Գրոմուէլ Տէյվիսին, որուն մասնագիտական խորհուրդներէն եւ իրաւաբանական ծառայութիւններէն մեծապէս օգտուած եմ:

Սր. Տէյվիս լայն շունչ մը առաւ եւ առաւել հանդիսատրութեամբ կարդաց վերջին յօդուածը:

ԺԲ. Ո՛վ որ այս Կտակիս դէմ առարկէ եւ դատական գործողութեամբ փորձէ զայն անվաւեր հռչակել, կը զրկուի այս Կտակովս սահմանուած նուէրէն»:

– Ա՛յս է Մէթին վերջին կամքն ու կտակը, պատրաստ եմ պատասխանելու եթէ հարցում ունիք, ըսաւ փաստաբանը:

Բաքսի, որ նոթատետրին մէջ բաներ մը կ'արձանագրէր կտակին ընթերցումին ընթացքին, անմիջապէս աջ ձեռքը բարձրացուց.

– Կրնայի՞ խօսիլ...

– Անշո՛ւշտ, պատասխանեց փաստաբանը քաղաքավարական հարցումին:

Աչքերը նոթատետրի էջէն առանց հեռացնելու, Բաքսի շարունակեց.

– Շնորհակալ եմ, **Սր.** Տեյվիս, ներեցեք... թողօնին մնացեալը ո՞րքան կը գնահատուի...

– Չեմ գիտեր, դժուար է ըսել սա պահուն... թերեւս մէկ... մէկուկէս միլիոն տոլար... կամ աւելի...

– Օ՛հ, ձայնարկեց Բաքսին աչքերը լայնօրէն բացած:

– Կտակը դո՞ւք պատրաստած էք, հարցուցի ես:

– Ո՛չ, ըսաւ, Սայմըն Կրինպէքը:

– Հո՞ւս կ'աշխատի...

– Ո՛չ, Իրաւաբաններու Կաճառին հանդիպումներէն կը ճանչնամ:

– Մէթը վերջերս լաւ չէր զգար, ըսի: Արդեօք ե՞րբ ստորագրած էր կտակը...

– Հինգշաբթի, Յունուար 4-ին:

– Ա՞յս տարուան...

– Այո՛, ըսաւ:

– Ըսել կ'ուզեք հիւանդանոց մտնելէն օր մը առաջ, նկատել տուաւ Բաքսին:

Սր. Տեյվիսը գլխու շարժումով հաստատեց եւ իբրեւ ընտանիքին բարեկամը վստահեցուց որ ամէն ինչ կատարուած էր օրինաւորապէս, վկաներու ներկայութեան, լրացնելով օրէնքին պայմանները:

Հասկնալիօրէն Մէթին հարազատները ծանրօրէն յուսախաբ էին: Շնորհակալութեան քանի մը կցկտուր խօսքերով գրասենեակէն դուրս գալէ ետք սրճարան մը մտանք մեր տպաւորութիւնները բաժնելու համար: Խոշոր հարց էր կտակին վաւերականութիւնը խնդրոյ առարկայ դարձնելը օրինական միջոցառումով: Անբարեխիղճ ճնշումներ հիւանդ մարդու մը վրայ կտակը կը գրկէին ազատ կամքի մը արտայայտութիւնը ըլլալու նախապայմանէն: Ստորագրութեան թուականը հասկնալի կասկածներ կ'արթնցնէր: Անշուշտ նման պնդումներ պէտք է փաստուէին: Գլխաւոր տուժողները Մատթէոս Մթիվն ու հանգուցեալին հարազատ երեք կիներն էին եւ իրե՛նք պէտք է որոշէին յաջորդ քայլը: Տակաւին կար Տորոթային ուրուականը:

Ուղեցի գիտնալ որ կը ճանչնայի՞ն կտակին բարերար-

եալները: Տիկին Մանուշ, որ լաւ ծանօթ չէր անգլերէն լեզուին, գլուխը շարժելէն ըսաւ թէ Մատթէոս Սթիվ Ռոտրիկէզ անունը ելեկտրական հոսանք մը անցուցեր էր յիշողութեան մէջէն:

– Ախպօրս սիրային արկածին պտուղն է, տղաս: Երեսունըութ տարի չէր տեսած, քանի՜-քանի՜ անգամ ըսած էի որ **չօճուխով** հետաքրքրուէր. ինչո՞ւ Ռոտրիկէզ դառնար... ինչո՞ւ Կարինեան չմնար...

Բաքսին կը ճանչնար Սիւզի Ուայթ Գոնթըր, անոր տունը գացեր էր ամառ մը Մէթին հետ: «Այդ կինը այնքան գոհ մնացեր է **անքըլին** ծառայութենէն, որ զինք յանձնարարեր է **փրայվէթ ինվէսթիկէթըրի** պէտք ունեցող իրեն ծանօթ մեծահարուստ կիներուն»: «Չմոռնամ», աւելցուց Բաքսին, «կարծեմ ա՛ն է որ **անքըլին սթաք մարքէթ** խաղալ սոր-վեցուցեր է»:

Միւս երեք կիները՝ Պոնիերի, Շին եւ Ալֆոնսին, անծանօթ էին: Մերին պոռթկաց.

– Չեմ կրնար ընդունիլ. ասիկա խայտառակութիւն է... երեւակայե անցեալ Զատիկին **անքըլ** Մէթը ի՛նչ ըսաւ. «Մերի, աղջիկս, գերեզմանիս վրայ պիտի պարես ուրախութենէդ», ըսաւ...:– Ա՛ս է... գործածուած ինքնաշարժ մը եւ քսանհինգ հազար տոլարի ողորմութի՛ւն... թող հետը տանէր:

Մերիին այտերը կարմրած էին, աչքերը՝ խոնաւ: Թերեւս չուզելով մեր ներկայութեան լալ, ոտքի ելաւ, համբուրեց մեծ մայրն ու մայրը եւ ջղային շարժումներով արագօրէն քալեց դէպի դուռը: Մեծ մօր «Ո՛ւր կ'երթաս» հարցումը պատասխան չստացաւ:

– Իրաւունք ունի... զայրանալը քիչ է... ըսաւ տիկին Մանուշ:– Ես անկողինի պէ՛տք ունիմ... Ես... Ես ի՞նչ պիտի ընեմ մէջինը: Թող դուրսինը տար...

– Դուրսինը ի՞նչ է, մամա, հարցուց Բաքսին զարմացած:

– Տո՛ւնը... տո՛ւնը, աղջիկս, գոնէ երեքս միասին կ'ապրէինք: Երթանք, ախպարս նորէն տակնուվրայ ըրաւ ամէնքս... Աստուած մեծ է:

Բաքսին մտաւ տիկին Մանուշին աջ թելը, ես՝ ձախը եւ

միասին առանց բառ մը արտասանելու կամաց-կամաց կառատուն գացինք: Սեւամորթ վերակացուն երբ ինքնաշարժս բերաւ տեղեկացուց որ ոստիկանութիւնը փակած էր Փրոսփէքթ պողոտան աջ կողմէն, որովհետեւ հինգ վայրկեան առաջ սուրացող թաքսի մը հակակշիռը կորսնցնելով մայթին վրայ ելած էր եւ զգետնած երիտասարդ կին մը:

Փետրուար 2010

Տորթ Լի, ՆՃ



ᐱ. ᐸᐸᐸ

ՆԱՄԱԿԱՆԻ ԿԱՄ ԴՌՆԲԱՑԷՔ ԿՈՐՈՒՍԵԱԼ ԱՇԽԱՐՀԻ

Մահէն քսանեւութ տարի ետք, ծննդեան հարիւրամեակի նախօրեակին, ան երեւցաւ հայ կեանքի կապար հորիզոնին վրայ սպիտակ պարեգօտով: Պարզուեցաւ որ վաղնջական մշակոյթին զաւակը մարմնին բոլոր հիւսկէններով կապուած էր անոր եւ անոր փառքին համար փխրուն կողերը բացած տէգերու:

Շահան Շահնուր նորէն կ'երեւի այսօր առաջինին կերպարանքով: Տեսարանը կը կազմեն 59 նամակ (145 էջ) եւ թուագրուած 332 ծանօթագրութիւն (82 էջ): Դարձեալ հրապարակագիր-արուեստաբան Գրիգոր Քեօսէեանն է զինք ներկայացնողը բայց այս անգամ երկու մեծարժէք դէմքերու՝ Գուրգէն Մահարիի եւ Անդրանիկ Անդրէասեանի ուղղուած անոր նամակներով: (**Շահան Շահնուր Նամականի**, Հատոր Երկրորդ, Մայրենի Հրատ., 2004:)

ՇԱՀՆՈՒՐ-ՄԱՀԱՐԻ

Թղթակցելու նախաձեռնութիւնը Մահարիինն է: Նամակագրութիւնը կը սկսի 1962-ին եւ կը շարունակուի կանոնաւորաբար մինչեւ Յունիս 18, 1969: Ամիս մը ետք անմահ վանեցին աչքերը կը փակէր:

Կը թուի թէ Մահարի կրկնակի աքսորով վերջապէս շահած էր վստահելիութեան վկայականը, որ արտօնած էր իրեն թղթակցելու ֆրանսահայ նշանաւոր գրագէտին հետ, ծրար ղրկելու եւ ստանալու. գրեթէ բացառիկ երեւոյթ մը սովետական բարքերուն մէջ: Քանի-քանի ամերիկահայ

գրողներու եւ գործիչներու աչքը ճամբան մնացած էր հայրենի գրագետի մը կամ արուեստագետի մը երկտողին համար, որ կը յամառէր չգալ:

Ասիկա բարեբախտութիւն մըն է նախ երկու դժբախտ գրագետներուն համար, որոնց փոխադարձ հիացումին մէջ երբեմնի գաւառացին ու պոլսեցին գտան երջանկութիւնը իրենց հսկայ տաղանդներուն անաչառ վաւերացումին, գտնելէ ետք երկու հոգիներու եղբայրակցութիւն մը, որ, ի տարբերութիւն նախաբանին մէջ Քէօսէեանի հաստատումին, չի բացատրուիր լոկ Սովետ Հայաստանի եւ գրչեւոր նկատմամբ Շահնուրի անվերապահ կեցուածքով:

Մահարի եւ Շահնուր տարեկից են: Առաջինը, երկու օրով երէց, հալածուած է «Հայր» Ստալինէն, երկրորդը՝ «եղբայրներէն»: Առաջինը վիշտը շալկած է սառուցեալ անտառներու մէջ, երկրորդը վշտին հետ պառկած՝ սառած սաւաններու վրայ: Առաջինը ձաղկած է յեղափոխութիւն խաղացողները անկրկնելի երգիծանքով եւ հեզնանքով, երկրորդը ձաղկումը ըստ էութեան հարազատ գտած՝ ազգային ան-կուսակցական գաղափարախօսութեան:

Լոյս տեսած նամակներուն ծանրութեան կեդրոնը Գուրգէն Մահարիի **Այրուող Այգեստաններ** վեպին¹ Շահնուրի «քաղաքական» արժեւորումն է իբրեւ ուղիղ, ճիշդ, անոխակալ եւ բարեգութ բնութագիր վերջին հաիւրամեակի մեր պատմութեան մէկ տասներորդ ժամանակին՝ վայրի մը մէջ, որ Հայաստանն իսկ էր եւ որմէ աւելի Հայաստան չկար:

«Երջանկութիւնս մեծ եղաւ», կ'ըսէ Շահնուր, «երբ հաստատեցի թէ դուն կը մտածես ճիշդ ա'յն, ինչ որ ես կը մտածեմ մեր «յեղափոխականներու» գործին մասին: Եթէ գիտնաս թէ քանի՛, քանի գիշերներ, խմբուած փարիզեան

1. Գուրգէն Մահարի, **Այրուող Այգեստաններ**, Հայաստան Հրատարակչութիւն, (Երեւան, 1966), 622 էջ

սրճարանի մը մէկ անկիւնը, մենք դատապարտած ենք այդ գործը, ճիշդ քո՝ Բառերովդ-«արդիւնքը», «հետեւանքը»:² Բայց ի՞նչ էր այդ գործը եւ որո՞նք էին զայն կատարողները: Հին ըմբռնումով՝ **Այգեատաններ**-ուն ենթախորագիրը պիտի ըլլար՝ Վէպ Իրական Կեանքէ- Հ. Յ. Դաշնակցութեան Գործունէութիւնը Վանի Մէջ 20-րդ Դարուն Սկիզբը:

Այդ գործը սկսաւ երբ 1903-էն յաջորդաբար Վան մտան երեք ոչ-վանեցի դաշնակցական յայտնի գործիչներ՝ Իշխան (բուն անունով Նիկոլ Պօղոսեան), Արամ Մանուկեան (Արամ Փաշա, բուն անունով Սարգիս Յովհաննիսեան), Արշակ Վռամեան (բուն անունով Օննիկ Դերձակեան), զայն յեղափոխականացնելու առաքելութեամբ, եւ վերջացաւ 1915-ի Օգոստոսին Վանի պարպումով եւ մոխրացումով: Երեքէն առաջինն ու երրորդը նահատակուեցան ապրիլեան հերոսամարտին նախօրեակին:

Դէպքերու այս չոր շարայարումէն սխալ պիտի ըլլար պատճառի եւ հետեւանքի աղերս մը եզրակացնել, բայց ոչ մէկ տարակոյս պէտք է ունենալ որ Մահարիի օգտագործած գրաւոր եւ բանաւոր ատաղձը, միանալով իր ալ անձնական ծանօթութեան, վաւերական է: Վէպը քննադատութիւնն է գործիչներուն *գործին*, վերաբերումին զոր անոնք ցուցաբերեցին Վանի հայութեան նկատմամբ, բռնարարքներուն զորս ի գործ դրին ընդհանրապէս կուսակցական մենատիրութիւն հաստատելու եւ ամրապնդելու նպատակով:

Այդ գործը դեր մը ունեցա՞ւ Վանի մոխրացումին մէջ կամ եթէ տարբեր եղած ըլլար ան, արդիւնքն ալ տարբեր կ'ըլլա՞ր: Մահարի, որ 29 տարիներ երկարող ժամանակի մը մէջ աշխատած է վէպին վրայ, կը թուի հաստատական պատասխան տալ: Բայց ասիկա չի նշանակեր որ վէպին «կեդրոնա-

2. Գրիգոր Քէօսեան, իսմբ., **Շահան Շահնուր Նամականի**, Հատոր Երկրորդ, (Մայրենի Հրատ. 2004), 74

կան դրոյթն էր հայ ազատագրական շարժումի պատասխանատուութիւնը՝ Մեծ Եղեռնի իրագործումին մէջ», ինչպէս կը հաստատէր յօդուածագիր մը, երբ կ'ակնարկէր հայրենաբնակ անոպաներու «հայրենասիրական» ճաշակին:³ Վէպը բնականաբար կ'անդրադառնայ Վանի 1915-ի ինքնապաշտպանութեան, բայց, հակառակ նոյն յօդուածագրին հաստատումին,⁴ անոր նուիրուած չէ:

Սովորական դարձած է հայկական յեղափոխութիւնը նոյնացնել հայ ազատագրական շարժումին հետ: Բնաւ նոյնը չեն: Առաջինը պարունակեալ է, երկրորդը՝ պարունակող: Առաջինը կ'ընդգրկէ 30 տարուան շրջան մը (1885-1915), երկրորդը ծնած է հայուն հետ: Առաջինը անցուղի մըն է, երկրորդը՝ մայրուղի: Առաջինին *մոտէլը* արքայասպան Ռուս յեղափոխականն է, երկրորդը ի'նք *մոտէլ* է: Առաջինը Ռուսական Սոցիալ Դեմոկրատիայի ծունկերուն առջեւ մերկութիւնը ծածկեց տնտեսաքաղաքական վարդապետութեան մը՝ մարքսիստական սոցիալիզմի շապիկով, երկրորդը վրայէն չհանեց հայոց պատմութեան վերարկուն: Առաջինը ինքզինք կոչեց Սուրբ Գործ եւ իր կոչումը արդարացնելու համար անմեղ հայու արիւն ալ թափեց, երկրորդը Սուրբ Հոգի է, ցկեանս ու դարեր անէծքով կը կալանէ մատնիչն ու դաւաճանը: Առաջինը երբեմն իր ժողովուրդին ներկայացաւ ինքնահաւան եւ խռովարար աշկերտի դէմքով, երկրորդը եղաւ մշակ առանց ամօթի եւ կեանքի վարպետ իր ժողովուրդին համար:

Այգեստաններ-ը կը քննադատէ ազատագրական շարժումին կոտորակը, յեղափոխութեան խռովարար աշկերտի երեսը, այն որ հետագային արուեստականօրէն երեւցաւ

3. Վարդան Մատթէոսեան, «Անտոնինա Մահարիի Անվերջ Ողիսականը» («Յառաջ» Օրաթերթ, Փարիզ, Փետրուար 26, 2003), 2

4. Անդ

սփիւռքի գաղութներուն մէջ ալ եւ թշնամացուց եւ հեռացուց զանգուածները: Մնացեալին վերաբերող քննադատութեան պատճառը վանեցին չէ, այլ Վանը խաւարի մէջ պահած թո՛ւրքը:

Քննադատութիւնը հայրենակցական, կուսակցական եւ մաշկագլխային գերզգայնութեամբ դիմաւորողներուն համար յանձնարարելի հանդարտեցուցիչ մը պէտք է նկատուի Շահնուրի վկայութիւնը. «[Սիրելիդ իմ Մահարի] ... քու քննադատութեանդ մէջ տեղ չէր գտած ո՛խը: Արդէն չէր կրնար գտնել: Ան որ գիտէ տեսնել գիրին ետեւը, ան որոշակի կը տեսնէ քու անսահման բարութիւնդ, քու մարդկային զգացումներուդ խորութիւնը: Սրտառուչ սիրոյ եւ անհուն կարօտի կոթող մըն է Այգեստաններդ».⁵

Աննման **Այգեստաններ**-ուն արուեստը փառաբանող Շահնուր, որուն նուիրուած է վեպին Ասք Առաջինը «մեծ սիրով», չէ վարանած ի՛ր դիտողութիւնն ալ բանաձեւելու. «...միթէ նախընտրելի չէ՞ որ այս տեսակ նիւթի մը առջեւ (որ սիրտ պիտի ծակէ, ինչ որ ալ ընենք) ի սպաս դրուէր գրութեան այնպիսի շեշտ մը... որ ըլլար նուազ «երջանիկ»: Խայտանքը, գորովայիր քաշքշուքը, բարեմիտ ծաղրը ըլլային աւելի եւս սքողուած».⁶

«... նախընտրելի պիտի ըլլար որ քու ողբերգական պատմութեանդ համար գործածած ըլլայիր քիչ մը նուազ գուարթաբանութիւն»:⁷

Օր մը երբ Մահարիի գրած նամակները լոյսին գան, թերեւս բացատրեն, թէ ինչո՛ւ խորագրի համար իրմէ խնդրուած եւ Շահնուրի ըրած թելադրութեան—**«Հովն Հրձիգին Մեղսակից Էր»**⁸—«հով»ը դարձած է վերջին, 27-րդ

5. Քէօսէեան, նշեալ երկ, 74

6. Անդ

7. Անդ, 75

8. Անդ, 19

Ասքին բնաբանին մէջ «ծով»—«Ծովն հրձիգին մեղսակից էր...»—եւ պարունակեն պատասխանը «նախընտրութեան» մակարդակի վրայ ներկայացուած դիտողութեան: Մինչ այդ վէ՛պը կուտայ Մահարիի «պաշտպանողականը»:

Մահարի առաքելութիւն մը ունի: Կը կոտորէ բոլոր ապակիները, իր բառերով, որպէսզի ընթերցողը դառնայ վանեցի, տեսնէ եւ զգայ Վանը, որովհետեւ ինքզինք հաշուետու կը նկատէ գալիք սերունդներուն, կ'ուզէ որ անոնք լսեն «ապագայի ձայնը», իրենք զիրենք չդատապարտեն «ձայնագրկութեան», չվերածուին անպէտ մարդոց:⁹

Ողբերգութիւնը ահաւոր էր—դրախտը չկայ, անոր խաղաղասէր ժողովուրդը չկայ: Պէտք է լալ ողբագին, բայց Մահարի կը ծիծաղի շատ յաճախ: Ինք պատմաբան, բանասէր կամ հրապարակագիր չէ, իր գործը չէ սնած «արխիւների փոշով», հետեւաբար ինչո՞ւ կոտորէ ընթերցողին սիրտը:¹⁰ Քանի՞ հազարերորդ անգամ անոր սիրտը պէտք է կոտորի: Եւ կարելի՞ է լալով լսել ապագայի ձայնը:

ՇԱՀՆՈՒՐ-ԱՆՐԷԱՍԵԱՆ

Նամակագրութեան նախաձեռնութիւնը Անդրանիկ Անդրէասեանինն է, որուն հրապարակագրութիւնը տասնամեակներ յափշտակուեցաւ Սան Ոգին հովիտի խաղողին եւ չամիչին նման Գալիֆորնիոյ սահմաններէն շատ հեռու վայրերու մէջ: Շահնուրի Մարտ 12, 1934 թուակիր պատասխանը առաջինն է լոյս տեսած 25 նամակներուն, որոնք երկար տարիներու ընդմիջումներով կը շարունակուին մինչեւ Յուլիս 1, 1970:

9. Մահարի, նշեալ երկ, 402

10. Անդ, 6

Մահարիի ուղղուած նամակներուն մէջ Շահնուր ճիգ թափած էր ծանօթացնելու ֆրանսահայ գրական եւ ընկերային միջավայրը, «սրբագրելու» կարգ մը դէմքերու— Զօպանեան, Շուշանեան—մասին անոր «թիւր» կարծիքը: Ստանձնած էր ուսուցանողի դեր՝ հիմնաւորումներով, առանց վիճելու: Անդրեասեանի հետ կայ յանդիմանութեան երթելէկ մը:

1934-ի պատասխանէն երեք ամիս առաջ Նիւ Եորքի մէջ Առաջնորդ Ղեւոնդ Արք. Դուրեան դաշունահար տապալած էր խորանին առջեւ: Յայտնի չէ թէ Անդրեասեան ոճիրէն առաջ թէ ետք գրած է իր նամակը. յամենայն դէպս մթնոլորտը արդէն անշնչելի էր եւ հաւանաբար ան Շահնուրէն կը պահանջէր կեցուածք ունենալ: Բայց Շահնուր որ սիրած է «ընկերոջ» լեզուն, ոճը... հոգիով լեցուն (կը յիշեցնէ Թեքէեանի արժեւորումը Անդրեասեանին), չէ սիրած անոր «ուղղութիւնը»: Յաջորդ տողը կը բացատրէ իմաստը «ուղղութիւն» բառին:

Ան դժգոհ է որ Անդրեասեան իր ուժերը կը սպառէ լրագրական «ամուլ պայքար»ով, փոխանակ գրականութեամբ զբաղելու, որովհետեւ, ըստ իրեն, մեր մէջ չկան նախադրեալներ լրագրի մը քաղաքական գործունէութեան համար. գոյութիւն չունի հանրային կարծիք, ժողովուրդը յիշողութիւն չունի, *«երեկուան սխալները մոռնալով նոյն ապիկար վարիչները [կը] փառաբանէ»*:¹¹ Ան խոր սէր մը ունի հանդէպ գրականութեան, բայց նաեւ ոյժ չունի կոռուելու, որովհետեւ երկու տարիէ ի վեր առողջութիւնը կորսնցուցած է, ճիշդ ենթադրութեամբ մը, վերջնապէս:

Հայկական լրագրութենէ խորշող Շահնուր քաջ գիտէ ժամանակակից հայոց պատմութիւնը, աւելի լաւ քան ակադեմականներ, պատմաբաններ եւ խմբագիրներ: Տեղ մը

11. Քեօսէեան, նշեալ երկ, 91

կ'ըսէ որ Թէքէեանէն ստրված է շատ բան: Հետաքրքրական է որ Ֆրեզնոյէն Մանուկ Ճիգմէճեան, հեղինակ պատմագրական գործերու, իրեն դիմած ըլլայ պատմական ստոյգ տեղեկութիւններ ձեռք բերելու, հաւանաբար Անդրէասեանի յանձնարարութեամբ: Եւ Շահնուր կը գրէ. «*Ըսէ բարեկամիդ որ... Հայկական Լեզէոնը կազմուած է բերանացի խօսակցութենէ մը վերջ (ընդմէջ Պօղոս Նուպարի եւ Picot-ի), որով նաեւ թուղթ-գիր չկայ մէջտեղը: Պետութիւնները մեզ բնաւ գրաւոր խոստում չեն տուած*»:¹²

Հիմա դիմենք Հայկական Հանրագիտարանի **Հայկական Հարց** հատորին (Երեւան, 1996). «*Հայկական Լեզէոնը կազմաւորուել է Մարք Սայքսի, Ժորժ Փիքոյի եւ Հայ Ազգ. Պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպարի միջեւ Լոնտոն կնքուած (1916-ի Հոկտ. 27) համաձայնագրի հիման վրայ*»: (Ընդգծումը իմա:) Հանրագիտարանը սխալ է, Շահնուր՝ ճիշդ:

Հոկտեմբեր 27, 1916-ին, Լոնտոնի մէջ Պօղոս Նուպար տեսակցութիւն մը կ'ունենայ Ժորժ-Փիքոյի հետ: Հայ գրողներ եւ Քէօսէեան (Ծնթգրթ. թիւ 300) կա'մ կը կարծեն որ այս ֆրանսացի դիւանագէտին անունը Ժորժ է, մականունը՝ Փիքօ, կա'մ կարճ կապելու համար կը գործածեն միայն Փիքօ անունը: Charles Marie François Georges-Picot գուրգուրացող մըն էր գաղթապետական Ֆրանսայի շահերուն: Անոր հետ Նուպարի տեսակցութեան ներկայ կ'ըլլան Սըր Մարք Սայքս, անգլիացի ճանապարհորդ եւ միջին-արեւելեան հարցերու դիւանագիտական խորհրդատու Անգլիոյ կառավարութեան, Յարութիւն Մոստիչեան եւ հայազգի Ճէյմզ Մէլքըմ (Malcolm), որ կապեր ունէր Անգլիոյ կառավարական շրջանակներու հետ:

Հայոց ձեռքը գտնուող միակ գիրը այդ տեսակցութեան

12. Անդ, 123

մասին Պօղոս Նուպարի յուշագիր-տեղեկագիրն է, որուն մէջ կ'ըսէ թէ տեսակցութեան աւարտին ինք ամփոփած է իրենց խօսակցութեան կէտերը, որոնց բոլորին մասին Ժորժ-Փիքօ եւ Սայքս վերահաստատած են իրենց կատարեալ համաձայնութիւնը:

Կ'արժէ թուել գլխաւոր կէտերը, որոնց հիմամբ հազարաւոր հայ երիտասարդներ աշխարհի չորս կողմերէն Կիպրոս վազեցին մարգուելու եւ Ֆրանսայի դրօշին տակ թուրքին դէմ կռուելու:

- 1) Նուպար պիտի հեռագրէ Եգիպտոս՝ քաջալերելով կամաւորներու արձանագրութիւնը...
- 2) Կամաւորները պիտի չկռուին ֆրանսայի մէջ կամ եւրոպական ճակատի վրայ, այլ պիտի օգտագործուին այլամերժօրէն Ասիական Թուրքիոյ մէջ՝ կռուելու իրենց դարաւոր թշնամիին դէմ՝ ազատագրելու իրենց պապենական երկիրը:
- 3) Ֆրանսա կը խոստանայ, յետ դաշնակիցներու յաղթանակին, ինքնավարութիւն շնորհել Կիլիկիոյ, երեք նահանգներու միացումով, իր պաշտպանութեան տակ:¹³

Իրաւաբան Տիգրան Յ. Պօյաճեան, որ լեզեոնական մըն էր եւ ազգային բեղուն գործունէութիւն ունեցած ամերիկահայ գաղութին մէջ, ճիշդ կերպով կը ներկայացնէ տեսակցութիւնն ու համաձայնութիւնը, բայց հարեւանցի յիշատակումով մը սխալմամբ ա՛յդ տեսակցութեան մէջ կը տեղադրէ աղուէս Ժորժ-Փիքոյի կեր-հարցումը, զոր ան ուղղած էր Պօղոս Նուպարին **նախապէս**, Հոկտեմբեր 24,

13. Vatché Ghazarian, ed. and trans., **Boghos Nubar's Papers and the Armenian Question** Documents (Waltham, Mayreni Publishing, 1996), p. 396

1916-ին անոր հետ դարձեալ Լոնտոնի մէջ ունեցած տեսակցութեան ընթացքին:¹⁴

Տեղեկագրողը Նուպարն է. «Պր. Փիքօ կ'անցնի իր բառով Հայկական Հարցին երկրորդ մասին եւ ինծի կը հարցնէ հայերը ի՛նչ ձեռով կրնային իրենց նպաստը բերել ինքնավար Հայաստանի մը ստեղծումին: **Կը խորհի որ եթէ անոնք կարենան քանի մը հազար կամաւոր տրամադրել, Ֆրանսայի մէջ հանրային կարծիքը նպաստաւոր պիտի ըլլար իրենց**»:¹⁵ (Ընդգծումը իմս:)

Պօղոս Նուպար վերոյիշեալ յուշագիրները գրած է ֆրանսերէն: Ասոնց եւ այլոց բնագիրները անհետացած են:¹⁶ Վաւերագիրներուն Արամ Անտոնեանի հայերէն թարգմանութիւնները կը գտնուին Հ.Բ.Ը.Միութեան Նուպարեան Մատենադարանը, Փարիզ: Անգլերէնը թարգմանուած է հայերէնէն: Զոյգ մէջբերումները անգլերէնին հայացումն են:

Հայոց ներկայացուցիչին հետ սակարկութիւնը աւարտած էր 1916-ի Հոկտեմբեր 27-ին, երբ արդէն հինգ ամիս առաջ, Մայիս 16-ին Անգլիա եւ Ֆրանսա նամակներու փոխանակութեամբ պաշտօնապէս վաւերացուցած էին իրենց բանագնացներուն՝ նո՛յն Մարք Մայքսի եւ Ժորժ-Փիքոյի գաղտնի մնալու սահմանուած համաձայնութիւնը՝ Օսմանեան Կայսրութեան ապագայ բաժանումին շուրջ: 1917-ին Լենին ազդանշանը տուաւ քաղաքական առեւտուրի շուկային վրայ իր ներկայութեան՝ պատռելով գաղտնիքին քողը:

89 տարի ետք տարօրինակ կը թուի գաղտնիքին... հայկական կողմը: Եւրոպացիներուն հետ խօսակցութեանց ընթացքին Նուպար կը պնդէր գաղտնապահութեան վրայ:

14. Տիգրան Յ. Պոյաճեան, **Հայկական Լեզեոնը** Պատմական Յուշագրութիւն, Հրատ. Հ.Բ.Ը.Միութեան Կեդր. Վարչ. Ժողովի, տպ. Պայքար (Ութրթաւուն, Մես., 1965), 7

15. Ghazarian, նշեալ երկ, 385

16. Անդ, xvii

Չէր ուզէր առիթ տալ թուրքերուն տարագիր հայոց հետ աւելի վայրագութեամբ վարուելու: Եւ մութին մէջ աշխատող Եւրոպացի դիւանագէտները, որոնք գաղտնաբար բաժնուած էին ակնկալուած աւարը, մեծահոգաբար հաւանութիւն կը յայտնէին: Հայ կամաւորներ պիտի արձանագրուէին Միջին Արեւելքէն Եւրոպա եւ Հիւսիսային ու Հարաւային Ամերիկաներ, զինուորական պատրաստութիւն պիտի ստանային, հանգանակութիւններ տեղի պիտի ունենային եւ... թուրքը լուր պիտի չունենար կամ պիտի կարծէր թէ հայ տղաք Կիպրոս օդափոխութեան կ'երթային Պօղոս Նուպար փաշայի օժանդակութեամբ:

Մեծագոր Անգլիան եւ Ֆրանսան պէտք ունէի՞ն քանի մը հազար հայ կամաւորներու: Ի հարկէ: Պատերազմողը դաշնակից կ'ուզէ – մեծ, փոքր կամ աննշան: Հայը կատարեց **բերանացի** համաձայնութեան իր պարտքը պատուով: Եւրոպան դրժեց իրը՝ ահաւոր անպատուութեամբ: Շահնուրի նշումէն պէտք չէ կրել այն տպաւորութիւնը, թէ գրաւոր համաձայնութեան մը արդիւնքը կրնար տարբեր ըլլալ: Երբեք:

Գրաւորի եւ բանաւորի պատմութիւն մըն ալ անտեղիօրէն կապուած է Կովկասի մէջ 1914-ին կամաւորական գունդերուն կազմութեան: Անոր պաշտպանները կը պնդէին որ Ռուսաստանի պաշտպանութեան ներքեւ Ամբողջական Հայաստանի մը ստեղծումը խոստացող նամակ մը ճամբայ ելած էր Փեթերգպուրկէն, բայց Թիֆլիսի Հայոց Առաջնորդարանը չհասած... կորսուած էր: Ամէն բան մոռցած՝ այս ինչքա՛ն կարեւորութիւն ընծայած ենք գրաւոր ապացոյցին:

Պօղոս Նուպար բազմերախտ հայուն կողմէ գլխաւորուած հայկական դիւանագիտութիւնը ըրաւ աւելին քան իր ձեռքը գտնուած խաղաքարտերը թոյլ կուտային: Ծով պահանջեց Եւրոպայէն՝ հայկական ծով արցունքին իրաւունքով, զոր Պերլին չգացած Խրիմեան գտած էր, բայց անկէ

բազմապատիկ ճարտարութեամբ: Ընդարձակեալ ինքնավար Կիլիկիան իր մէջ պիտի ընդգրկէր Սվազը, Տիարպէքիրն ու թերեւս Ալեքսանտրէթը: Գուցէ ունենար նաեւ գահ մը՝ անգլիացի իշխանագունով, բայց Ֆրանսայի հպատակ:

Դիւանագիտութիւնը միջնորդն է *խառն* եւ ընդհանրապէս ձախող ամուսնութեանց:

Մեր վերջին շուրջ երկու հարիւր տարուան արիւնոտ պատմութիւնը Շահնուրին, ինչպէս մեր ժողովուրդին լայն գանգուածին, ներկայիս բացառութեամբ գլխաւորաբար նախկին հայաստանահայերու *ինտելիգենտ* խաւի մը, բերած է այն համոզումին, որ «*Խորհրդային ըլլայ թէ այլ՝ Ռուս պետութեան հովանաւորութիւնը մեր ապահովութեան միակ երաշխիքն է*»:¹⁷ Եւ ինք որ երբեք չէ արտայայտուած Սովետական Հայաստանի դէմ, կը գանգատի Անդրէասեանին որ հայրենաբնակ յայտնի գրագէտներ չեն բարեհաճած նոյնիսկ երկտողով մը հաստատելու իր կողմէ իրենց դրկուած գրքերու ստացումը:

Յիսուն տարի առաջ գրողն ու միջին հայը Հայաստանի մէջ կ'ապրէին տարբեր մոլորակ մը. գաղափար չունէին սփիւռքէն: Հաւանաբար չէին ուզեր ալ ունենալ, եթէ արտագաղթելը կամ գոնէ արտասահման այցելելը իրենց երազներուն մաս չէր կազմեր:

Մոլորակը տեղէն չշարժեցաւ անկախութեան տասնըհինգ տարիներուն՝ հակառակ տեսակ-տեսակ համագումարներու: Եւ պիտի չշարժի: Հետեւաբար գաղափարախօսութեան մոսկովեան խոժոռադէմ բերդապահն ու անոր երկարող շուրջ միակ բացատրութիւնը պէտք չէ ըլլան նշմարելի խորթ երեւոյթներուն:

Երկարատեւ, յամառ ու ներշնչեալ դաստիարակչական աշխատանք մը միայն, հոն, առաւելաբար հո՛ն, դպրոցական

17. Քէօսէեան, նշեալ երկ, 142

գրասեղաններէն սկսեալ ամէն ճակատի վրայ, կրնայ յոյս ներշնչել **Մէկ ժողովուրդ, Մէկ Ազգ** նպատակին իրագործման:

*

* *

Այսօրուան եւ վաղուան ընթերցողին համար նամակները կը բանան շատ կարեւոր ու հետաքրքրական բայց մոռցուած, անծանօթ կամ դժուարութեամբ ծանօթանալի աշխարհ մը, ուր յոյժ բարեբախտաբար համարձակած է մտնել հատորը կազմող խմբագիրը վստահաբար ծանր աշխատանքով:

Կէտ մը, հարց մը, նիւթ մը ծանօթագրելու արժանի նկատելէ ետք, կայ պրպտումի յատկացուած անհաշիւ ժամանակը՝ հայկական աղբիւրներու անգտանելիութեան կամ անտրամադրելիութեան հոգեմաշ միջավայրի մը մէջ: Աւելին՝ հոս խմբագիրը կատարած է նաեւ գրաշարութիւնը հատորին: Հետեւանքը այն եղած է որ իր ընտելացած աչքը չէ կրցած թումբ կանգնիլ մեքենագրական սխալներու յորձանքին:

Քէօսէեան, բնոյթը անծանօթ աջակցութեամբ քանի մը յայտնի անուններու, որոնց կը հանդիպինք շնորհակալիքին մէջ, կրցածը ըրած է պատասխանատուութեան գիտակցութեամբ, մնացեալը թողլով ակադեմականներուն, անորոշ հասցէ մը, որ թէեւ նպատակայարմար կերպով կ'օգնէ անհրաժեշտաբար վերջակէտ դնելու, բայց չի ջնջեր ակնկալուած արդիւնքին մասին մեծ տարակոյսը:

Կ'արժէ պտըտիլ Քէօսէեանի ծանօթագրութեանց աշխարհին մէջ եւ ուշադրութեամբ դիտել մայրերուն վրայի անցուդարձն ալ: Ի վերջոյ հոն է որ կեանքը կ'եռայ, յայտնի եւ անյայտ դէմքեր իրարու կը քսուին, բայց հակառակ

բազմութեան հրմշտութիւն մարդիկ կը շարունակեն փնտռել իրենց ուզածը:

ՊՈՒԼԿԱՐԱՅԻ ԳՐԻԳՈՐ

Ընտանիքէն, Պոլսէն, թաղէն ու դրացիներէն իր սքանչելի վերյուշին մէջ, որ կը կոչուի «Ամէնուն Թեոդիկը», Շահնուր յուզումով եւ սիրով կը յիշէ Վանի 1915-ի հերոսամարտին քաջարի դէմքերէն Պուլկարացի Գրիգորն ու Պոլսոյ վանեցիները:¹⁸ Սակայն, Մահարիին ուղղուած նամակին մէջ յիշողութեան վրէպով մը զինք կը կոչէ Պուլկարացի *Արամ*:¹⁹ Քէօսէեան ալ, իր ծանօթագրութեանց տակ կ'ըսէ, թիւ 22-ին մէջ ուշադրութիւն չի դարձնէր սխալին:

Հայկական Հանրագիտարանի **Հայկական Հարց** հատորը (Երեւան, 1996) *Բուլղարացի Գրիգորին* մականուն կուտայ *Կոզէյան* եւ կը յայտնէ որ ան ծնած է Կարին, առանց թուական տալու, ապա ծնողաց հետ գաղթած Պուլկարիա: 1918-ին, Վանէն մնացորդաց գաղթին, անցած է Պարսկաստան, յետոյ՝ Իրաք: Հանրագիտարանը չի տար նաեւ անոր մահուան թուականն ու վայրը: Թերթերու հաւաքածոներէն հեռու ապրող հետաքրքիր ընթերցողին օգնութեան կը հասնի Շահնուրին... յիշողութիւնը: Եղած է Քերեսթէճեաններու դրացի: Շահնուր 18 տարեկանին տեսած է անոր փառաւոր յուղարկաւորութիւնն ու քրոջ հետ նշմարած վանեցի յուղարկաւորներուն... քիթը: Ուրեմն՝ հերոսը մեռած պէտք է ըլլայ 1921-ին, Սկիւտար:

Հերոսամարտին հրամանատար Արմենակ Եկարեանի եւ Կայծակ Առաքելի (կը կոչուէր նաեւ Ադա, Պայպուրթիցի

18. Շահան Շահնուր, **Բաց Տոմարը** (Մատենաշար «Յառաջ», Փարիզ, 1971), 129-130

19 Քէօսէեան, նշեալ երկ, 17

Տիգրան, բուն անունով Տիգրան Ապաճեան) հետ Պուլկարացի Գրիգոր երրորդ անդամն էր Այգեստանի Զինուորական Մարմնին: Կայծակ Առաքել դաշնակցական էր: **Հայկական Հարց**-ը չի յիշեր Պուլկարացիին կուսակցական պատկանելիությունը, բայց վանեցի ռամկավար ականաւոր ազգային գործիչ մը կը յայտնէ թէ ան դաշնակցական էր, եւ թէ ան «շատ աշխատեցաւ ռումբերու պատրաստութեան վրայ»:²⁰

Հայկական Հարց-ը կը տեղեկացնէ որ Պուլկարացին երեք թնդանօթ ձուլած է, մինչ ըստ Արտակ Դարբինեանի ան ձուլած է մէկ թնդանօթ, որ սակայն միայն ձայն կը հանէր: Հերոսամարտ մը, որ դպրոցական ֆանֆառով ալ մղուեցաւ, հարկաւ կրնար օգտագործել ռումբ չարձակող թնդանօթ մը: Եղելութիւնը Մահարին կ'ողբայ սովորական մահկանացուներէս տարբեր ձեւով. «*Բուլղարացի Գրիգորը հնարում էր առաջին հայկական թնդանօթը, որը, ճիշդ է, գնդակ արձակելու գործում մի բան չարժէ, բայց որոտալու տեսակէտից ետ չի' մնում իսկական թնդանօթից: Կարենորն արդէն որոտն է*»:²¹ (Ընդգծումը իրն է:)

Թնդանօթը ձուլում'՞ էր, «հնարում'՞», թէ շինուած, գնդա'կ կ'արձակէր, թէ որոտ, անկարելի է որ Վանի հայությունը քանի մը հարիւր հրացանով եւ ատրճանակով կարենար մէկ ամիս դիմադրել թրքական բանակին, եթէ չըլլային ամրաշէններու ջոկատը, հրաշագործ զինագործարանը, որ վառօդ ստեղծեց, անդադար զենք ու գործածուած փամփուշտները նորոգեց, եւ վարպետ զինագործ Պուլկարացի Գրիգորը: Տարիներ ետք, անոր կարգադրութեամբ, ըստ Շահնուրի, Թէոդիկ կը յաջողի տեսնուիլ թրքացած հայ

20. Արտակ Դարբինեան, **Հայ Ազատագրական Շարժման Օրերէն-Յուշեր 1890էն 1940**, Հրատ. Հայ Ազգային Հիմնադրամի, տպ. Արաքս (Փարիզ, 1947) 267, 284

21. Մահարի, նշեալ երկ, 532

նստիկանի մը հետ, որուն վկայութիւնը հայ հոգեւորականներու մասին, սեւ օրերէն, տեղ չէր կրնար ունենալ **Գողգոթա Հայ հոգեւորականութեան** վկայագրքին մէջ: Ատիկա Եկեղեցին եւ ժողովուրդը Գողգոթա տանող վշտի ուրիշ ճանապարհ մըն էր: Ան նաեւ պատճառ կ'ըլլայ որ ոստիկանը ընտանեօք վերադառնայ հայութեան՝ փախչելով Ամերիկա:

Նկատելի է որ Վանի այս պարկեշտ հերոսը չէ գացած Կովկասեան Հայաստան, ուր 1918-ի Մայիսին *դիկտատոր* էր Հ.Յ.Դ.ի Վանի երբեմնի գործիչ եւ կարճատեւ մը Վանի կուսակալ Արամ Մանուկեանը:²² Հաւանական բացատրութիւն մը կրնայ տալ Արմենակ Եկարեանի վկայութիւնը, թէ Պուլկարացի Գրիգոր չէր հանդուրժեր Արամ Մանուկեանը: «Ո՛ւր Արամ կայ, ես հոն չկամ», ըսեր էր ան, մերժելով մասնակցիլ խորհրդակցական ժողովի մը, եւ շարունակած. «Չեմ կրնար տանիլ իր ներկայութիւնը...ան գործի մարդ չէ, ազատ թողուցէք զիս, որովհետեւ ես հիմա ուրիշ գործի ետեւէ եմ. դարբին Կարիպճանեանի հետ թնդանօթ մը ձուլելու վրայ եմ»:²³

ԵՐՈՒՄԱՂԵՍԻ ՁԵՈՍՊԻՐՆԵՐՈՒՆ ՀԱՐՅԸ

Քեօսէեան թիւ 208 ծանօթագրութեան մէջ Երուսաղէմէն «*թագնօրէն դուրս հանուած*» ձեռագիրներուն համար կ'ըսէ, թէ թիւով 33 էին, եւ թէ անոնցմէ 23-ին վաճառքին առաջքը կարելի եղած էր առնել, վերջին պահուն, «*շնորհիւ ազգային*

22. Գաբրիէլ Լազեան, **Յեղափոխական Դեմքեր** Մտաւորականներ եւ Հայրուկներ, Հրատ. «Քրիստափոր Մատենաշար»ի, Բ. տպգրք. (Հալէպ, 1990), 194-198

23 Լեւոն Աճէմեան, խմբ., **Յուշեր Արմենակ Եկարեանի**, Հրատ. Հայ Ազգ. Հիմնադրամի, տպ. Նոր Աստղ (Գահիրէ, 1947), 208

արթնութեան»: Կը յիշէ Մարտ 14, 1967 թուականը, որ պարբերութեան կառոյցէն կրնայ նկատուիլ հաւասարապէս գայթակղութեան ծագման, ծրագրուած աճուրդին կամ աճուրդին ջնջման թուական, երբ անոնք արդէն վերադարձած էին Ս. Յակոբեանց գիրկը:

Հարցին շուրջ էական տուեալները խմբուած են **Ձեռագրերու Գողութեան Գայթակղութիւնը** գրքին մէջ, զոր շատ հաւանաբար կազմած, խմբագրած եւ հրատարակած է Շնորհք Արք. Գալուստեան:²⁴

Փարիզաբնակ փրոֆ. Սիրարփի Տէր Ներսէսեանն էր որ առաջինը կ'ըլլար հայերէն թանկարժէք ձեռագիրներու ժամանակակից մեծագոյն գայթակղութեան ահազանգը հնչեցնող: Իրեն ղրկուած վաճառքի գրացուցակէ մը տեղեկացած ըլլալով որ Սոթըպի եւ Ընկ. (Sotheby & Co.) հռչակաւոր տունը Լոնտոնի մէջ աճուրդով պիտի վաճառէր 23 հայերէն ձեռագիրներ, զորս ինք տեսած էր 1952-ին Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին մէջ, Փետրուար 12, 1967 թուակիր նամակով մը Երուսաղէմի Պատրիարք Եղիշէ Արք. Տէրտէրեանին եւ Կիւլպէնկեան Հիմնարկութեան, Լիզպոն, կը հաղորդէր պարագան:

Համազգային գայրոյթի եւ դատապարտութեան փոթորիկին դիմաց Եղիշէ Պատրիարք անտեղեակութիւն կը յայտարարէր եւ ապա կը կասեցնէր աճուրդը 23 ձեռագիրներուն, որոնք անհետացած էին Ս. Յակոբեանց գանձատունէն: Երուսաղէմի Դիւանապետ Շահէ Եպսկ. Աճէմեան, Լոնտոնի մէջ Սոթըպիի հետ բանակցելէ ետք, հատուցումի մը վճարումով կը յաջողէր այդ ձեռագիրները իրեն հետ Լոնտոնէն օդանաւով Ամման բերել Մարտ 11, 1967-ի երեկոյեան: Նոյն օրը գիշերուան 10-ին Պատրիարք, Միա-

24. **Ձեռագրերու Գողութեան Գայթակղութիւնը**, տպ. Օյա (Իսթանպուլ, 1969), 365 էջ

բանութիւն եւ ժողովուրդ Ս. Յակոբի զանգերուն աւետաբեր ու ցնծալից դօղանջով կ'ողջունէին տունդարձը գանձերուն:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան պատկանող (տեղը չէ ճառել ականդի եւ տիրութեան տարբերութենէն) ձեռագիրները ե՞րբ եւ ի՞նչպէս, այսինքն գողութեա՞մբ թէ արտօնութեամբ, դուրս ելած էին գանձատունէն ու յայտնուած Լոնտոնի մէջ, միջազգային վաճառատան մը սեղանին վրայ:

Անհետացման կ'առնչուէին անունները հետեւեալ հինգ բարձրաստիճան հոգեւորականներուն—Երուսաղէմի Պատրիարք Եղիշէ Արք. Տէրտէրեան, Կ. Պոլսոյ Պատրիարք Շնորհք Արք. Գալուստեան, որ 1957-1959 տարիներուն եղած էր Երուսաղէմի Լուսարարապետ, Երուսաղէմի աւագ միաբան Սուրէն Արք. Քէմհաճեան, որ 50-ական թուականներուն եղած էր վարիչ պատրիարքական գործոց, Երուսաղէմի Լուսարարապետ Հայրիկ Արք. Ասլանեան եւ Դիւանապետ ու Վերատեսուչ Ժոնգ. Վրժ.ի եւ Ընծայարանի Շահէ Արք. Աճէմեան:

Յորդանանի հաշէմական թագաւորութեան արդարութեան նախարարութիւնը Մարտ ամսուան սկիզբը կը ձեռնարկէր քննութեան մը: Երուսաղէմի դատախազին Մարտ 19, 1967 թուակիր բողոքագիրը գողնալու դաւով եւ 1959-ին կատարուած գողութեամբ կ'ամբաստանէր Շնորհք Արք. Գալուստեանը, Սուրէն Արք. Քէմհաճեանն ու աշխարհական մը՝ Ա.Ս., որ մահացած էր 1962-ին: Ըստ բողոքագրին, ձեռագիրները Լոնտոն տարուած էին Թուրքիոյ ճամբով: Հանրային կարծիքը մերժեց հաւատք ընծայել դատախազին քննութեան եւ բողոքագրին:

Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշանակեց Քննիչ Յանձնախումբ մը, որ Երուսաղէմ այցելեց, քննեց, հարցաքննեց եւ 1968-ին հայրապետին տեղեկագրեց, թէ ապացոյց չէր գտած Եղիշէ եւ Շնորհք պատրիարքները

յանցաւոր հռչակելու ձեռագիրներուն անհետացման արարքին մէջ: Առաջնորդուած ազգային-եկեղեցական-քաղաքական մտահոգութիւններով՝ Յանձնախումբը շեշտը դրած էր Երուսաղէմի գանձերը ապահով պահպանելու միջոցներուն վրայ:

Եղիշէ Պատրիարք եւ Շահէ Արք., որոնք շուրջ քառորդ դար ամենամտերիմ գործակիցներ եղած էին, 1981-ին խոտմեցան ցարդ չստուգուած պատճառներով: Թշնամութիւնը յանգեցաւ Շահէ սրբազանին Ս. Յակոբեանց Միաբանութենէն արտաքսման, որմէ ետք միայն 23 ձեռագիրներուն անհետացման յառաջացուցած առաջին երկու հարցումները գտան իրենց փաստացի պատասխանները—Այդ **ձեռագիրները 1966-ի աշնան, 3 օրերու ընթացքին, աճուրդով վաճառուելու նպատակաւ, բայց վաճառողին ինքնութիւնը գաղտնի պահելու խոստումով, Սոթըպի եւ Ընկ. տան յանձնուած էին պր. Տ.ի կողմէ՝ հրամանաւ եւ լիազօրութեամբ Երուսաղէմի Պատրիարք Եղիշէ Արք. Տէրտէրեանի: (Տես Սոթըպի եւ Ընկ. Տնօրէն Խորհուրդի անդամ Լորտ Ճան Քըրի (John Kerr) Մարտ 3, 1967 թուակիր նամակը Շահէ Եպսկ.ին եւ Ապրիլ 5, 1967 թուակիրը Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանին: Այս նամակները առաջին անգամ լոյս տեսան 1984-ին «Ամենա-անպատիւր» խորագրին տակ, պրակի մը մէջ, որ ինքնապաշտպանողականն է Շահէ Արք. Աճէմեանի:)**

Գաղտնապահութեան խոստումը յարգել չկարենալու խիստ հաւանականութիւնը եւ զայն յարգելու հետեւանքով աճուրդին հաւանական անկարելիութիւնը կամ ձախողութիւնը՝ ձեռագիրներուն Երուսաղէմ վերադարձին մոգական գաւազանը հայթայթած էին:

Ձեռագիրներուն անհետացման առնչուած բազմաթիւ այլ հարցեր դեռ չեն լուծուած: Ամենէն կարելորը՝ Երուսաղէմի գանձատունէն թերեւս կը պակսին 4-5 ձեռագիրներ եւս նկատի առնելով որ, ըստ 1967-1968 տարիներուն կա-

տարուած եւ հերքուած կարգ մը յայտարարութեանց, անհետացած ձեռագիրներուն թիւը 27 կամ 28 էր: Այդ օրերուն կարծողներ կային, թէ 4-5 ձեռագիրները սեփականութիւնը դարձած էին սաղիմահայու մը՝ Մ.Մ., չվճարուած փոխառութեան մը դիմաց եւ թէ անոնք ի պահ կը մնային գուիցերիական դրամատուն մը, ենթակային արկղին մէջ:

Հայ Երուսաղէմի գանձերը անկորուստ եւ ապահով պահպանելու համար տասնամեակներէ ի վեր եղած գրաւոր եւ բանաւոր բոլոր յանձնարարութիւնները կը մնան մեռեալ տառ՝ անտարբեր, նիւթական պարտաւորութիւններէ խոյս տուող եւ հետեւաբար անգոր հանրութեան մը աչքին առջեւ, սառնարիւն մեղսակցութեամբ Ս. Յակոբի հացով, ջուրով եւ լոյսով սնած ազգայիններու եւ հոգեւորականներու:

Կարելի՞ է գանազանել խիղճը հոգեւորականին, որ նիւթեղէն գանձեր գաղտնապէս վաճառելու ծրագիրը գուցէ արդարացնէր քաղաքական վառ հրաբուխի մը եզերքը Վանք մը ապրեցնելու, այսինքն սրբատեղի եւ իրաւունք պաշտպանելու, 100-150 միաբան եւ ժառանգաւոր խնամելու, դպրոց, ուսուցիչ եւ պաշտօնեայ պահելու, վանքաբնակ ժողովուրդին երդիք ու երբեմն հաց տալու հարկով, եւ խիղճը հոգեւորականին, որ եղեմական պայմաններու տակ Հայկական Ս. Պատարագը կ'եղծէ եւ կը քարկոծէ Մայրենին՝ Հայց. Եկեղեցւոյ ղեկավարներ հասցնելու եւ հաւատացեալները Կենաց Բանով կշտացնելու պատրուակով: Եթէ այո՝ որո՞ւն խիղճն է նուազ քարեղէն:

Աղբիւր Սերոբ

Աղբիւր Սերոբ կամ Սերոբ Աղբիւր կամ Սերոբ Փաշա (Վանի եւ Տարօնի մէջ «փաշա» տիտղոսը կը գործածուէր թուրք, քիւրտ եւ հայ գեղջուկներու կողմէ, նաեւ «պարոն»՝

հայերեն) ծնած էր 1864-ին Ախլաթ (Խլաթ) գաւառի Սոխորդ գիւղը: Թուրքերու եւ քիւրտերու դէմ հայդուկապետին ղեկավարած մարտերը ինչքա՞ն բախտորոշ եղած են կամ Քէօսէեան ի՞նչ կը հասկնայ թիւ 216 ծանօթագրութեան «բախտորոշ» բառով, բացատրութեան կը կարօտի:

Երանի թէ հերոսը մեռնէր *«Սասնոյ լեռներու դիմադրական կռիւներուն ընթացքին թունաւորուելով թուրքերէն»*, ինչպէս կը հաւաստէ Քէօսէեան: Աղբիւր Սերոբ, որ թունաւորուած էր եւ ոտքի կանգնելու անկարող, **գլխատէցաւ** 1899-ի հաւանաբար Նոյեմբերին Սասուն գաւառի Կելէէկիւզան գիւղին մէջ, քիւրտ աշիրէթապետ Պշարէ Խալիլէն, որ հայդուկապետին գլուխը ցիցի մը վրայ պտըտցուց Մուշի եւ Բաղէշի մէջ:

Սերոբի հետ թաքստոցին մէջ էին կինը, երկու մանչ գաւակները՝ մին պատանի, միւսը երեխայ, երկու եղբայրները եւ ուր թիկնապահ: Պատանին կը մորթուի, եղբայրները հրացանագարկ կը սպաննուին, թիկնապահներէն չորսը իրեն նման թունաւորուած էին: Խալիլի գործիք Աւէ անուն սասունցի հայ մը թոյն խառնած էր Սերոբին տունը դրկած հացին մէջ եւ տեղը մատնած:

Այդ օր նախճիրէն կը փրկուի երկամեայ տղեկը, բայց որքան որ գիտենք, հետագային ան չէ գտնուած: Գերի կը բռնուի Սերոբի կինը՝ Սօսէ:²⁵ Տասնամեակներ ետք, Սօսէ Մայրիկն էր ան, լաչակաւոր, սեւ շրջագգեստի մէջ կորսուած, որ Շաբաթ երեկոները դուրս կուգար Հայոց Ափարթըմանէն, 72 յարկաբաժիններով եւ տասնեակ մը խանութներով Աղեքսանդրիոյ ազգապատկան հանրածանօթ շէնքէն, ընդառաջելով Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցւոյ զանգակներուն կիրակմուտքի հրաւերին:

25. Անդրանիկ Չելեպեան, **Զօրավար Անդրանիկ եւ Հայ Յեղափոխական Շարժումը** (Լոս Անճելըս, 1984), 124-125, 132

ԱՆՈՐԱՆԻՎ

Առասպելական ազգային հերոսը, որ կռուած էր Սերոբ Աղբիւրի խումբին մէջ, Սասնո՛յ Արծիւն է, ո՛չ թէ Վասպուրականի, ինչպէս ներկայացուած է թիւ 217 ծանօթագրութեամբ: Անդրանիկ, լսելէ ետք Սերոբը մատնող դաւաճան Աւէին խոստովանութիւնը, զինք սպաննեց իր իսկ տան մէջ, կնոջ եւ զաւակներուն հետ: «Ջնջեցինք, որպէսզի սարսափ ձգենք միւս հայ մատնիչներուն վրայ... որպէսզի քիւրտն ու թուրքը հասկնային թէ վրէժխնդիր է հայ ֆետային...», կ'ըսէ հերոսը:²⁶

Սերոբի նահատակութենէն ետք Անդրանիկ ընտրուեցաւ հայրուկներու ղեկավար եւ 1900-ի աշնան գլխատեց Պշարէ Խալիլը, ոտքի, երեսին զարնելէ ետք անոր ոճիրները: Գազանին պարկին մէջ էին Սուլթան Համիտի շքանշանն ու 40 հայ մատնիչներու կնիքները:²⁷

ԱՄԵՐԻԿԱ ԵՒ ՀՐԱՅԱՆ

Ամերիկեան հանրապետութեան խանձարուրին վրայ հսկած էին Յիսուս եւ հրացան, որոնց հաշտ ու խաղաղ համակեցութիւնը անհանգստացուցեր է Շահնուրը: Բայց N.R.A.-ի երկրին մէջ լոյս տեսնող «Պայքար» օրաթերթին հրատարակած «պատուելիական» յօդուածները, թերթին «վիրաւոր եւ...նեխոտ կողմը», այդ համակեցութեամբ չեն բացատրուիր:²⁸

Հին օրերուն ամերիկահայ գաղութը իր սնունդը կը ստանար հայերէն թերթերէն: Կրօնաբարոյական յօդուածներ

26. Անդ, 132

27. Անդ, 150, 153

28. Քէօսէեան, նշեալ երկ, 108-109

կարդալու պահանջը, գաղթական, անուս եւ դիրագրգիտ բազմութիւններ կրթելու նպատակը, նախանձախնդիր հոգեւորականներու պատրաստակամութիւնը նպատակին ընդառաջելու, կրօնին հետ ու անոր միջոցաւ հայկականութիւն պահելու եւ զարգացնելու վաղեմի կերպին փոխադրութիւնը թերթին էջերուն, յաճախ վարպետ գրիչներով, չէին կրնար անտեսուիլ հրատարակիչ կամ հովանաւոր կազմակերպութենէն եւ խմբագիրներէն:

Հիմա այլեւս գաղտնիք չէ մարդկութեան, որ Ամերիկան կ'արթննայ, կ'աշխատի օրական գոնէ 8 ժամ եւ քուն կը մտնէ Սահմանադրութիւնը ծոցին մէջ: Հոն գրուածները չեն նշանակեր գրուածը, կամ այն ինչ որ մահկանացուներս կը հասկնանք եւ հետեւաբար պէտք է զգուշանալ անոնց իմաստ հագցնելէ: Բայց կադապարը կրնանք ներկայացնել անվարան:

Քէօսէեան երբ կը խօսի National Rifle Association-ին մասին (N.R.A., Ծնթգրթ. թիւ 269), անոր իրաւական հիմը կը նկատէ «*Ամերիկեան Սահմանադրութեան առաջին 10 Բարեփոխուած Յօդուածներէն Երկրորդ(ը)*»: Հիմնաւորումը ճիշդ է, բայց ներկայացումը յստակութեան կը կարօտի:

Սահմանադրութիւնը, որ ի գործ դրուած է Սեպտեմբեր 1787-էն, կը բաղկանայ սկզբնական 7 Յօդուածներէ: Յաջորդ տարի Գոնկրէսը 12 յաւելումներ կ'առաջարկէ, որոնցմէ տասը նահանգները կը վաւերացնեն 1791-ին: Այս տասը, որոնք Սահմանադրութիւնը կը բարեփոխեն, Սահմանադրութեան **յաւելում** են, որովհետեւ սկզբնական ոչ մէկ Յօդուածի կ'առնչուին, ոչ մէկ Յօդուած կը բարեփոխեն եւ միասնաբար կը կոչուին Յուցակ Իրաւանց (Bill of Rights): Աւելին՝ այդ տասը երբեք չեն բարեփոխուած: Ուրեմն՝ զինակիր եւ զէնքի սիրահար ամերիկացիներուն իրաւունքներն ու շահերը պաշտպանող եւ ներկայացնող Հրագենի Ազգային Ընկերակցութեան իրաւական հիմը Սահմա-

նադրութեան Երկրորդ Յաւելուածն է, ոչ թէ «*Բարեփոխուած Յօդուածներէն Երկրորդ(ը)*»:

ՀԱՉԱԿԵԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Ինչ բարիք որ հայկական յեղափոխութիւնը իր ծննդեան պայմաններով կրնար բերել մեր ազգային դատին կամ թրքահայութեան կեանքի պայմաններուն բարելաման՝ կոտորակուեցաւ առաջին յեղափոխական կուսակցութեան Մեծ Բաժանումով, որ տեղի չունեցաւ 1906-ին, ինչպէս կը տեղեկացնէ թիւ 325 ծանօթագրութիւնը:

Մարքսիստական սոցիալիզմ եւ ազգայնականութիւն, համարատուութեան հրամայական եւ անկէ խուսափում, մենատիրական ղեկավարութիւն եւ դեմոկրատական վարչութեան պահանջ, ռուսահայ եւ թրքահայ աշխարհըմբռնումներ բախեցան ուժգնապէս եւ Յունուար 1896-ին Լոնտոնի մէջ յառաջացուցին անոր ցաւալի բաժանումը, կուսակցութեան կազմութենէն ինն տարի ետք:

Ճիշդ չէ նաեւ որ բաժանումէն ետք Աւետիս Նազարբէկեան «*իր կնոջ հետ կը գլխաւորէ կուսակցութեան ձախ թելը*»: Բաժանումէն առաջ եւ ետք, տրամաբանականօրէն կուսակցութիւնը չէր կրնար «ձախ թել» ունենալ: Նազարբէկեան ամուլի՝ Աւետիսի եւ Մարօ Վարդանեանի հիմնած Հնչակեան կուսակցութիւնը մարքսիստ սոցիալիստ էր ի սկզբանէ, ծրագրային մակարդակի վրայ, գէթ կարգ մը վարիչ մարմիններու եւ դէմքերու համոզումով:²⁹

Հնչակեան անունը կուգայ առաջին պաշտօնաթերթին «**Հնչակ**» անունէն, զոր թերթին սեփականատէր Նազար-

29. Արսէն Կիտուր, իմբ., **Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան, 1887-1962**, Ա. Հատոր, Հրատ. Ս.Դ.Հ.Կ. Պատմագրութեան Կեդր. Յանձնախումբի, տպ. Շիրակ (Պէյրուք, 1962), 616 էջ

բէկեան ընտրեց հետեւողութեամբ «Կոլոկոլ»-ի (Զանգ), անունը ռուսերէն թերթի մը: Անոր ղեկավարութեան ընդդիմադիր եւ ապա անջատուած զանգուածը, ա՛ջ թելը, եթէ կարելի է այսպէս կոչել, զանազան ածանցումներէ ետք, Հնչակեան անունէն վերջնապէս հրաժարեցաւ 1921-ին՝ իր ազգայնական գաղափարախօսութեան եւ ժողովրդավարական ըմբռնումներուն արտայայտութիւնը գտած ըլլալով Ռամկավար Ազատական Կուսակցութեան մէջ:

1909-ի Յուլիսէն Նոյեմբեր Պոլիս գումարուած Զ. Ընդհանուր Ժողովէն ետք, կուսակցութիւնը որդեգրած է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն անունը:³⁰ Պատմագիրքը չի տար անուանափոխութեան պատճառը կամ չի բացատրեր զայն: Սկզբնական շրջանին կուսակցութիւնը կապեր ունեցած է Եւրոպայի սոցիալիստ խմբակցութեանց հետ, բայց հաւանական չէ որ Հոկտեմբերեան Յեղափոխութենէն ետք անոնց հետ որեւէ յարաբերութիւն ունեցած ըլլայ:

1955-էն մինչեւ իր անժամանակ մահը 1976-ին, Յարութիւն Կուժունի, վարիչ դէմքը կուսակցութեան Լիբանանի շրջանակին ապա ատենապետը Կեդր. Վարչութեան, Լիբանանի եւ Սուրիոյ մէջ զայն մասնակից դարձուց արաբ սոցիալիստ-յառաջդիմական շարժումին՝ մէկ կողմէ թափ տալով կուսակցութեան ներկայութեան, միւս կողմէ նպաստելով հայութեան ազգային շահերուն:³¹ Մինչեւ այսօր կուսակցութիւնը կը նախընտրէ ձիգ պարանի մը վրայէն քալել հաշտեցնելու կամ արդարացնելու համար իր գաղափարախօսութեան ազգային եւ միջազգայնական երեսները:

30. Անդ, 325, 327

31. Պէպօ Սիմոնեան, խմբ., Լիբանանահայութեան Ղեկավարի Տիպարներէն՝ **Յարութիւն Կուժունի** (Պէյրութ, 2002), 91-94

Նոր Օր

Թիւ 291 ծանօթագրութիւնը ՌԱԿ-ի պաշտօնաթերթ եռօրեային «մայրաքաղաք» Ֆրեզնոյէն Լոս Անճելըս փոխադրութեան թուականը շփոթած է օրուան խմբագրին Լոս Անճելըսէն Տիթթոյիթ մեկնումի թուականին հետ: Տպարանին կազմածները փոխադրուեցան 1964-ի աշնան ոչ թէ 1968-ին:

Փոխադրութեան խնդրայարոյց եւ ներկուսակցական աղմկալից շարժումին գլուխը կը գտնուէր ՌԱԿ Գալիֆորնիոյ Շրջ. Վարչութեան լուսամիտ ու ձեռներէց ատենապետը՝ խարբերողի Գրիգոր Սառնեցեան, որ ամերիկացիներուն ծանօթ էր Հերի Սառնեց անունով:

Գնուած էր կալուած մը Փիքօ պողոտային վրայ, որ կը բաղկանար երեք խանութներէ եւ քանի մը ինքնաշարժներու կայքէ: Առաջին խանութը՝ տպարան-խմբագրատուն, երկրորդը՝ առաջինին անցքով մը միացած՝ սրահ, ուր ընդունեցինք հետեւեալ դէմքերը—Շնորիք Պատրիարք, Շահան Նաթալի, Արշակ Տիգրանեան, Արշաւիր Շիրակեան, Միսաք Թորլագեան, Վարդան Արք. Գասպարեան, Բենիամին Նուրիկեան, Հրանդ Ք. Արմէն, Թորգոմ Եպսկ. Մանուկեան, Համբարձում Պէրպերեան, Գնէլ Եպսկ. Ճերեճեան, Յարութիւն Կուժունի, Վիրճինիա Մամուլեան (մայրը Ռուբէնի), Անդրանիկ Ճաղարեան: Երրորդ խանութը վարձու տրուած էր:

Լոս Անճելըսի մէջ **«Նոր Օր»** կենակից ունեցաւ գրաշարական շատ գէշ տագնապ մը: Թերթին կարգ մը թիւերը լոյս ընծայեցինք վիրաւոր եւ հաշմ: Մտահոգութիւնը զայն տարեց բաժանորդներուն ժամանակին հասցնել էր ամէն գնով, որպէսզի անոնք չվարժուէին զայն չստանալու գաղափարին ու թերթը չփակուէր:

Քանի մը ամիս ետք Հ.Յ.Դ.ի պաշտօնաթերթ եռօրեայ **«Ասպարէզ»**ը, որ Ֆրեզնօ կը հրատարակուէր, հետեւացաւ **«Նոր Օր»**ի քայլին:

*
* *

Հին գանգատ մը, զոր Անդրանիկ Անդրեասեանէն լսած եմ 1961-ին, արձագանգած է Շահնուրի Մայիս 22 եւ Յուլիս 1, 1970 թուակիր նամակներուն մէջ, երբ առաջինը Պոստոնի շրջանէն նոր տեղափոխուած է Լոս Անճելըս եւ վերստանձնած «**Նոր Օր**»-ի խմբագրութիւնը:—Հայկական երկրորդական վարժարաններէ շրջանաւարտ տղաք եւ աղջիկներ, որոնք համալսարան աւարտած են՝ իր բարեխօսութեամբ կամ յանձնարարութեամբ հայկական հաստատութիւններէ կրթաթոշակ ստանալով, չեն աշխատակցիր իր թերթին:

Շահնուր երեւոյթը կը բացատրէ «*գործի հասութաբեր ասպարէզ*» նետուելու ձգտումով, որմէ հեռու չէ ապերախտութիւնը:

Բացատրութիւնը մասնակի է եւ հիմնուած ընդհանրացած տպաւորութեան մը վրայ, որ կը տեսնուի ցայսօր: Բայց Հայ Թերթին աշխատակցութիւնը սանդուխին տասներորդ աստիճանը պիտի ըլլար. նախորդող ինն աստիճանները, «հին հին դարուց յիշատակ», Մայր Արաքսը «ալեաց մէջը պտոռում» է արտասուելով... որովհետեւ ազգովին չկրցանք արգիլել Հայ Դպրոցին անհետացումը: Յեղափոխութեան եւ յեղափոխականութեան հակադրուող «*Պաշտպանողական-պահպանողական ազգայնականութիւնը*»,³² որուն շուրջ ստեղծուած համախոհութիւնը 1963-ին Շահնուր աւետեր էր Մահարիին, ա՛լ չունի դարբին ու դարբնոց:

Անհաւատալի կուրութեամբ չենք տեսներ, թէ ի՛նչ կ'ընեն հայկական վարժարանը շարժող եւ կառավարող «երեք» միացեալ ուժերը՝ հայ ծնողքը, չափանիշ քննութեանց մէջ փայլուն արդիւնքներու կամ աշակերտական յաջողութեան

32. Քեօսէեան, նշեալ երկ, 31

բարձր համեմատութեան հետապնդումը եւ պիտճէն:

Իրականութեան մէջ կայ միայն մէկ ոյժ—Հայ Ծնողը, քմայքոտ եւ շփացած յաճախորդը հայկական վարժարանին: Ան գիտէր իր ուզածը, գիտցածը ներարկեց եւ ուզածը ստացաւ գրեթէ լրիւ:

Վերջին քառասուն տարիները կը փաստեն որ հայուն զաւակը յաջողութեամբ խմորուեցաւ ու պատրաստուեցաւ արեւմտեան ուսումնարաններու համար՝ երջանկութիւնը... Արեւմուտքի մէջ փնտռելու նպատակով:

Քաղցրիկ մեներգ, կայտառ խմբերգ, շնորհալի պար, քիչ մը Թէքէեան, ճիշ մը Սիամանթօ, ափ մը Պարոյր Սեւակ եւ ալեխոով յուզում հաւատալ տուին որ հայկական վարժարանը կը կատարէ իր սրբազան պաշտօնը, ամենէն առաջ կը պատրաստէ շատ լաւ հայեր, հմուտ իրենց լեզուին ու պատմութեան, հպարտ իրենց մշակոյթով, պահանջատէր ու յանձնառու, առաւել՝ փայլուն թեկնածուներ *«արեւմտեան բարձրագոյն ուսումնարաններու»*, ինչպէս վերջերս կը պատգամէր առջինէկ ուխտին տենչերը վերապրող լոս անճելըսաբնակ տէր հայր մը: Այս ցնորքը ազգը իր բոլոր խաւերով գնեց իբրեւ իրականութիւն:

90 տարի առաջ հովը տարաւ, հուրն ու ծովը լափեցին մեր մարմինն ու հողը: Հովը տարած է մեր տարագիր կեանքին թագաւորութիւնը՝ Հայ Դպրոցը, բայց զայն կարելի է վերականգնել եթէ յայտնուի կամքը կրթական գործը ազատելու գնչուներու քմահաճոյքէն, ժամանակի մը համար աչք առնելով աշակերտներու թիւի կորուստ, պիտճեական բացերու ընդարձակում, նոյնիսկ դպրոցներու փակում կամ վաճառք:

Կրթական ազգային քաղաքականութիւն մը, ազատագրուած սովորամոլութեան կապանքներէն եւ արդի նշանախօսքերու հիւանդութենէն, նոր մօտեցումներու խիզախ կիրարկումով, մէջտեղ պէտք է բերէ նոր ու իրաւ Հայ

Դպրոցը՝ շաղախն ու շաղկապը Հայութեան, Գիրին, Հաւատ-
քին, Հայրենիքին:

Օգոստոս-Սեպտեմբեր 2005
Ֆորթ Լի, ՆՃ

ԱԾՈՒՆ 21-ՐԴ ԴԱՐՈՒՆ

Զի թեպէտ եւ եմք ածու փոքր եւ թուով յոյժ
ընդ փոքրու սահմանեալ... սակայն բազում գործք
արութեան գտանին գործեալ եւ ի մերում
աշխարհիս, եւ արժանի գրոց յիշատակի....

Սովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց Ա. գ.
Վենետիկ, 1881

այ Լեզու, Հայ Դպրոց, Հայ Թերթ, Հայ Եկեղեցի նշանակութիւն ունէին վերապրելու պայքար մղող հայութեան համար:

Մեր ժամանակակից պատմութեան մէջ այդ պայքարը սկսաւ 1915-ին, ճիշդ այն պահուն երբ երեսնամեայ Շարժումը, այն որ կը կոչուի Հայկական Յեղափոխութիւն, աւարտեցաւ Թրքահայաստանի եւ մէկուկէս միլիոնին կորուստով:

Հայութիւնը վերապրելու պայքար չի մղեր այլեւս. վերապրած է: Աներեւակայելիօրէն աճած է թիւով (կը խօսուի յանուն տասը միլիոնի), աներեւակայելիօրէն՝ հարստացած. զաւակները աներեւակայելիօրէն բարձր դիրքեր կը գրաւեն գիտահետազօտութեան, գիտութեան, արհեստագիտութեան, ֆինանսի, ճարտարարուեստի, քաղաքականութեան, արուեստի եւ ազատ ասպարէզներու բնագաւառներուն մէջ, եւ հետեւաբար Հայ Լեզու, Հայ Դպրոց, Հայ Թերթ, Հայ Եկեղեցի նշանակութիւն չունին իրեն համար: Չեն կրնար ունենալ:

Ե՞րբ վերջ գտաւ վերապրելու պայքարը: Դժուար է ըսել,

որովհետեւ ան կապուած չէ ցնցիչ դէպքի մը. ընթացք մըն էր, որ նաեւ զուրկ չէր համագգային յուզումի եւ յոյսի պարբերական պոռթկումներէ:

Բայց հայութիւնը չի կրնար հրաժարիլ պայքարէ... եւ կայ պայքարի տեսակ մը, զոր ան երբեմն կը մղէ անդիմադրելի, խենթենալի՝ ք կարգախօսներով—Պոունցք, Յեղասպանութեան Ճանաչում, Անկախութիւն, Արցախ, Մէկ Ազգ Մէկ Մշակոյթ, Մէկ Եկեղեցի Մէկ Ժողովուրդ, Տնտեսական Զօրութիւն, Ուիլսընեան Սահմաններ, Generation X, VOCH:

Եւ խաբէութիւնը կամ ինքնախաբէութիւնը կ'արշաւէ զրահապատ կառքերով դէպի տեսանելի հորիզոններ:

Նոյեմբեր 2009



Դահուան հրեշտակը մէկ ձեռքով անյայտին կը տանի պատանի կամ երիտասարդ նաեւ հասուն, բայց վայրագօրէն ինկած, տաղանդները, միւսով զանոնք կը զմռսէ անմահութեամբ:

Քանի մը սերունդ եւս կարգ մը հայեր, ճիշդ հիմակուան պէս, հոս-հոն, այս կամ այն առիթով, պիտի լսեն Պետրոս Դուրեան, Միսաք Մեծարենց, Դանիէլ Վարուժան, Սիամանթօ, Ռուբէն Զարդարեան, Եղիշէ Չարենց, Պարոյր Սեւակ անունները: Ես հիմա աւելի տարիքոտ եմ քան դաշունահար Արփիարը եւ թոպամահ Զօհրապը: Ես արդէն չկամ: Տարեցոյցը զիս կը կոչէ ծեր:

Բայց եթէ օր մը տղաք կամ աղջիկներ լուսանկարս եւ անունս տեսնեն հայերէն լեզուի դասագրքի մը մէջ, ինձմէ էջի մը կողքին, պիտի չգիտնան որ զայն գրողը իր «անմահութիւնը» կը պարտի եօթն օտարի մը, որուն անունն է Bill Gates: Առանց անոր Բանին, բանս բուրդ պիտի ըլլար եթէ

փորձէի պատմուածք, նորավէպ կամ վէպ գրել: Պատճառը գիտեն անոնք որ դժբախտութիւնն ունեցած են հարկադրաբար վերծանելու գրառումներս: Դժբախտներուն առաջինը՝ ե՛ս:

Դեկտեմբեր 2009



Պենսագիր մը պարտաւոր է ժամանակ խլող պրպտումներով եւ ստուգումներով հաստատելու կամ վերականգնելու իր ենթակային կեանքին եւ մահուան պարագաները: Յուշագիր մը պարտաւոր է բարեխղճօրէն պատմելու յիշուող անձին հետ իր ունեցած կապը, անոր կեանքին եւ գործին առնչուող դրուագները:

Կարելի է ըսել եւ անվերջանալիօրէն վերյիշել կենսագրի մը կամ յուշագրի մը ըսածները եւ զանոնք ի հարկին հիմնաւորեալ ձեռով սրբագրել, բայց կը թուի թէ ախ-վախի տրամադրութիւնը էական է հայուն, որովհետեւ առիթ չի փախցուի ճշմարտանման բաներ արցունքաբեր ատրճանակով արձակելու հանրութեան երեսին: Այսպէս է որ «գերմարդ» Չարենցը «զոհ եւ պատարագ [եղաւ] իր հաւատամքին ուղղափառութեանը համար» (գերմարդ, հաւատամք եւ Չարենց) կամ «Պարոյր Սեւակը բեռնակառքի տակ նետեցին որպէսզի լռէր ճշմարտութեան ձայնը» (ի՞նչ էր այդ ճշմարտութիւնը, զայն չէի՞ն գիտեր ուրիշներ, ձայնագո՞րկ էին):

Չոհի եւ զոհաբանութեան նիւթը կ'ապրեցնէ հայկական **մելոտրաման**: Մենք անկեղծ... հայեր ենք:

Յունուար 2010



Քառասունվեց տարի առաջ, նորեկ գաղթական, փորձուեցայ ամերիկեան թերթի մը ծանուցումին մէջ պահանջուած հինգ տոլարով գնել տոքթոր-փրոֆէսորի վկայական մը, զոր կ'ընծայէր տպաւորիչ անունով համալսարան մը: Գաղափարէն հրաժարեցայ, որովհետեւ գինը սուղ էր բաղդատմամբ «Նոր Օր»էն ստացած շաբաթականիս: Հիմա նոյն վկայականին գինը քսանհինգ տոլար է: Պիտի չգնեմ: Թերեւս համեստ նուէրիս սպասող ամերիկեան բարեսիրական հաստատութիւններէն մէկը հատ մը թղթատարով դրկէ առ հաշիւ կամ հայ թերթ մը տիտղոսը շնորհէ ինծի... առ ի երախտագիտութիւն կամ դարձեալ առ հաշիւ:

Յունուար 2010



Պարելի՞ք է պարզել Կովկասեան Հայաստանի առեղծուածը առանց **դիսկուսիայի** կամ **դիսքուսացիայի**: Պատմել 92 տարին 10 տողով: Կը փորձեմ, եթէ թոյլ տրուի որ օգտագործեմ բեմի պատկերը քանի որ արդէն կը ճանչնանք դերակատարները:

ՄԱՅԻՍ 28-Ի ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Բեմադրիչներ՝ Թուրքը, Անգլիացին, Ամերիկացին,
Ֆրանսացին

Տեսիլ Վերջին

Թիֆլիս, դիակ, որբ, որբանոց: «Հայաստանի բոլոր

Ճանապարհներից մահ էր առաջանում...: Հայերը յոյսի
կարօտ էին...: Հա՛ց, մի կտոր հա՛ց:... Տէր Աստուած, ի՞նչ
պիտի լինի եթէ տաճիկները հասնեն Երեւան...»:

Եռագոյնը վերցուած խորհրդարանէն:

«... Քանաքեռի կողմից հնչում էր Ինտերնացիոնալը...»:

648,000 հայ:

ՆՈՅԵՄԲԵՐ 29-Ի ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Բեմադրիչ՝ Ռուսը

Տեսիլ Վերջին

Գահաշարժ՝ Մոսկուա: Երկրաշարժ՝ Սպիտակ:

Մուրճ-Մանգաղը վերցուած Գերագոյն Սովետէն:

Սեւ յիշատակներու սալայատակին վրայ ոսկեձոյլ
արձանը Կրթութեան, Գիտութեան, Քաղաքակրթութեան:

Գրեթէ երեքուկէս միլիոն հայ:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 21-Ի ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Բեմադրիչներ՝ Ռուսը, Ամերիկացին, Ֆրանսացին

Առաջին Արար

Տեսիլ Ա.

Եռագոյնը վերադարձած Ազգային Ժողով:

Տեսիլ Բ.

Մթութիւն: Ազատ Ղարաբաղ:

Տեսիլ Գ.

– Խմբական արտասանություն– *Փող ունե՞ս... հա ջա՞ն, ցաւդ տանեմ: Ոսկեձոյլ արձանը չկայ: Ջարդ՝ օրէնքի տան մէջ: Աւելի քան մէկ միլիոն հայ կոնակ դարձուցած Արա-րատին կը մեկնին հեռաստան:*

Երգչախումբ (allegro)– *«Հայիվուտում մենք խօսում ենք հայերէն, որովհետեւ Լօսի կէտը հայեր են»:*

Յունուար 2010



Քանի մը տարի առաջ բարեկամ մը, որ յօդուածներս կը կարդար «Անկախութիւն» թերթին մէջ, զիս գրասենեակը հրաւիրելով առաջարկեց տասը հազար տոլար որպէսզի գիրք մը գրէի «**Ո՞վ է ղեկավար**» նիւթին մասին: Մերժեցի: «Յիսուն հազար տոլար ալ տաս, չեմ գրեր», ըսի: Իրեն չըսի. հիմա կ'ըսեմ: Պատճառը... Լիբանանն է: Հոն, երկու անձէն մէկը ղեկավար է: Անշուշտ հոգս պիտի չըլլար, եթէ այդ յատկանիշը կամ արժանիքը ժառանգած չըլլային Լիբանանի հայերը, զայն չարտածէին եւ անով չողողէին սփիւռքի շուկաները՝ հայ թերթերը գործածելով ձրի ծանուցավայր:

Ես ի՞նչպէս կրնամ անհաշուելի ղեկավարներէ առանձնացնել հինգ կամ տասը առանձնայատկութիւն եւ ստեղծել դատումի քիչ թէ շատ հասարակաց գետին մը:

Ո՛չ, միլիոն տոլարի ալ չեմ գրեր:

Ո՛չ, բացարձակապէս կարելի չէ արդի հայերէնի մէջ գերենթակայական իմաստ ստացած բառով մը զբաղիլ: Բայց կը մտածեմ որ եթէ հայ թերթերու խմբագիրներ իրենց թերթերէն ջնջեն *ղեկավար* բառը, ես բարեկամիս կը յիշեցնեմ իր հին առաջարկը: Անպայման կը յիշեցնեմ: **Կարանքի:** Հայ

խմբագիրները քիչ մը այլասեր չե՞ն կրնար ըլլալ:

Յունուար 2010



Ջոկտեմբեր 2009-ին Ձուիցերիոյ Ցիւրիխ քաղաքին մէջ, մեծերու աչքին տակ, Հայաստան եւ Թուրքիա յարաբերութիւն հաստատելու եւ զարգացնելու ձգտող երկու **փրոթոքոլներ** ստորագրեցին: Հայերս այդ առթիւ տեղեկացանք որ **փրոթոքոլները** «նախաստորագրուած արձանագրութիւններ» էին:

Անշուշտ այս տեսակի **փրոթոքոլ** մը արձանագրութիւն է. արձանագրութիւն են կօշիկի վաճառանիշ մը, շուն մը ծախելու պայմանագրութիւնը, ինքնաշարժի մը ապահովագրութեան վկայաթուղթը, կալուած մը գնելու համաձայնագիրը, դատական նիստի մը ատենագրութիւնը:

Պատճառներ ունիմ կարծելու որ արձանագրութիւն բառը, ինքնին անմեղ եւ լայնալիճ, ընտրուած էր **փրոթոքոլները** մարսելի դարձնելու հայկական ստամոքսներու: Բողոք չունիմ զայն ընտրող քաղաքագետին, դիւանագետին կամ ընկերաբանին դէմ: Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութիւնը իր հեղինակն ու պատասխանատուն ունի: Բայց պիտի ուզէի որ սփիւռքի հայ թերթերն ու հրապարակագիրները ա՛յս **փրոթոքոլները** կոչէին իրենց բուն իմաստով—Պայմանագրութիւն կամ համաձայնագիր:

«Արձանագրութիւնները», չմոռնա՛նք, «նախաստորագրուած» էին, ըստ հայկական լրատու միջոցներուն: Ուրեմն ի՞նչ կարիք կար Ձուիցերիա երթալու, եթէ **նախապէս** ստորագրուած էին, ինչպէս զայն կը յուշէ այդ անճոռնի եւ խաբէութիւն թելադրող բառը:

Կ'ենթադրեմ որ հետեւեալը պատահած է: Հայաստան եւ Թուրքիա բանակցութեանց ընթացքով համաձայնած են որոշ

կէտերու շուրջ: Իրենց համաձայնութիւնը արտայայտած են վաւերաթուղթերով, որոնց վրայ երկու երկիրներուն արտաքին գործոց նախարարները դրած են իրենց անուններուն սկզբնատառերը կամ զանոնք ստորագրած են իրենց անուան սկզբնատառերով՝ ի նշան նախնական համաձայնութեան: Թերեւս լեզուաբան մը յաջողի անգլերէն to initial բային համարժէք հայերէն ընտիր բառ մը գտնել:

Հայկական սփիւռքը պէտք չէ ներածէ Հայաստանի մէջ ստեղծուած կամ գործածուող անխտիր **ամէն** բառ կամ բան: Փոխադարձաբար՝ սփիւռքի մէջ գործածուող **ամէն** բառ կամ բան ընդունելի պէտք չէ ըլլայ Հայաստանի համար: Ներածել, արտածել, տարածել ընտրովի: Միայն այն որ չի խաբեր, չի խաթարեր, կ'ապրեցնէ հայու հոգին:

Յունուար 2010



Տնամաշխարհայնացումը մեր հայրենիքն ու համայնքները գտաւ անդէկ, բազմանպատակ, այսինքն աննպատակ եւ անատակ: Որս՝ յօշոտուելու: Ինչո՞ւ սովետական կոմունիզմը չկարենար իրապէս, իրողապէս եւ իրաւապէս որդեգրել շուկան եւ քիչ մը մարդկայնանալ: Իր անսեղան ծնածինը, սահմանին միւս կողմը, քսան տարուան մէջ բորբոքեց շուկան եւ դարձաւ աշխարհի մեծագոյն տնտեսութեան, ամենէն հարուստին ամենամեծ եւ հետեւաբար ահագոյեցիկ սեղանաւորը:

Ծնածինին մարդկայնացման հարցը տաք շուկային մէջ տաք շագանակ է. մարդ ձեռք առնել չ'ուզեր առ այժմ: Ձեռք կ'առնուի՞ երբեւէ. անշո՛ւշտ... շուկային որոշումով:

Յունուար 2010



Պօթը-ուր տարիէ ի վեր երբեմն հաճոյքով, երբեմն ամիսասանքով կը կարդամ Կ.Ս.ի յօդուածները: Ան Հայաստանի մէջ կարելոր պաշտօններ վարած է եւ ատենէ մը ի վեր հաստատուած Ֆրանսա: Իր բոլոր յօդուածները, հոգ չէ թէ ինչպէս կը սկսին կամ կը վերջանան, կերպը կը գտնեն... կատուն մորթազերծելու: Իր սեւ կատուն Կրեմլն է: Անձնական պատճառներ, եթէ ունի, զիս չեն հետաքրքրեր: Կարելորը ազգայի՛նն է եւ ան համոզուած է որ 1920-էն ասդին հայ ժողովուրդին բոլոր դժբախտութիւններուն, թափած արիւնին (ի զո՛ւր), ցաւերուն, վերքերուն, այլասերումին, ապազգայնացումին, համաշխարհայնացումին միակ եւ բացարձակ պատասխանատուն Ռուսն է: Լենին, Ելցին կամ Փութին անուններն են նոյն էութեան: Ան մաթեմատիկական ճշգրտութեամբ եւ քաջաբար հաւասարութեան նշան կը դնէ 1915 եւ 1937 թուականներուն միջեւ:

Նկատի առնելով Կ.Ս.ի գիտելիքներու պաշարը, պիտի փորձուէի, ի յարգանս իրեն, մորթազերծումի դանակը երբեմն ես ալ ձեռք առնել, եթէ թոյլ տար, պայմանաւ որ ան տեղ մը յայտնած ըլլար թէ 1920-ի Սեպտեմբերէն Դեկտեմբեր Հայաստանի օրուան կառավարութիւնը, ըստ իրեն, ինչո՛ւ չդիմեց հայ ժողովուրդի հոգեկան ներքին ուժերուն պաշտպանելու համար Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը, ինչո՛ւ չդիմեց աստուածավախ եւ եկեղեցասէր Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ամերիկայի օգնութեան, որպէսզի Լենինի անաստուած եւ կայսերապաշտ Ռուսիան անգթօրէն չկլլէր աննման Ազատ Անկախ եւ Միացեալ Հայաստանը կամ Հայաստանի երեք հանրապետութիւններէն առաջինը, միա՛կ ազատ, անկախ եւ ազգայինը:

Եւ թերեւս համարձակութեամբ շարժէի դանակը, եթէ Կ.Ս. պարզած ըլլար 1915-ի եւ 1937-ի հաւասարութեան ի՛ր

տրամաբանությունը: Ինք գիտե կամ պե՛տք է գիտնայ ցեղասպանության ոճիրը բնորոշող տարրերեն գլխավոր երկուքին—թիւ եւ հող—առնչուող հայայատուկ իրողութիւնները.-

(Ա) 1878-ին Թուրքիոյ եւ Թրքահայաստանի մէջ կ'ապրէր 3 միլիոն հայ, 1882-ին՝ 2,660,000, 1912-ին՝ 2,026,000 (Հ. Ղազարեան, «Արեւմտեան Հայաստան», Հայկական Սովետական Հանրագիտարան հտ. 2, Երեւան, 1976, էջ 43): Այսօր Հանրապետական Թուրքիոյ մէջ հայութեան կը մնան շուրջ 70,000 ինքնութեամբ հայ բնիկներ, իսկ ամբողջ Թրքահայաստանէն՝ ոչ իսկ մէկ սանթիմէթը հող:

(Բ) 1920-ին Սովետական Հայաստանի մէջ կ'ապրէր 648,000 հայ, 1926-ին՝ 793,000, 1940-ին՝ 1,188,000, զեղչելէ ետք երկրին տարբեր ազգութեամբ բնակիչներուն համար ընդունուած 10 առ հարիւր համեմատութիւնը (Ս. Երեմեան, «Բնակչութիւն», Հայկական Սովետական Հանրագիտարան, Սովետական Հայաստան հտ., Երեւան, 1987, էջ 23-24, աղիւսակ 1): 1991-ին Հայաստանի Հանրապետութիւնը ժառանգեց գրեթէ երեքուկէս միլիոն հայ քաղաքացի եւ Արեւելեան Հայաստան մը, որ ոչ իսկ մէկ սանթիմէթը նուազ էր 1921-ի հողատարածքէն:

Այս վերաքաղը Կ.Ս.ի համար չէ, այլ իր նմաններուն, որոնք թերեւս փափաքին երկիր մոլորակը վերադառնալ:

Եօթը տարի առաջ Արմինէն Բիփոթթըր թերթին տէր եւ խմբագիր Էտի Պօղոսեան ընդունելութիւն մը սարքած էր Նիւ Ճրզիի իր բնակարանին մէջ ի պատիւ Երեւանի նախկին քաղաքապետ, Ազգային Միասնականութիւն Կուսակցութեան հիմնադիր-նախագահ, Հայաստանի նախագահական թեկնածու Արտաշէս Գեղամեանի: Մինչ հիւրը խոհանոցին մէջ կը վերլուծէր Հայաստանի համախառն արտադրութիւնը, մէջընդմէջ գործածելով անգլերէն համառոտագրութիւնը՝ GDP, եւ անցայ հիւրասենեակ ուր ինծի մօտեցան հայաս-

տանցի երկու երիտասարդներ, որոնցմէ մին քաղաքական դէմք դարձեր էր եւրոպական երկրի մը մէջ, եւ հպարտութեամբ յայտնեցին որ իրենք 1990-ական թուականներուն ռուսական բանակը դուրս շարտած էին Հայաստանի սուրբ հողէն: Զարմացա՛յ: «Ի՞նչպէս, որսորդական զէնքերո՞վ» հարցումէս երիտասարդները այլայլեցան եւ վիրաւորուեցան: Կ.Ս.ի անձին մէջ վստահաբար պիտի գտնէին հիացող մը:

Փետրուար 2010



ՆԱ.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին բազմարդիւն գահակալութեան տարեգրութիւնը արձանագրեց նաեւ յատկանշական իրողութիւն մը, որ խառն զգացումներու ծնունդ կուտայ: Ան Եկեղեցւոյ եւ իր հօտին կարիքներուն համար շատ աւելի մղոն կտրած եւ շատ աւելի վայրեր այցելած է քան իր բոլոր 131 նախորդները միասին: Հայրապետը կ'ընդառաջէ պահանջներու, որոնք անցեալին դուրս կը մնային միջազգային եւ ազգային իրավիճակներու ընձեռած կարելիութիւններէն: Իր տրամադրելիութիւնն ու հաճոյակատարութիւնը, սակայն, գին մը ունին՝ կը նուազեցնեն հայրապետական խորհուրդէն, որ աղբիւրն է հաւատացեալներուն ակնածանքին:

Հասկնալիօրէն վեհափառ հայրապետի մը ներկայութիւնը մեծ ու փոքր, մասնաւոր կամ պաշտօնական հաւաքոյթներու՝ անչափելի պատիւ, բարեբախտութիւն եւ օրհնութիւն է զինք հիւրընկալող հոգեւոր զաւակներուն համար: Իրենց հովին է իր ասայով, իրենց Արարատն ու Էջմիածինն է իր խաչակիր վեղարով: Այս հանգամանքները, որոնք երկրի վրայ ուրիշ ոչ ոք կը կրէ, պէտք է իր առջեւ չեզոքացնեն մեր ժամանակներու ժողովրդապաշտական

հակումները յատկապես երբ լուսանկարչական ոսպնեակը կը դառնայ իրեն շուրջ:

Լուսանկարը մաս պետք է կազմէ բեմադրութեան ծրագրումին: Ամէն անգամ որ կը տեսնեմ վեհափառ հայրապետ մը կամ մեր բարձրաստիճան հոգեւորականներէն մէկն ու միւսը խմբանկարի մը կեդրոնէն աջ կամ ձախ, երբեմն ծայրամասը, ինծի կը թուի որ ան ժպտացող տէքոր մըն է:

Խմբանկարի մը մէջ ո՞ր է տեղը Ամենայն Հայոց Կաթողիկոսին երբ հոն ներկայ է արքայ մը, թագուհի մը, իշխան մը, իշխանուհի մը, մեծագոր երկրի մը նախագահը, մեծարուող հայ միլիառատէր մը, Հայաստանի Հանրապետութեան նախագահը կամ Հռոմի սրբազան քահանայապետը: – Կեդրո՛նը, կ'ըսեմ ես, միա՛յն կեդրոնը: Բայց նաեւ անտարբեր չեմ քաղաքավարութեան պահանջներուն: Այդպիսի հանդիսաւոր առիթներու, կարելի պէտք է ըլլայ մեր հայրապետը լուսանկարել կարելոր դէմքին կամ դէմքերուն հետ առանձնաբար, դէմ-դիմաց կամ կողք-կողքի, հաւասարէ հաւասար, նոյն պատուանդանին վրայ, եթէ կայ հատ մը:

Փետրուար 2010



Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններ հաստատելու ցիրիխեան համաձայնագիրներուն ընդդիմացողները անոնց մէջ կարդացին ամենէն սոսկալի հետեւանքները՝ Հայաստանի եւ հայութեան համար, իսկ համախոհները՝ զգուշաւոր կարելիութիւններ յօգուտ Հայաստանի:

Առաջիններուն ամբողջ առարկութիւնը հիմնուած էր Թուրքիոյ անվստահելիութեան եւ, իրենց համոզումով, առնելիք վնասակար քայլերուն վրայ: Կը մոռցուէր որ

Հայաստան կրնար—կրնա՛յ—մերժել եւ չեղեալ համարել համաձայնագիրները: Երկրորդ խումբը կասկած չունէր որ Հայաստան տեղի չէր կրնար տալ Թուրքիոյ կողմէ անընդունելի պահանջներու եւ թէզը կը զօրացնէր յոյսը դնելով միջազգային համայնքին Հայաստանի ի նպաստ տրամադրութեան եւ արդարամտութեան վրայ: Կարծիքի եւ դատումի շեշտուած տարբերութիւնը պէտք է ողջունուէր ուրախութեամբ իբրեւ նշան քաղաքական հասունութեան:

Տարակարծութիւնը, որ տեղի տուաւ հրապարակային քանի մը լուրջ վիճարկումներու եւ քանի մը ոչ այնքան լուրջ ցոյցերու, Երեւանի մէջ ունեցած պէտք է ըլլայ թատերական արտայայտութիւններ ալ, որոնցմէ միայն երկուքին տեսերիզները ստացայ համացանցէն: Չեմ կրնար մոռնալ անոնց բովանդակութիւնը:

Ազգային Ժողովին մէջ, ի ներկայութեան խորհրդարանի նախագահին եւ օրէնսդիրներու, ներկայանալի հայուհի մը դատապարտեց համաձայնագիրները եւ բեմէն չիջած հերոսաբար կախաղանի ոլորուած չուանը ձգեց գրակալին վրայ... նախագահ Սերժ Սարգիսեանի **հարաքիռիին** համար: Հայաստան խօսքի ազատութեան պակասէ՞ն կը տառապի:

Պաշտօնական թուող հիմնարկի մը դիմացը, բլուրի մը վրայ (դժբախտաբար ծանօթ չեմ այդ վայրերուն), հաւաքուած էին 15-20 ցուցարարներ: Ճառախօս մը նախագահ Սերժ Սարգիսեանի համար **հարաքիռի** կը նախատեսէր, եթէ...: Ուրիշ մը համաձայնագիրներուն դէմ իր բողոքը յայտնեց: Երկու ելոյթները խօսքի ազատութեամբ պաշտպանուած կրնային նկատուիլ, երբ յանկարծ երեւցաւ ոստիկանի տարօրինակ համազգեստով եւ տը կօլեան գդակով լեցունկեկ մէկը, որուն համար կարելոր չէր թէ խօսողը ո՛վ էր—«Ով ուզում ա լինի... ուզում է ազգի հերոսը լինի, ուզում է երկրագնդի հերոսը լինի, չի՛ կարելի»: Սպառնալից յանդիմանութիւնը որոշապէս զգաստացուց ցուցարարները: Կը թուի

թէ ան «ծանօթ» դէմք մըն էր: Բայց լռութիւնը քաջաբար խզեց սպիտակ մազերով յիսուննոց կին մը: «Էս ի՞նչ է», բողոքեց ան, «ամէն անգամ է՛ս չենք կարող ասել, է՛սպէս չենք կարող խօսել: Հերիք է, ազատ թողէք»: Ոստիկանը ամբողջ մարմնով ծառացաւ: «Այ մարդ», պոռաց այրաբար կամ... հայրաբար, «Էստեղ ի՞նչ ես անում, տուն գնա, լուա՛ցք արա, ճա՛շ եփի...»:

Յիրիխեան համաձայնագիրները իրենց յատուկ կէանքը ունին այլեւս: Անոնք պիտի ապրին ինչ որ ալ պատահի: Պիտի ապրին եթէ ընթացք գտնեն՝ կաղալով կամ աշխուժօրէն եւ պիտի ապրին մա՛նաւանդ երբ նախագահ Սերժ Սարգիսեան որոշէ զանոնք առկախել, սառեցնել կամ ջնջել: Այս վերջին պարագային ան ապահովաբար պիտի ազատի **հարաքիրիի** պարանէն, բայց մենք շատ հաւանաբար վայելենք Գապուքի թատրոնը:

Համաձայնագիրներուն յետ մահու կէանքն ալ կը խոստանայ ըլլալ չափազանց հետաքրքրական:

Փետրուար 2010



1920-ական թուականներէն ի վեր տասը-քսան տարին անգամ մը հայկական սփիւռքը կ'արծարծէ հայերէն լեզուի ուղղագրութեան հարցը, որ նոր հնչեղութեամբ թարմացաւ 1991-էն ետք, հասկնալիօրէն, բայց որքան որ գիտեմ առանց Հայաստանի նշանակալից մասնակցութեան: Քանի որ, կ'ըսուէր եւ կ'ըսուի, Հայաստան թօթափած է Մոսկուայի լուծը, պէտք է որ թօթափէ նաեւ կոմունիզմի պարտադրած նոր ուղղագրութիւնը, որուն հեղինակն էր հայկաբան Մանուկ Աբեղեան:

Նկատած եմ որ Մեսրոպեան կամ դասական ուղղագրութեան վերադառնալու արդար պահանջին հիմ հանդիսացող

պատճառներն ամենէն զօրաւոր երկուքը չեն արժանանար գիտական մակարդակով լուրջ քննութեան եւ բացատրութեան: Փոխարէն, նոյնիսկ լուրջ մարդիկ, թերեւս անգիտակցաբար, կը կրկնեն չնաշխարհիկ տեսութիւնը անձնուէր գործիչի մը, որ յայտնի էր Գահիրէէն Կրեմլին ուղղած սպառնալիքներով: Ըստ այդ **թեորիային**, Մոսկուայի նպատակն էր նոր ուղղագրութեամբ Հայաստանը բաժնել սփիւռքէն: Մեսրոպեան ուղղագրութեան վերադարձին կամ Հայաստանի մէջ վերականգնումին մեծագոյն բարիքը, իրենց կարծիքով, կը հետեւի պարզօրէն եւ բնականօրէն—Հայաստան եւ սփիւռք պիտի միանան, պիտի դառնան մէկ ամբողջ:

Ըստ ազգային մասնագէտներու, 1920-1990, եօթանասուն տարուան ընթացքին, Մոսկուան ուզած է Հայաստանը բաժնել սփիւռքէն, ուզած է սփիւռքը միացնել Հայաստանին, ուզած է Հայաստանի միջոցաւ կլլել սփիւռքը...: Մինչեւ որ ակադեմականները, գիտնականներն ու քաղաքագէտները ի վերջոյ որոշեն, թէ ճշդիւ ի՛նչ էր հայոց նկատմամբ Մոսկուայի եօթանասուն տարուան քաղաքականութիւնը, եւ յայտնաբերեն պատճառները, որոնք, դատելով արդիւնքէն, մէկ առ մէկ ձախողութեան մատնած են ազգային մասնագէտներո՛ւն միայն յայտնի Մոսկուայի բոլոր թաքուն նպատակները, կը համարձակիմ յայտարարելու որ Մեսրոպեան ուղղագրութիւնը միա՛կ ճիշդն է եւ միա՛կ գեղեցիկը:

Ճիշդն ու գեղեցիկը ակնահաճոյ է, սրտահաճոյ է, մտահաճոյ է եւ հետեւաբար դիւրաւ ուսանելի. ուսուցիչ կ'ուզէ:

Ճիշդն ու գեղեցիկը Էջմիածի՛նը ստեղծած է. վայել եւ արժան է որ ան էն առաջ վերադառնայ իր տունը, Աստուծոյ տունը՝ Էջմիածի՛ն:

Ճիշդն ու գեղեցիկը դուրս դրուած էր Հայաստանի դպրոցէն. պէտք է մտնէ շուտով: Յիսուսը հոն Մեսրոպին հետ կը սպասէ իրեն: Երկուքը կը լուծեն «մրրկաւ զատուած» եղբայրներուն միութեան հարցը... գոնէ մասամբ:

Ահաւասիկ 21-րդ դարուն բազմաթիւ բաղձալի «արութեան» գործերէն առաջինը, «ի մերում աշխարհիս... արժանի գրոց յիշատակի»:

Փետրուար 2010

Միևեւ Դրախտը եւ Անդին

Ընտիր թուղթ, լաթակազմ

Գին 25 Տոլար

(Առաքման ծախքով)

Կը խնդրուի չեքը գրել Mayreni Publishing անուան եւ
ապսպրանքին հետ դրկել հրատարակիչին՝

Mayreni Publishing

P. O. Box 5881

Monterey, CA 93944

Նոյն հեղինակէն

Անուրջ Գետին Կամուրջները

Մայրենի Հրատ. - 2007

Սպառած

